ՀՀ-ՈՒՄ ՏԱՐԲԵՐ ԽՈՑԵԼԻ ԽՄԲԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՐԳԻՆԱԼԱՑՄԱՆ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՏՆԱՀԱՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐՀԱՆՈՒՄ

Վերլուծական հաշվետվություն



Հաշվետվությունն իրականացվել է Հայաստանում կանանց հիմնադրամի կողմից՝ Նորվեգիայի Հելսինկյան կոմիտեի ֆինանսական աջակցությամբ: Դրանում արտահայտված տեսակետները պատկանում են հեղինակին և պարտադիր չէ, որ համընկնեն Նորվեգիայի Հելսինկյան կոմիտեի տեսակետներին:

Երևան 2025

Երախտագիտության խոսք

Հետազոտության տվյալների հավաքագրման գործընթացն իրականացվել է Հայաստանում կանանց հիմնադրամի գործընկեր կազմակերպությունների անմիջական մասնակցությամբ, որոնք ունեն համապատասխան խոցելի և մարգինալ խմբերի հետ աշխատելու բազմամյա փորձ: Տվյալների հավաքագրմանը ներգրավված են եղել հետևյալ կազմակերպությունները՝ «Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն», «Մարդու իրավունքների տուն Երևան», «Իրավունքի կողմ» և «Հաբ Արցախ»:

Գործընկեր կազմակերպությունները հետազոտության շրջանակում իրենց շահառուների շրջանում իրականացրել են քանակական հարցումներ և որակական ֆոկուս խմբային քննարկումներ՝ ապահովելով մասնակիցների անվտանգությունը, կամավոր մասնակցությունը և էթիկական սկզբունքների պահպանումը: Ստացված տեղեկատվությունը համակարգվել է հատուկ մշակված տվյալների բազաներում՝ սղագրությունների տեսքով, ապա ամբողջական փաթեթով փոխանցվել Հիմնադրամին՝ տվյալների հետագա խորքային վերլուծություն իրականացնելու համար:

Հայաստանում կանանց հիմնադրամն իր խորին երախտագիտությունն է հայտնում գործընկեր կազմակերպություններին՝ մասնագիտական ներգրավվածության, դաշտային աշխատանքի բարձր որակի և խոցելի խմբերի նկատմամբ զգայուն ու պատասխանատու մոտեցման համար: Կազմակերպությունների կողմից ցուցաբերած մասնագիտական մոտեցումն ու դիրքորոշումը առանցքային դեր են ունեցել հետազոտության հաջող իրականացման և ստացված արդյունքների արժանահավատության ապահովման գործում:

Շնորհակալություն ենք հայտնում նաև Զարուհի Ազնավուրյանին՝ հետազոտությունը համակարգելու և հաշվետվությունը կազմելու համար:

Բովանդակություն

Աղյուսակների ցանկ 6

Համառոտ ամփոփագիր 8

Մեթոդաբանություն 8
- Սոցիալ-տնտեսական իրավիճակ 9
- Ինքնագնահատական և ինքնաընկալում 13
- Ինքնադրսևորման և ինքնազարգացման հնարավորություններ 16
- Խտրականություն և իրավունքի ոտնահարումներ 19

Ներածություն 25

Մեթոդաբանություն 28

Հիմնական արդյունքներ 32

Բաժին 1. Սոցիալ-տնտեսական իրավիճակ 32

1.1. Տնտեսական վիճակի սուբյեկտիվ գնահատում 33

1.2. Տնտեսական վիճակի փոփոխություն 35

1.3. Խոցելիության դասակարգում՝ ըստ սոցիալ տնտեսական կարգավիճակի 40

Բաժին 2. Ինքնագնահատական և ինքնընկալում 42

2.1. Հոգեկան առողջության սուբյեկտիվ ընկալում 43

2.2. Հոգեկան վիճակի փոփոխություն 45

2.3. Բավարարվածության և երջանկության սուբյեկտիվ գնահատում 52

2.4. Անհաջողության, հաջողության և հնարավորությունների ընկալում 56

2.5. Խոցելիության դասակարգում՝ ըստ ինքնագնահատականի և ինքնընկալման 64

Բաժին 3. Ինքնադրսևորման և ինքնազարգացման հնարավորություններ 67

3.1. Կյանքի որակի մասին պատկերացումներ 69

3.2. Հիմնական վախեր և սոցիալական վստահություն 75

3.3. Խոցելիության դասակարգում՝ ըստ ինքնադրսևորման և ինքնազարգացման հնարավորությունների 81

Բաժին 4. Խտրականություն և իրավունքների ոտնահարում 83

Բաժին 5. Արդյունքների ամփոփում՝ ըստ հետազոտության խնդիրների 84

Առաջարկություններ 97

Օգտագործված գրականություն 100

Աղյուսակների ցանկ

Աղյուսակ 1. Հարցվածների և ՖԽՔ մասնակիցների բաշխումը՝ ըստ թիրախ խմբերի

Աղյուսակ 2.Տնտեսական վիճակի սուբյեկտիվ գնահատականը՝ ըստ մարգինալ, խոցելի խմբերի

Աղյուսակ 3. Տնտեսական կարգավիճակի փոփոխությունը վերջին երեք տարում՝ ըստ մարգինալ, խոցելի խմբերի

Աղյուսակ 4. Տնտեսական կարգավիճակի փոփոխության կանխատեսումը մոտակա երեք տարվա կտրվածքով՝ ըստ մարգինալ, խոցելի խմբերի

Աղյուսակ 5. Հոգեկան առողջության սուբյեկտիվ գնահատական՝ ըստ մարգինալ, խոցելի խմբերի

Աղյուսակ 6. Խոցելի խմբերի հոգեկան վիճակի դինամիկան վերջին հինգ տարիների կտրվածքով

Աղյուսակ 7. Կյանքի տարբեր բնութագրիչներով բավարարվածության սուբյեկտիվ գնահատական՝ ըստ մարգինալ, խոցելի խմբերի

Աղյուսակ 8. Երջանկության սուբյեկտիվ ընկալումը՝ ըստ մարգինալ, խոցելի խմբերի

Աղյուսակ 9. Կյանքի վերահսկելիության ընկալումը՝ ըստ մարգինալ, խոցելի խմբերի

Աղյուսակ 10. Անհաջողությունների պատճառների սուբյեկտիվ մեկնաբանությունը՝ ըստ մարգինալ, խոցելի խմբերի

Աղյուսակ 11. Հաջողության և սոցիալական արդարության արժեհամակարգային ընկալումները՝ ըստ մարգինալ, խոցելի խմբերի

Աղյուսակ 12. Ներկա կյանքի սուբյեկտիվ գնահատումը՝ ըստ մարգինալ, խոցելի խմբերի

Աղյուսակ 13. Կյանքի գնահատման ընկալումը նախորդ երեք տարվա կտրվածքով՝ ըստ մարգինալ, խոցելի խմբերի

Աղյուսակ 14. Լիարժեք կյանքի համար անհրաժեշտ պայմանները՝ ըստ մարգինալ, խոցելի խմբերի

Աղյուսակ 15. Ապագայում կյանքի որակի կանխատեսում՝ ըստ մարգինալ, խոցելի խմբերի

Աղյուսակ 16. Հիմնական վախերը՝ ըստ մարգինալ խմբերի

Աղյուսակ 17. Հիմնական վախերը՝ ըստ մարգինալ խմբերի

Աղյուսակ 18. Սոցիալական վստահության մակարդակը խոցելի խմբերի շրջանում

Աղյուսակ 19. Խտրականության դեպքերը՝ ըստ խոցելի, մարգինալ խմբերի

Աղյուսակ 20. Խտրականության դեպքում կանխարգելիչ կամ պատժիչ քայլերի քարտեզ

Աղյուսակ 21. Ամենախոցելի խմբերը՝ ըստ հարցվածների

Համառոտ ամփոփագիր

Մեթոդաբանություն

Հետազոտությունը հիմնված է փոխհատական և կառուցվածքային խոցելիության տեսական մոտեցումների վրա՝ ելնելով այն դիրքորոշումից, որ խոցելիությունը պայմանավորված չէ միայն անհատական հատկանիշներով, այլ սոցիալ-տնտեսական համակարգերում տարբերություն դնող ու խարանող մեխանիզմների ազդեցությամբ: Ուսումնասիրության տեսական հիմքում ընկած է խտրականության համակարգային ըմբռնումը, որը դիտարկում է մարգինալացումը որպես բազմաչափ և ինստիտուցիոնալ գործընթաց: Հետազոտության շրջանակում ուսումնասիրվել են խոցելիության դրսևորումները՝ ըստ սեռի, ինքնության, կարգավիճակի կամ փորձառության և դրա ազդեցությանը ինքնադրսևորման ու զարգացման հնարավորությունների սահմանափակման վրա:

Հետազոտության տվյալների հավաքագրումն իրականացվել է 2025 թվականի հուլիս-սեպտեմբեր ամիսների ընթացքում, տվյալները վերլուծվել են հոկտեմբեր-դեկտեմբեր ժամանակահատվածում: Հետազոտության մեթոդաբանությունը ներառել է քանակական և որակական մեթոդների համադրություն՝ նպատակ ունենալով ապահովելու տվյալների ամբողջական ու համապարփակ պատկերը: Քանակական տվյալները հավաքվել են ստանդարտացված հարցաթերթերի միջոցով՝ ընդգրկելով չորս տարբեր խոցելի խմբերի (կին իրավապաշտպաններ (n=50), Արցախից տեղահանված կանայք (n=69), սեռական բռնություն վերապրած կանայք (n=54), տրանս կանայք և սեքս աշխատողներ (n=50)), որոնք ներկայացնում են խոցելիության և մարգինալացման տարբեր պրոֆիլներ: Հարցաթերթը ներառում էր հետևյալ բաժինները՝ սոցիալ-տնտեսական իրավիճակ, ինքնագնահատական, խտրականության փորձառություններ, վստահության մակարդակներ և ապագայի տեսլական: Իրավապաշտպան կանանց խմբի համար մշակված հարցաթերթում ներառված էր մեկ հավելյալ հարց, իսկ տրանս կանանց և սեքս աշխատողների հարցաշարի որոշ հարցեր վերանայված էին տրանս անձանց խնդիրներին վերաբերող շեշտադրումների և համապատասխան հավելյալ հարցերի ներառման տեսանկյունից:

Քանակական տվյալների մեկնաբանության և վերլուծության նպատակով՝ ընտրված էր որակական ֆոկուս խմբային քննարկումների մեթոդը՝ խոցելիության կառուցվածքային շերտերը, ինքնության ձևավորման դինամիկան, ինչպես նաև դիմադրողականության ռազմավարությունները դուրս բերելու միտումով: Ընդհանուր առմամբ՝ ֆոկուս խմբային քննարկումներին մասնակցել է 62 կին: Տվյալների վերլուծությունը կատարվել է թե՛ համեմատական պատկերի, թե՛ խմբային առանձնահատկությունների դիտանկյունից՝ ապահովելով միաժամանակյա համախմբված ու մասնավորեցված վերլուծություն:

Մեթոդների և գործիքակազմի տրիանգուլյացիայի կիրառմամբ իրականացված բազմամակարդակ և փոխլրացնող մեթոդաբանական մոտեցումը հնարավորություն է տվել ոչ միայն արձանագրելու խոցելի խմբերի դիրքը հասարակության ներսում, այլև դուրս բերելու այդ դիրքի ձևավորման հավանական խորքային պատճառները:

Արդյունքների ամփոփում

Հետազոտության արդյունքները վկայում են, որ Հայաստանի խոցելի խմբերի շրջանում գոյություն ունի խարանավորման և խտրականության փոխկապակցված, բազմաշերտ կառուցվածք, որը վերարտադրում է սոցիալական անարդարությունները և սահմանափակում ներառականությունը տարբեր մակարդակներում: Վերջին տարիների ներքաղաքական ճգնաժամերը, կոնֆլիկտները, պատերազմն ու զանգվածային տեղահանությունը էլ ավելի սրեցին այս իրավիճակը՝ ուժեղացնելով արդեն առկա խոցելիությունները: «Խոցելիություն» հասկացությունն այստեղ արտացոլում է ոչ թե անհատական փորձառություն, այլ սոցիալ-քաղաքական պայմաններ, որտեղ առանձին խմբեր համակարգային ձևով զրկվում են ռեսուրսներից, հնարավորություններից և պաշտպանությունից: Հատկանշական է, որ մարգինալացված խմբերի ներկայացուցիչները հաճախ միաժամանակ պատկանում են մի քանի խոցելիության կատեգորիաների (օրինակ՝ կին և տեղահանված, ԼԳԲՏՔ+ ու աղքատ և այլն), ինչի հետևանքով առաջանում են խտրականության յուրահատուկ «խոշորացված» դրսևորումներ: Տեսական այս մեկնաբանությունը լիովին հաստատվում է ներկա հետազոտության տվյալներով, համաձայն որոնց՝ խտրականությունը պետք է դիտարկել որպես կառուցվածքային, կրկնվող և շղթայական երևույթ, որը ուղիղ ազդեցություն է թողնում խոցելի խմբերի սոցիալ-տնտեսական վիճակի, հոգեբանական բարեկեցության, ինքնագնահատականի ու ապագայի սպասումների վրա:

Ստորև ներկայացված են հետազտության արդյյունքում ստացված տվյալների համապարփակ վերլուծությունն ու ամփոփումը՝ ըստ հետազոտական հիմնական ուղղությունների:

Սոցիալ-տնտեսական իրավիճակ

Համաձայն ստացված տվյալների՝ խոցելի խմբերի սոցիալ-տնտեսական վիճակը Հայաստանում միայն նյութական պայմանների անհամաչափ բաշխման արտացոլում չէ: Տնտեսական կայունությունն անմիջականորեն պայմանավորում է առողջապահության, կրթության, աշխատանքի և սոցիալական պաշտպանվածության հասանելիությունը: Ընդհանուր համատեքստում տնտեսական խոցելիությունը խորանում է միաժամանակ մի քանի գործոնների ազդեցությամբ: Այդ գործոնների շարքում կարող են դասվել

պատերազմից և տեղահանությունից հետո առաջացած կյանքի պայմանների կտրուկ փոփոխությունները, աշխատաշուկայի անկայունությունը, գների աճը, գործող աջակցման ծրագրերի կարճաժամկետությունը և այլն: Այս իրավիճակում խոցելի խմբերը հայտնվում են անհավասարության կայուն վերարտադրման ռիսկի մեջ, երբ սոցիալական ներառումը խոչընդոտվում է ոչ միայն եկամտի պակասով, այլև բնակապահովման հարցի անորոշությամբ, ծառայությունների հասանելիության սահմանափակումներով և աշխատաշուկայում նկատվող խտրական դրսևորումներով:

Հետազոտության քանակական տվյալների հիման վրա՝ խմբերի միջև առանձնանում է սոցիալ-տնտեսական վիճակի սուբյեկտիվ գնահատման ակնհայտ շերտավորում: Կին իրավապաշտպանների խումբը հանդես է գալիս որպես հարաբերական կայունության օրինակ: Այստեղ 48%-ը իր ներկայիս տնտեսական վիճակը գնահատում է «լավ», 40%-ը՝ «միջին», իսկ ծայրահեղ գնահատականները, այն է՝ «շատ վատ» կամ «շատ լավ», իսպառ բացակայում են: Սա խոսում է ոչ այնքան բարձր բարեկեցության, որքան կանխատեսելի եկամտի, աշխատանքային կայունության և կապիտալիզացվող հմտությունների մասին, որոնք նվազեցնում են աղքատության ծայրահեղ ռիսկերը և ստեղծում տնտեսական վերահսկելիության ընկալումը: Սեռական բռնություն վերապրած կանանց խմբում նկատելի է ավելի փոփոխական և երկբևեռ պատկեր: Մի կողմից կան մասնակիցներ, որոնք դեռ ապրում են նյութական ծանր պայմաններում (մոտ 15%-ը՝ «վատ/շատ վատ»), մյուս կողմից՝ զգալի հատվածը իր սոցիալ-տնտեսական վիճակը գնահատել է «լավ» (35.2%) կամ նույնիսկ «շատ լավ» (5.6%): Այս տարբերությունը բնութագրական է այն իմաստով, որ բռնության դրսևորումներ կարող են արձանագրվել ցանկացած սոցիալ-տնտեսական շերտում, իսկ խմբի ներսում տնտեսական վիճակի վարիացիան կարող է պայմանավորված լինել նրանով, թե արդյոք անձը դեռ գտնվում է բռնության/կախվածության ցիկլում, թե ստացել է աջակցություն և վերականգնման ռեսուրսներ՝ ապահովելով անկախ եկամուտ և մտնելով տեսանելի կայունացման փուլ:

Արցախից տեղահանված կանանց, ինչպես նաև տրանս կանանց ու սեքս աշխատողների խմբերում ներկայիս տնտեսական վիճակի գնահատականները կենտրոնացած են միջինից ցածր բևեռում, սակայն տարբեր պատճառահետևանքային տրամաբանություններով: Տեղահանված կանանց դեպքում բացասական գնահատականների մասնաբաժինը բարձր է (31.8%՝ «վատ/շատ վատ»), և այն կապվում է առաջին հերթին տեղահանության հետևանքների հետ՝ բնակարանի կորստով, կայուն զբաղվածության ընդհատմամբ, դրամային հոսքերի անկայունությամբ և նոր միջավայրում հաստատվելու բարձր ծախսատարությամբ: Տրանս կանանց և սեքս աշխատողների խումբը ներկայացնում է ամենածանր սոցիալ-տնտեսական խումբը. նրանց 42%-ը գնահատել է վիճակը որպես «վատ/շատ վատ», և ընդամենը 14%-ը՝ որպես «լավ», ինչը համադրելի է համակարգային տնտեսական դուրսմղվածության հետ՝ ֆորմալ աշխատանքի շուկայի սահմանափակում, իրավական պաշտպանվածության թուլություն, սոցիալական ընդունվածության ցածր մակարդակ և դրանից բխող մշտական ռիսկեր:

Վերջին երեք տարվա կտրվածքով տնտեսական կարգավիճակում տեղի ունեցած փոփոխության գնահատականները խորացնում են այդ պատկերն ու ցույց տալիս, թե որ խմբերի համար է անկումը եղել ոչ թե աստիճանական, այլ կտրուկ և կառուցվածքային: Արցախից տեղահանված կանանց 62%-ը նշել է, որ վիճակը «վատացել է», ևս 13%-ի պարագայում «կտրականապես է վատթարացել», այսինքն՝ խմբի ավելի քան երեք քառորդը փաստում է անկում: Սա տեղահանության տնտեսական մեխանիկայի առավել խոսուն ցուցիչներից է՝ ակտիվների և աշխատանքի կորուստ, բնակարանային անորոշություն և սոցիալական աջակցության ոչ բավարար շարունակականություն: Կին իրավապաշտպանների մոտ վատթարացումը համեմատաբար մեղմ է, բայց նկատելի: Այս խմբի հարցվածների 24%-ը նշել է, որ իր տնտեսական վիճակը «վատացել է», 38%-ը՝ «նույնն է մնացել», 28%-ը՝ «որոշ չափով բարելավվել է», ինչը վկայում է ՔՀԿ դաշտում ֆինանսավորման փոփոխականության, քաղաքական ռիսկերի և ծրագրային շարունակականությունից կախվածության մասին: Այս խմբում տնտեսական կայունությունը ավելի շուտ հարաբերական է, ոչ թե հաստատուն:

Միևնույն ժամանակ, սեռական բռնություն վերապրած կանանց և տրանս կանանց ու սեքս աշխատողների խմբերում վերջին երեք տարիների փոփոխությունների դինամիկան ընդհանուր առմամբ ավելի դրական է, սակայն տարբեր ներքին պատճառաբանություններով: Սեռական բռնություն վերապրած կանանց շրջանում շուրջ 65%-ը նշել է բարելավում (27.8%՝ էական, 37%՝ որոշ չափով), իսկ վատթարացում արձանագրվել է միայն 11%-ի մոտ, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ աջակցության ծառայությունները, վերականգնման ծրագրերը և հնարավոր տնտեսական հզորացման մեխանիզմները որոշ կանանց համար իրական արդյունք են տվել: Տրանս կանանց և սեքս աշխատողների խմբում նույնպես շուրջ երկու երրորդը նշել է բարելավում (22%՝ էական, 44%՝ որոշ չափով), սակայն դա չի չեղարկում այն փաստը, որ ներկայիս մակարդակը շարունակում է մնալ միջինից ցածր: Այսինքն՝ բարելավումը հաճախ նշանակում է «շատ վատից դեպի վատ կամ միջին» շարժ, ոչ թե իրական կայունություն: Բացի այդ՝ որոշ հարցվածների կողմից հաղորդվել է նաև բացասական դինամիկա (12%՝ վատացել է, 8%՝ կտրուկ վատացել է), ինչը վկայում է ներխմբային անհավասարության և ռիսկերի տարբեր բաշխվածության մասին:

Առաջիկա երեք տարիների տնտեսական կանխատեսումներում գրեթե բոլոր խմբերը արտահայտել են լավատեսական շեշտադրում, սակայն այդ լավատեսության իմաստային բովանդակության մեջ նույնպես կան տարբերություններ: Տրանս կանանց և սեքս աշխատողների խմբում բարելավում կանխատեսում է 76%-ը, սեռական բռնություն վերապրած կանանց մոտ՝ 74%, տեղահանված կանանց մոտ՝ 68%: Հատկանշական է, որ հենց տեղահանված կանանց բարձր կորուստների և ներկայիս ծանր վիճակի պայմաններում պահպանվում է ապագայի բարելավման սպասում, ինչը կարող է արտահայտել վերակայունացման հույսը՝ բնակարան, աշխատանք, շարունակական աջակցություն ունենալու դեպքում: Միակ խումբը, որտեղ համեմատաբար բարձր է բացասական կանխատեսումը, կին իրավապաշտպաններն են: Վերջիններիս

26%-ը կարծում է, որ վիճակը կվատանա: Սա կարող է մեկնաբանվել որպես ոլորտային իրատեսություն՝ կապված ֆինանսավորման անկայունության, դոնորական հոսքերի փոփոխությունների և քաղաքական միջավայրի ռիսկայնության հետ:

Տնտեսական փոփոխության հետ կապված գործոնների համադրությունը ցույց է տալիս, որ խմբերի մեծամասնության համար բարելավման գլխավոր բանալին կայուն զբաղվածությունն է՝ ոչ միայն աշխատանքի առկայությունը, այլ նաև դրա արդարությունը, պայմանները և համարժեք վարձատրությունը: Կրթությունն ու հմտությունների զարգացումը դիտարկվում են որպես տնտեսական շարժունակության միջոց՝ հնարավորություն տալով գտնելու ավելի լավ աշխատանք կամ ավելացնելու եկամուտը: Միաժամանակ, բնակարանային ապահովությունն առանձնանում է որպես տնտեսական և հոգեբանական կայունության առանցքային հանգույց հատկապես տեղահանված կանանց համար, որոնց դեպքում բարձր վարձերն ու անշարժ գույքի թանկացումը ընկալվում են որպես հիմնական ճնշող գործոն: Տրանս կանանց և սեքս աշխատողների մոտ տնտեսական բարելավման հնարավորությունը հաճախ կապվում է ոչ միայն աշխատանքի հետ, այլ նաև սոցիալական ընդունվածության, խտրականության նվազման և անվտանգության ապահովման հետ: Այս խմբի համար աշխատաշուկայի ոչ ներառականությունը մնում է հիմնական խոչընդոտ, և որոշ դեպքերում բարելավման ռազմավարությունները տեղափոխվում են օնլայն աշխատանքի կամ արտագաղթի դաշտ: Տնտեսական դինամիկայի վրա ազդեցություն են ունենում նաև լայն քաղաքական և մակրոտնտեսական գործոնները՝ ընդհանուր անորոշություն, ինֆլյացիա, պետական քաղաքականությունների փոփոխականություն, ինչպես նաև ՔՀԿ դաշտում միջազգային ֆինանսավորման տատանումներ:

Սոցիալան-տնտեսական իրավիճակի գնահատման արդյունքում ստացված տվյալների համադրումը թույլ է տալիս դասակարգել խոցելիությունը ըստ սոցիալ-տնտեսական կարգավիճակի՝ որպես համակարգ, որտեղ փոխազդում են եկամտի կայունությունը, զբաղվածության բնույթը, բնակարանային անվտանգությունը և սոցիալական կապիտալը: Այս տրամաբանությամբ՝ կին իրավապաշտպանները տեղավորվում են ցածր խոցելիության դաշտում՝ հարաբերական կայուն եկամտային հոսքերի և մասնագիտական ինքնավարության շնորհիվ՝ թեև որոշ դեպքերում շարունակելով կախված մնալ դոնորական և քաղաքական ռիսկերից: Սեռական բռնություն վերապրած կանայք ներկայացնում են միջին խոցելիության անցումային դաշտ՝ ներխմբային երկբևեռությամբ, որտեղ մի մասը դեռ խոցելի է, մյուսը՝ վերականգնման և տնտեսական ինքնուրույնացման փուլում: Արցախից տեղահանված կանայք հայտնվում են բարձր խոցելիության գոտում՝ գոյատևման ռեժիմով պայմանավորված, քանի որ եկամուտը, աշխատանքը և բնակարանային անվտանգությունը միաժամանակ անկայուն են և հաճախ կախված արտաքին աջակցության շարունակականությունից: Տրանս կանայք և սեքս աշխատողները գտնվում են շատ բարձր խոցելիության մակարդակում՝ կառուցվածքային

դուրսմղվածության պատճառով, երբ տնտեսական անապահովությունը զուգորդվում է խտրականությամբ, իրավական անպաշտպանությամբ և ֆիզիկական անվտանգության սպառնալիքներով՝ ստեղծելով փոխադարձաբար ուժեղացվող սոցիալ-տնտեսական և հոգեբանական ճնշումների փակ շղթա:

Ընդհանուր առմամբ՝ կարելի է փաստել, որ սոցիալ-տնտեսական անվտանգությունը հնարավոր չէ մեկնաբանել մեկ գործոնի շրջանակում: Այն բազմաշերտ համակարգ է, որտեղ տնտեսական ցուցիչները խորը կապված են սոցիալական ներառման, իրավական պաշտպանվածության և արժանապատվության հարցերի հետ, և հենց այդ համադրությունն է տարբեր խմբերի խոցելիությունը դարձնում բազմամակարդակ և տարաբնույթ:

Ինքնագնահատական և ինքնընկալում

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ խոցելի խմբերի համար ինքնագնահատականն ու ինքնընկալումը ձևավորվում են ոչ թե «ներսից դուրս», այլ «դրսից ներս»՝ մեծ մասամբ սոցիալական ճանաչման կամ մերժման պայմաններում: Որքան ցածր է ընդունվածությունն ու բարձր խտրականության/անվտանգության ռիսկը, այնքան ավելի խաթարված են հոգեկան կայունությունը, կյանքի վերահսկելիության զգացումը և սեփական արժեքի ընկալումը:

Հոգեկան առողջության սուբյեկտիվ գնահատման տեսանկյունից խմբերը հստակ բաժանվում են տարբեր մակարդակների: Հարցմանը մասնակցած մարգինալ խմբերի հիմնական մասն արձանագրել է միջին գնահատականների կայուն պատկերը: Տվյալների համաձայն՝ կին իրավապաշտպանների, սեռական բռնություն վերապրած կանանց և տրանս կանանց/սեքս աշխատողների 70%-ից ավելին ընտրել է «միջին» կամ «լավ» տարբերակները, իսկ «լավ» պատասխանն առանձնանում է որպես ամենահաճախ ընտրվածը (համապատասխանաբար 42%, 39% և 30%): Կանխատեսելիորեն, տեղահանված կանանց շրջանում շուրջ 80%-ը հոգեբանական վիճակի սուբյեկտիվ գնահատականը տվել է միջին և ցածր, ինչը համընկնում է պատերազմի, տեղահանության և նոր միջավայրում երկարատև անորոշության թողած հոգեբանական ծանր ազդեցության հետ: Ընդհանուր տրամաբանությամբ՝ տվյալները հաստատում են, որ հոգեկան բարեկեցությունը խմբերի միջև տարբերվում է՝ ըստ կառուցվածքային ճնշումների ինտենսիվության: Այսպիսով՝ կայունության բարձր մակարդակը ավելի հաճախ հանդիպում է այնտեղ, որտեղ գոյություն ունի սոցիալական կապիտալ և աջակցող միջավայր, իսկ ամենացածրը՝ այնտեղ, որտեղ առկա է կորստի տրավմա կամ համակարգային մերժում:

Վերջին հինգ տարիների հոգեկան վիճակի փոփոխության դինամիկան բացահայտում է կուտակային ճգնաժամերի ազդեցությունը և միաժամանակ՝ վերականգնման հնարավորությունները: Տեղահանված կանանց ավելի քան

65%-ը նշում է վատթարացում՝ մեծ մասամբ կտրուկ բնույթի, ինչը ցույց է տալիս ոչ միայն անհատական տրավման, այլև «կորուստ–անորոշություն–չընդունվածություն» շղթան, որում նրանք շարունակում են ապրել: Նույն ժամանակահատվածում հոգեկան վիճակի վատթարացում է արձանագրում նաև կին իրավապաշտպանների գրեթե կեսը (48%)՝ արդեն ոչ թե տեղահանության, այլ քրոնիկ սթրեսի, երկրորդական տրավմայի և մասնագիտական այրման հետևանքով: Մինչդեռ սեռական բռնություն վերապրածների և տրանս կանանց/սեքս աշխատողների խմբերում նկատվում է ավելի հավասարակշռված պատկեր՝ մոտ 40%-ի մոտ բարելավում, ինչը տվյալների մեկնաբանությամբ կապվում է թերապիայի, խմբային աջակցության և «ապահով տարածքների» հասանելիության հետ: Այսինքն՝ նույնիսկ բարձր խոցելիության պարագայում բարելավումը հնարավոր է, երբ կան աջակցող մեխանիզմներ, որոնք վերականգնում են արժևորման և վերահսկելիության զգացումը:

Կյանքի տարբեր ոլորտներով բավարարվածության գնահատումը փաստում է, որ կին իրավապաշտպանների մոտ գրեթե բոլոր ոլորտները գնահատվում են միջինից բարձր՝ հատկապես կրթություն, ընտանիք/զուգընկերային հարաբերություններ և ընկերական կապեր, ինչը վկայում է կայուն սոցիալական կապերի և ինքնահաստատման ռեսուրսների մասին: Սեռական բռնություն վերապրածների մոտ պատկերը միջին է և համեմատաբար կայուն՝ վերականգնման և վերաինտեգրման դինամիկայով, բայց տնտեսական ոլորտներում նկատվող որոշակի սահմանափակումներով: Տեղահանված կանանց բավարարվածությունը զգալիորեն ցածր է՝ հատկապես աշխատանքի, ֆինանսների և ճամփորդելու հնարավորությունների մասով՝ ընդգծելով նյութական սահմանափակումների երկարատև ազդեցությունը և նրանց՝ այս պահին Մասլոուի բուրգի (1) առաջին մակարդակում գտնվելու և հիմնարար ֆիզիոլոգիական պահանջմունքների բավարարման խնդրով առաջնորդվելու հանգամանքը: Ամենախոցելի պատկերը տրանս կանանց և սեքս աշխատողների մոտ է՝ գրեթե բոլոր ոլորտներում ամենացածր ցուցիչներով, իսկ երկու եզակի ցուցիչները՝ գենդերային ինքնությամբ ապրելու հնարավորությունը և անվտանգության/պաշտպանվածության զգացումը, փաստացի բացատրում են, թե ինչու այս խմբում նույնիսկ հարաբերական սոցիալական կապերի առկայությունը չի վերածվում լիարժեք բարեկեցության: Այստեղ խնդիրը ոչ թե միայն տնտեսական է, այլ արժանապատվության և անվտանգության հիմքային պակասը:

Երջանկության ցուցիչը կարևոր շեշտադրում է տալիս՝ ի հակադրություն ոլորտային բավարարվածության գնահատականների տարբերություններին, բոլոր խմբերում հաճախակի է հանդիպում «ժամանակ առ ժամանակ երջանիկ եմ» պատասխանը (մոտ կեսի շրջանակում): Վերջինս վկայում է դիմակայունության և «փոքր ուրախությունների» պահպանման մասին, սակայն

1.Աբրահամ Մասլոուի կարիքների բուրգը հոգեբանական տեսություն է, ըստ որի՝ մարդու կարիքները դասավորված են հիերարխիկ մակարդակներով՝ սկսած հիմնարար ֆիզիոլոգիական կարիքներից մինչև ինքնադրսևորման բարձրագույն մակարդակ: Յուրաքանչյուր հաջորդ մակարդակ կարող է դրսևորվել արդյունավետ, երբ նախորդը բավարար չափով ապահովված է:

տեսանելի է նաև որոշակի բևեռացումը: Տրանս կանանց և սեքս աշխատողների մոտ 38%-ը նշել է «դժբախտ եմ» պատասխանը, մինչդեռ մյուս խմբերում այդ ցուցիչը էականորեն ցածր է (20%-ից ցածր): Այս տարբերությունը վերադառնում է նույն առանցքին՝ երբ անվտանգության և ընդունման հիմքերը խաթարված են, երջանկության սուբյեկտիվ ռեսուրսը նույնպես սահմանափակվում է:

Կյանքի վերահսկելիության, հաջողության և անհաջողության մեկնաբանությունների վերաբերյալ ստացված տվյալները ցույց են տալիս ինքնաընկալման ամենախորը շերտերը: Կին իրավապաշտպանների, սեռական բռնություն վերապրածների և տեղահանված կանանց գերակշիռ մասը (համապատասխանաբար՝ 94%, 89% և 80%) համոզված է, որ կառավարում է սեփական կյանքը, թեև տեղահանված կանանց մոտ այնուամենայնիվ զգալի է արտաքին պայմանների գերակայության գիտակցումը (20% նշել է «կախված չէ ինձնից» պատասխանը): Տրանս կանանց և սեքս աշխատողների միայն մեկ երրորդն է (30%) գտնում, որ ունի կյանքի լիարժեք վերահսկելիության, իսկ համեմատաբար մեծամասնության համար այն դառնում է մասնակի վերահսկելի փորձառություն, ինչը համադրելի է կառուցվածքային խտրականության պայմաններում «ընտրության սահմանափակության» հետ: Հարկ է նշել, որ այս տեսնակյունից անհաջողությունների պատճառաբանման մեջ երկու հակադիր տրամաբանություն է առանձնանում: Կին իրավապաշտպանների (88%) և սեռական բռնություն վերապրածների (68%) մոտ ավելի արտահայտված է ինքնապատասխանատվության և ռեֆլեկտիվ վերլուծության մշակույթը (ոչ թե մեղավոր փնտրել, այլ հասկանալ՝ ինչն էր իմ ազդեցության դաշտում, ինչը՝ ոչ): Մինչդեռ տեղահանվածների և տրանս կանանց/սեքս աշխատողների մոտ (համապատասխանաբար 58% և 68%) առավել տարածված է «պատահականություն/ ճակատագիր/ արտաքին հանգամանքներ» մեկնաբանությունը՝ որպես երկարատև անորոշության մեջ ապրելու հոգեբանական պաշտպանություն: Սա ոչ միշտ է նշանակում պասիվություն, բայց հաճախ նշանակում է, որ վերահսկելիության զգացումը խաթարված է կամ իրենցից չկախված հանգամանքներում ունեցած կորտսի պատճառով (տեղահանվածներ), կամ շարունակական մերժման/վտանգի պատճառով (տրանս կանայք/սեքս աշխատողներ):

Արժեհամակարգային դատողությունները հաջողության, իշխանության և արդարության մասին ամրապնդում են այն գաղափարը, որ ինքնագնահատականը միայն անհատի հոգեբանություն չէ, այլ հասարակության նկատմամբ ձևավորված վստահության կամ անվստահության հայելի: Բոլոր խմբերը միաժամանակ ընդունում են և՛ անձնական որակների, և՛ արտաքին գործոնների դերը հաջողության մեջ, բայց տրանս կանանց/սեքս աշխատողների խմբում առավել ուժեղ է «արտաքին համակարգը որոշում է ամեն ինչ» փորձառությունը (86%), և գրեթե միաձայն է իշխանության անօրինականության ընկալումը (94%), ինչը բացատրում է, թե ինչու են այս խմբում կյանքի վերահսկելիությունն ու արժևորումը կառուցվածքային սահմանափակումների տակ: Միաժամանակ, առողջապահության հարցում գրեթե համընդհանուր է

պետության պատասխանատվության ճանաչումը (85–98%), ինչը ցույց է տալիս արժեքային ընդհանուր հիմք՝ անկախ խմբային տարբերություններից:

Ընդհանուր եզրահանգումով՝ ինքնագնահատականի և ինքնաընկալման վերլուծությունը ցույց է տալիս չորս խմբերի տարբեր ներքին պատկերներ: Իրավապաշտպանների մոտ՝ բարձր ինքնավարություն և կայուն սոցիալական կապիտալ, բայց այրման ռիսկ, տեղահանվածների մոտ՝ կորստով պայմանավորված վերահսկելիության խաթարում և տնտեսական/կենցաղային անորոշության ծանր հոգեբանական հետևանքներ, սեռական բռնություն վերապրածների մոտ՝ վերականգնման և ինքնաճանաչման համեմատաբար արտահայտված դինամիկա՝ տնտեսական սահմանափակումների ֆոնին, տրանս կանանց/սեքս աշխատողների մոտ՝ ինքնության և անվտանգության հիմնարար դեֆիցիտ, որը ճնշում է կյանքի բոլոր ոլորտների բավարարվածությունը և սահմանափակում «ես»-ի կայուն կառուցումը անգամ այն դեպքերում, երբ առկա է որոշ աջակցություն:

Ինքնադրսևորման և ինքնազարգացման հնարավորություններ

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ խոցելի խմբերի համար ինքնադրսևորման և ինքնազարգացման հնարավորությունները ձևավորվում են ոչ միայն անհատի ներքին ձգտումներով, այլև առաջին հերթին՝ սոցիալական, անվտանգային և ինստիտուցիոնալ միջավայրի պայմաններով: Թեև բոլոր խմբերում առկա է «զգուշավոր լավատեսության» ընդհանուր տրամադրություն ապագայի նկատմամբ, այդ լավատեսության բովանդակությունը, խորությունը և իրագործելիությունը էականորեն տարբերվում են՝ կախված խոցելիության տեսակից և ինտենսիվությունից:

Կյանքի որակի սուբյեկտիվ գնահատականների համադրությունը վկայում է, որ տարբեր խոցելի խմբերի ընկալումներում առկա է ոչ միայն ներկայիս վիճակի քննադատական գնահատում, այլև դրական դինամիկայի ակնկալիք: Կին իրավապաշտպանների խմբում համեմատաբար լավատեսական պատկեր է՝ 36%-ը համոզված է, որ իր կյանքը արդեն զարգանում է ճիշտ ուղղությամբ: Սեռական բռնություն վերապրած կանանց խմբում 29%-ը նման գնահատական է տվել՝ հաստատելով վերականգնման ճանապարհի որոշակի վստահություն: Իսկ տրանս կանանց և սեքս աշխատողների, ինչպես նաև Արցախից տեղահանված կանանց շրջանում միայն 16% և 15%-ն են կիսում այդ համոզումը՝ ընդգծելով ներկայիս դժվարությունների խորությունն ու ապագայի նկատմամբ զգուշավոր սպասման տրամադրությունները:

Անցյալ երեք տարիների դիտանկյունից կյանքի որակի գնահատումը հստակ արտացոլում է վերջին տարիների կտրուկ անվտանգային և քաղաքական ցնցումների ազդեցությունը: Տեղահանված կանանց համար անցյալը հիշվում է

որպես զգալիորեն ավելի կայուն և լիարժեք փուլ, մինչդեռ մյուս խմբերում գերակշռում է կա՛մ «նույնը մնալու», կա՛մ աստիճանական վատթարացման ընկալումը: Այս հիշողությունները ձևավորում են ներկայի նկատմամբ վերաբերմունքը և ապագայի հույսերի կառուցվածքը՝ միաժամանակ ընդգծելով կորստի, անորոշության և հարմարվողականության համակցված ազդեցությունը:

Լիարժեք կյանքի համար անհրաժեշտ պայմանների վերլուծությունը ցույց է տալիս, որ բոլոր խմբերում առաջնային են նյութական և աշխատանքի առկայության գործոնները, քանի որ ֆինանսական կայունությունն ու աշխատանքի հասանելիությունը հանդես են գալիս որպես ինքնադրսևորման հիմնական նախապայմաններ: Սակայն որքան խորն է խոցելիությունը, այնքան ավելի մեծ տեղ են զբաղեցնում ոչ նյութական, արժանապատվությանը և ինքնությանը վերաբերող կարիքները: Եթե կին իրավապաշտպանների համար լիարժեք կյանքը կապվում է ժողովրդավարության, արդարության և ինստիտուցիոնալ կանխատեսելիության հետ, ապա տրանս կանանց և սեքս աշխատողների համար առանցքային են ընդունված լինելը, անվտանգ միջավայրը, ազատ արտահայտվելու հնարավորությունը և հոգեբանական աջակցությունը: Այս խմբի դեպքում ինքնադրսևորման հարցը դառնում է գոյաբանական: Այն վերաբերում է ոչ թե միայն զարգացմանը, այլև ապրելու իրավունքի ապահովմանը:

Ապագայի վերաբերյալ պատկերացումները ևս բացահայտում են խոցելիության տարբեր տրամաբանություններ: Սեռական բռնություն վերապրած և տեղահանված կանայք ապագան ընկալում են որպես վերականգնման շարունակություն՝ առողջության, աշխատանքի և կայուն եկամտի միջոցով: Կին իրավապաշտպանների համար ապագան ավելի շատ ներքին խաղաղության, հոգեկան հավասարակշռության և մասնագիտական կայունության տարածք է՝ քաղաքական և հասարակական ռիսկերի ֆոնին: Տրանս կանանց և սեքս աշխատողների մոտ ապագայի լավատեսությունը կապվում է ինքնության ճանաչման և անվտանգության հնարավորության հետ, իսկ անորոշության զգացումը մյուս խմբերի համեմատ առավել բարձր է՝ պայմանավորված կառուցվածքային խտրականության և իրավական անպաշտպանության շարունակականությամբ: Ընդհանուր առմամբ՝ կարելի է ասել, որ յուրաքանչյուր խոցելի խմբի ապագայի պատկերացումները ձևավորվում են նրանց ներկայիս վիճակի և հիմնական կարիքների պրիզմայով: Սեռական բռնություն վերապրած և տեղահանված կանայք ապագան կապում են վերականգնման և վերակառուցման հետ՝ ցանկանալով հետ բերել կորսվածը կամ բուժել վերքերը: Իրավապաշտպան կանայք ապագան տեսնում են կայունության և աստիճանական զարգացման հարթությունում, որտեղ առաջնային է պահպանել արդեն իսկ ձեռքբերած տարածքները և խուսափել հետընթաց ապրելուց: Տրանս կանայք և սեքս աշխատողները ապագան պատկերացնում են որպես իրավունքի ճանաչման և արժանապատվության ձեռքբերման պայքարի շարունակություն՝ ակնկալելով, որ երկարաժամկետ հեռանկարում պետությունն ու հասարակությունը կսկսեն իրենց ընդունել որպես հավասար քաղաքացիների:

Այս խումբը հույս ունի, որ ապագայում խտրականության կառուցվածքային դրսևորումը կփոխվի և նրանք հնարավորություն կունենան ապրելու առանց վախի ու բացառման: Ընդհակառակը՝ եթե այդ փոփոխությունը տեղի չունենա, նրանց համար ապագան մնում է մշուշոտ ու վտանգավոր, ինչը նրանք էլ արտահայտում են իրենց գնահատականներում:

Խոցելի խմբերի *վախերի կառուցվածքը* վկայում է վտանգի ընկալման խորապես տարբեր դինամիկայի մասին՝ կախված նրանց սոցիալ-քաղաքական փորձից և ինստիտուցիոնալ կապերից: Կին իրավապաշտպանների խմբում առաջնային է լայնածավալ ռազմական էսկալացիայի շուրջ անհանգստությունը. հարցվածների 35%-ը որպես հիմնական վախ նշում է նոր պատերազմի սպառնալիքը: Նմանատիպ պատկեր դիտվում է նաև Արցախից տեղահանված կանանց մոտ, որտեղ 29%-ը կիսում է նույն մտահոգությունը, և հավելյալ 32%-ը չի կարող առանձնացնել մեկ վտանգ՝ նշելով «բոլոր տարբերակները», ինչը վկայում է համապարփակ սպառնալիքի դաշտի առկայության մասին: Սեռական բռնություն վերապրած կանանց շրջանում ևս գերակշռում է վախերի բազմաշերտ ընկալումը՝ 31%-ը ընտրել է «բոլոր տարբերակները» պատասխանը, իսկ 12%-ը՝ միջուկային պատերազմի վախը, որը նկատելիորեն բարձր է մնացած խմբերի համեմատ: Սա կարող է մատնանշել անձնական տրավմայի և համակարգային անվստահության համադրման հետևանքները՝ հանգեցնելով վտանգների ուռճացրած ընկալման: Ի տարբերություն վերոնշյալ խմբերի՝ տրանս կանանց և սեքս աշխատողների մոտ հիմնական մտավախությունը ոչ թե գլոբալ կամ արտաքին վտանգներն են, այլ անմիջական և մարմնական սպառնալիքները: Նրանց 38%-ը նշել է տրանս անձանց նկատմամբ պետական քաղաքականությունների խստացումը որպես առաջնային վախ, իսկ ընդհանուր առմամբ՝ 40%-ը ընտրել է «բոլոր տարբերակները»՝ ընդգծելով անընդհատ ճնշման տակ ապրելու մթնոլորտը: Այս խմբի պատասխանները ցույց են տալիս, որ վախի դաշտը ձևավորվում է ոչ միայն որպես ապրում, այլ որպես մշտական գոյաբանական ռեժիմ, որը պահանջում է անհապաղ իրավական, սոցիալական և միջավայրային միջամտություններ:

Սոցիալական վստահության կառուցվածքը խոցելի խմբերում արտացոլում է ինչպես անհատական փոխհարաբերությունների ընկալումը, այնպես էլ համակարգային վստահության ճգնաժամը: Կին իրավապաշտպանների (78%) և սեռական բռնություն վերապրած կանանց (80%) շրջանում նկատվում է մարդկանց *բարյացկամության* նկատմամբ հարաբերական վստահություն՝ նույնիսկ տրավմատիկ փորձառությունների պայմաններում: Արցախից տեղահանված կանանց մոտ *բարյացկամության* ընկալումը բարձր է (86%), սակայն նույնքան մասը (86%) համոզված է, որ *մարդիկ չեն պահպանում իրենց խոսքը*, ինչն արտահայտում է անհատական հույսի և ինստիտուցիոնալ հիասթափության հակադրությունը: Տրանս կանանց և սեքս աշխատողների խմբում վստահությունը կտրուկ նվազում է. ընդամենը 16%-ն է կարծում, որ մարդիկ պատրաստ են օգնել, իսկ 92%-ը համաձայն է, որ մարդիկ «վստահելի չեն»: Սա վկայում է ոչ միայն անհատական փակվածության, այլև համակարգային

մերժման կուտակային հետևանքի մասին: Այս խումբը վստահելի հարաբերություններ տեսնում է միայն սահմանափակ և ապահով միջավայրերում: Միևնույն ժամանակ, բոլոր խմբերում նկատվում է այն միտումը, որ պետական և իրավապահ համակարգերի հանդեպ վստահության մակարդակը ամենացածրն է, իսկ հասարակական կազմակերպությունների և ոչ ֆորմալ ցանցերի նկատմամբ՝ ամենաբարձրը:

Խոցելիության դասակարգումն ըստ ինքնադրսևորման հնարավորությունների դուրս է բերում երեք հստակ շերտ: Կին իրավապաշտպաններն ունեն համեմատաբար լայն ինքնադրսևորման դաշտ՝ չնայած բարձր հոգեբանական և անվտանգային ռիսկերին: Սեռական բռնություն վերապրած և տեղահանված կանայք գտնվում են միջանկյալ դիրքում՝ միաժամանակ բախվելով սահմանափակումների և ունենալով վերականգնման իրական հնարավորություններ: Ամենաբարձր խոցելիությունը դիտվում է տրանս կանանց և սեքս աշխատողների մոտ, որոնց դեպքում խտրականությունը ուղղված է ոչ միայն հնարավորություններին, այլ հենց ինքնությանը՝ նեղացնելով կյանքի ընտրությունների ամբողջ սպեկտրը:

Այսպիսով, ինքնադրսևորման և ինքնազարգացման հնարավորությունները խոցելի խմբերի համար պայմանավորված են ոչ թե միայն անհատական ջանքերով, այլ հասարակության կողմից ճանաչման, անվտանգության և ներառման մակարդակով: Որքան պակաս են այդ պայմանները, այնքան ինքնազարգացումը վերածվում է ոչ թե ընտրության, այլ պայքարի՝ գոյատևելու, արժանապատվությունը պահպանելու և սեփական «ես»-ը պաշտպանելու համար:

Խտրականություն և իրավունքի ոտնահարումներ

Համաձայն ստացված արդյունքերի՝ խտրականությունն ու իրավունքների ոտնահարումը խոցելի խմբերի կյանքում ոչ թե եզակի միջադեպեր են, այլ կառուցվածքային և կրկնվող շղթայական երևույթ, ինչը միաժամանակ ազդում է մարդկանց սոցիալ–տնտեսական դիրքի, հոգեկան առողջության, ինքնագնահատականի, վստահության և ապագայի սպասումների վրա: Բոլոր դիտարկված խմբերը բախվում են խտրական վերաբերմունքի, սակայն տարբեր ինտենսիվությամբ և ձևերով: Կին իրավապաշտպանների միայն 16%-ն է հայտնել վերջին մեկ տարում խտրականության դեպքի մասին, մինչդեռ Արցախից տեղահանված կանանց դեպքում այդ ցուցանիշը 24% է, սեռական բռնություն վերապրած կանանց դեպքում՝ 32%, իսկ տրանս կանանց և սեքս աշխատողների շրջանում հասնում է 78%-ի՝ փաստորեն գրեթե համատարած մակարդակի: Այս բևեռացված տարբերությունն ընդգծում է, որ որքան խումբը սոցիալական առումով մերժված ու մարգինալացված է, այնքան ավելի հաճախակի և բազմաչափ խտրականության է ենթարկվում:

Տրանս կանայք և սեքս աշխատողները բախվում են ամենասուր և նույնիսկ գոյաբանական վտանգներով ուղեկցվող խտրականության: Նրանց նկատմամբ անարգանքը և բռնությունը դրսևորվում են հենց այն միջավայրերում, որտեղ անձը պետք է պաշտպանված լինի՝ ընտանիքում, բնակավայրում, հանրային վայրերում, առողջապահական ու սոցիալական ծառայություններում և աշխատաշուկայում: Նրանց պատմությունները մատնանշում են «ամենօրյա խտրականության» ճնշող ներկայությունը, երբ մարդու արտաքին տեսքը կամ գենդերային ինքնությունը դառնում են ոչ միայն վեճի, այլև կենսաբանական վտանգի պատճառ՝ ուղեկցվելով վիրավորական արտահայտություններով, ատելության խոսքով, ֆիզիկական և սեռական բռնությամբ, ծառայությունների սահմանափակությամբ, ոստիկանության կողմից ոչ պատշաճ արձագանքով կամ ուշադրությամբ և աշխատանքի ընդունման անհիմն մերժումներով: Այս խմբի համար պետությունը և իշխանական մշակույթը հաճախ ընկալվում են որպես ինքնությանն ուղղված սպառնալիք: Այսպիսով՝ տրանս կանայք ու սեքս աշխատողներն ապրում են մի իրականության մեջ, որտեղ խտրականությունը կառուցվածքային բնույթ ունի և օրենսդրորեն չկանխված լինելու դեպքում վերածվում է կենսական անվտանգության մշտական խնդրի:

Արցախից տեղահանված կանայք ևս առերեսվում են բազմաշերտ խտրականության, որը հիմնականում բխում է «արցախցի լինելու» հանգամանքից: Նրանց արձագանքները վկայում են, որ բնակարան վարձելիս հաճախ մերժվում կամ կասկածի տակ է առնվում վճարունակությունը, աշխատանքի ընդունվելու կամ պետական ծառայություններ ստանալու դեպքում լսվում են նվաստացնող արտահայտություններ, իսկ որոշ դեպքերում նրանց հանդեպ դրսևորում են վերաբերմունք որպես «օտարների» կամ «ժամանակավորների» նույնիսկ այն պարագայում, երբ այդ կանայք պաշտոնապես ՀՀ քաղաքացիներ են: Տեղահանվածներից շատերն իրենց դասում են «փախստական սեփական երկրում» կարգավիճակին, ինչը խորացնում է չընդունված լինելու և անկայունության զգացումը: Բացի այդ՝ պետությունից ստացվող աջակցության կրճատումը և իրավական կարգավիճակի անորոշությունը նույնպես սնուցում են մեկուսացվածության ու անտեսված լինելու տպավորությունը: Խտրական դրսևորումները տարածվում են առողջապահության, սոցիալական պաշտպանության ու կրթության ոլորտների վրա. օրինակ՝ բուժհաստատություններում և դպրոցներում «արցախցի» պիտակը կարող է ազդել վերաբերմունքի վրա. հարցվածների կարծիքով դրանք հաճախ դառնում են լրացուցիչ խարանավորման աղբյուր: Ի հետևանք՝ տեղահանված կանայք ապրում են սոցիալ-մշակութային միջավայրում, որտեղ նրանց նկատմամբ առկա բացասական ռազմավարությունները սահմանափակում են լիարժեք վերաինտեգրման հնարավորությունները՝ դպրոցից և աշխատաշուկայից մինչև համայնքային կյանքի տարբեր ասպեկտներ:

Սեռական բռնություն վերապրած կանայք բախվում են հիմնականում սոցիալական և ընտանեկան միջավայրերում առաջացող խարանավորման ու մեղադրական վերաբերմունքի: Նրանցից շատերը նշել են, որ ընտանիքում կամ

հարազատների կողմից արժանացել են մեղադրանքի, թերահավատության կամ նույնիսկ բռնության՝ իրենց անցած փորձառությունների համար: Հանրային կյանքում և աշխատավայրում նույնպես այս կանայք ենթարկվում են խարանող վերաբերմունքի: Ոմանք սեռական ոտնձգությունների ենթարկվելուն զուգահեռ բախվել են նաև արհամարհանքի կամ անվստահության համապատասխան մարմինների կողմից՝ վերջիններիս անհրաժեշտ ծառայությունների ստացման ակնկալիքով դիմելու դեպքում: Առավել մտահոգիչն այն է, որ իրավապահ համակարգի որոշ ներկայացուցիչներ ևս ցուցաբերել են չեզոք կամ բացասական վերաբերմունք. եղել են դեպքեր, երբ սեռական ոտնձգության մասին բողոքները մնացել են անարձագանք, գործերը՝ չքննված, կամ էլ ոստիկանները ցուցաբերել են հեգնական, մեղադրական վերաբերմունք վերապրածների հանդեպ: Այս ամենը վկայում է, որ սեռական բռնություն վերապրած կանայք հաճախ կրկնակի ճնշման տակ են՝ մի կողմից կրելով իրենց անցած հոգեբանական տրավմայի բեռը, մյուս կողմից՝ շրջապատի ու համակարգի կողմից չհասկացված լինելու և մեղադրվելու հավելյալ ծանրությունը: Արդյունքում, խտրականության այս դրսևորումը վերապրածների համար բնորոշվում է «մեղադրյալի» դիրքով ապրելով, ինչը խաթարում է նրանց ինքնավստահությունն ու լրջորեն սահմանափակում հանրային մասնակցության պատրաստակամությունը:

Կին իրավապաշտպանները, չնայած առավել պակաս հաճախականությամբ են հաղորդում ուղղակի խտրականության դեպքերի մասին, այնուամենայնիվ մշտապես գտնվում են թիրախավորման բեռի տակ՝ պայմանավորված իրենց ակտիվ քաղաքացիական գործունեությամբ: Նրանց նկատմամբ ճնշումները դրսևորվում են ինչպես ուղղակի, այնպես էլ թիրախավորված քարոզչության ձևով. օրինակ՝ հարցված իրավապաշտպան կանանցից շատերը նշել են, որ պիտակավորվել են որպես «գրանտակեր», «սորոսական», «ազգային արժեքներին դեմ» ակտիվիստներ և ենթարկվել են ատելության հրապարակային արշավների սոցիալական ցանցերում, դատական համակարգում կամ այլ հարթակներում: Բացի այդ՝ կենսական օրինակներ են բերվել, երբ նրանց մասնագիտական կարծիքը ամփոփվել է որպես «անլուրջ» պարզապես այն պատճառով, որ արտահայտվել է կնոջ կողմից, կամ որոշ կառույցներում ակնկալել են «տղամարդ ղեկավարի» ներկայություն՝ թերագնահատելով կանանց առաջնորդության հնարավորությունը: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ իրավապաշտպան կանայք ունեն նաև որոշակի սոցիալական և մասնագիտական կապիտալ, որը նրանց թույլ է տալիս հաղթահարել խոչընդոտների մի մասը: Այս խումբը գործում է հարաբերականորեն լայն ինքնադրսևորման դաշտում՝ ավելի լայն հնարավորություններ ունենալով կրթական, աշխատանքային և քաղաքական դաշտում, սակայն այդ հնարավորություններն էլ ուղեկցվում են բարձր ռիսկերով և շարունակական հոգեբանական ճնշմամբ: Այս պարագայում կարելի է խոսել այսպես կոչված «խոցելիության պարադոքսի» մասին, երբ ֆորմալ առումով կին իրավապաշտպաններն ապահովված են մասնակցության ուղիներով, բայց հենց այդ մասնակցությունն է պատճառ դառնում լրացուցիչ ճնշումների, հարձակումների և մասնագիտական այրման ռիսկերի համար:

Խտրականությանն արձագանքելու վարքագծային վերլուծությունը ցույց է տալիս, որ խոցելի խմբերի համար ֆորմալ պաշտպանության մեխանիզմները գրեթե չեն աշխատում: Ստիկանություն դիմելը բոլոր խմբերում գրեթե զրոյական է, ինչը վկայում է ինստիտուցիոնալ վստահության բացակայության մասին և այն ընկալման, որ իրավապահ համակարգը կամ չի օգնելու, կամ կարող է վնասել/վատթարացնել իրավիճակը: Փոխարենը, արձագանքման հիմնական ռազմավարությունները երկուսն են՝ ինքդ լուծել կամ ոչինչ չանել: Այստեղ առանձնանում է տեղահանված կանանց խումբը, որտեղ «ոչինչ չեմ արել»-ը ամենաբարձրն է, ինչը տրամաբանական է նոր միջավայրում կապերի պակասի, ռեսուրսների կորստի, տրավմայի և կողմնորոշման դժվարության պայմաններում: Միաժամանակ, ՀԿ-ներին դիմելու ամենաբարձր ցուցանիշը դիտվում է տրանս կանանց և սեքս աշխատողների խմբում, քանի որ նրանց համար ՀԿ-ները հաճախ դառնում են միակ «անվտանգ» և գործունակ պաշտպանական դաշտը: Ընդհանուր դրդապատճառների մակարդակում գերակշռում է երեք հիմնական պատճառ՝ անվստահություն, «միևնույն է չեն օգնի» տրամաբանությունը, և վախը հանրայնացումից. այս երեքը միասին ձևավորում են խտրականության «լռության շրջանը», երբ խախտումները չեն արձանագրվում, հետևաբար՝ չեն պատժվում և շարունակվում են:

Մարգինալ խմբերի խոցելիության մակարդակի դասակարգում

Հիմնվելով բազմաչափ վերլուծությունների վրա՝ խոցելիության համակցված դասակարգումն ըստ համակարգված ցուցիչների՝ սոցիալ-տնտեսական կայունության, ինքնագնահատականի, ինքնադրսևորման հնարավորությունների և խտրականության դրսևորումների, կարելի է դուրս բերել հետևյալ օրինաչափությունը.

Ամենաբարձր խոցելիություն՝ *Տրանս կանայք և սեքս աշխատողներ*

Ենթարկվում են համակարգային խտրականության՝ ներառյալ իրավական, սոցիալական, տնտեսական և մշակութային դուրսմղվածություն: Ինքնության և ֆիզիկական անվտանգության նկատմամբ ուղղված սպառնալիքները խոչընդոտում են ինքնադրսևորմանը, իսկ ինստիտուցիոնալ պաշտպանությունը բացակայում է: Խոցելիության մակարդակի դրական փոփոխությունն առավելապես կախված է արտաքին գործոններից և ինստիտուցիոնալ բարեփոխումներից:

Բարձր խոցելիություն՝ *Արցախից տեղահանված կանայք*

Խոցելիությունը պայմանավորված է տեղահանման հետևանքով ձևավորված սուր սոցիալ-տնտեսական անկայունությամբ, նոր միջավայրում մերժման և

խարանավորման բարձր մակարդակով, սոցիալական կապերի կորստով և ինստիտուցիոնալ վստահության թուլացմամբ: Խոցելիության մակարդակի դրական փոփոխությունն առավելապես ժամանակի ու ռեսուրսների մոբիլիզացիայի արդյունքում ակնկալվող դինամիկա է:

Միջին խոցելիություն՝ *Սեռական բռնություն վերապրած կանայք*

Նրանց խոցելիությունը համադրվում է տրավմատիկ փորձառությունների հետ, սակայն առկա են վերականգնման ռեսուրսներ՝ աջակցման ծառայությունների, կրթության ու զբաղվածության մասով: Խոցելիությունն անկայուն է, իսկ դրական դինամիկան կախված է առավելապես անձնական, սոցիալական դիրքորոշումներից, ինչպես նաև՝ մասամբ իրավական դաշտերում անհրաժեշտ փոփոխություններից:

Համեմատաբար ցածր խոցելիություն՝ *Կին իրավապաշտպաններ*

Չնայած մասնագիտական թիրախավորմանը և հանրային ճնշումներին՝ այս խումբն ունի առավել բարձր ինքնավարություն, ինստիտուցիոնալ մուտքի հնարավորություն և վերականգնողական ռեսուրսների հասանելիություն: Նրանց խոցելիությունը հարաբերական է, իսկ դրա փոփոխությունները թե՛ դրական, թե՛ բացասական առանցքում պայմանավորված հիմնականում արտաքին քաղաքական և հանրային զարգացումներով:

***

Ընդհանրացնելով վերը նկարագրված բոլոր դիտարկումները՝ կարելի է եզրակացնել, որ Հայաստանում հետազոտության շրջանակում ուսումնասիրված խոցելի խմբերի նկատմամբ մարգինալացման, խտրականության և սոցիալական բացառման փորձառություններն ունեն փոխկապակցված բնույթ: Տնտեսական անապահովությունը, որը հաճախ պայմանավորված է արտաքին գործոններով, միահյուսվում է գենդերային և սոցիալական նորմերով և կարծրատիպերով թելադրված նախապաշարմունքներին: Յուրաքանչյուր խումբ բախվում է յուրահատուկ խտրականության դրսևորման: Տրանս կանանց դեպքում դա գենդերային ինքնության հիմքով կառուցվածքային հալածանքն է, տեղահանված կանանց դեպքում՝ նոր միջավայրում չհարմարավետն ու թվացյալ «օտարի» պիտակավորումը, սեռական բռնության վերապրածների դեպքում՝ հայրիշխանական բարքերով պայմանավորված զոհին մեղադրելու (victim blaming) ու անտեսման մշակույթը, իսկ իրավապաշտպանների դեպքում՝ քաղաքական հակազդեցությունը և գենդերով պայմանավորված ձեռնարկած գործողությունների ու նախաձեռնությունների թերագնահատման դրսևորումները: Այս բոլոր դրսևորումները խարսխված են հասարակական և ինստիտուցիոնալ մակարդակներում տիրող երկարատև երևույթների վրա և վերարտադրվում են, քանի դեռ չկան համակարգային հակազդող քայլեր:

Այլ կերպ ասած՝ գործ ունենք խոցելիության փոխկապակցված կառուցվածքի հետ, որտեղ սոցիալական ներառման սահմանափակումները դրսևորվում են տարբեր ձևերով, բայց էապես բխում են նույն սկզբունքից՝ որոշ մարդիկ շարունակում են համակարգային առումով դուրս մնալ հավասար հնարավորություններից ու պաշտպանությունից: Հետևաբար, խնդրի հաղթահարման համար անհրաժեշտ են լուծումներ, որոնք միաժամանակ կառավարելի կդարձնեն խտրականության բազմաչափ բնույթը՝ ապահովելով ինչպես ընդհանրական, համակարգային փոփոխություններ, այնպես էլ յուրաքանչյուր խմբի առանձնահատկություններին համապատասխան թիրախային միջամտություններ: Դրանով պայմանավորված՝ հետազոտության առաջարկությունների շրջանակը կառուցված է փոխհատական մոտեցման վրա՝ ուղղված խոցելի խմբերի խտրականության պատճառահետևանքային շղթաների կոտրմանը: Առաջարկները ձևակերպված են երկաստիճան կառուցվածքով՝ համակարգային մակարդակում՝ ուղղված պետական քաղաքականության, սոցիալական պաշտպանական համակարգի, իրավական և հանրային ոլորտների բարեփոխմանը, և խմբային մակարդակում՝ հիմնված յուրաքանչյուր խոցելի խմբի առանձնահատուկ պայմանների, սոցիալական և հոգեսոցիալական ռիսկերի ու վերականգնման ներուժի վրա: Ներկայացվող առաջարկները միկրո մակարդակում ուղղված են կոնկրետ խոչընդոտների հաղթահարմանը, իսկ մակրո մակարդակում կնպաստեն իրավական լուծումների հստակեցմանը, սոցիալական ներառման ընդլայնմանը, հասարակական կարծիքի վերափոխմանը և գենդերային ու խտրականության դիսկուրսների ինստիտուցիոնալ ամրապնդմանը:

Ներածություն

Խտրականությունը, սոցիալական մարգինալացումը և մարդու իրավունքների խախտումները փոխկապակցված երևույթներ են, որոնք վերարտադրում են հասարակական անհավասարությունը՝ հատկապես խոցելի խմբերի համար: Տեսական մակարդակում այս երևույթները դիտարկվում են որպես կառուցվածքային բռնություն, երբ հասարակական նորմերը, պետական ինստիտուտների կանոնները և առօրյա գործելակերպը միասին ստեղծում են այնպիսի պայմաններ, որոնցում որոշ մարդիկ համակարգայնորեն զրկված են ռեսուրսներից, հնարավորություններից և պաշտպանությունից (Galtung, 1969): Այս առումով «խոցելի» լինելը չի նշանակում ունենալ անձնական թուլություն, այլ ապրել այնպիսի սոցիալ-քաղաքական պայմաններում, որտեղ իշխանության, ռեսուրսների և պաշտպանության հասանելիությունն անհավասար է բաշխված:

Միջազգային մարդու իրավունքների համակարգը՝ ներառյալ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիրը, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագիրը, Կանանց դեմ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան (CEDAW), Երեխաների իրավունքների կոնվենցիան (CRC) և Խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան (ICERD) պարտավորեցնում են պետություններին ապահովել ոչ միայն իրավական, այլև գործնական հավասարություն, այսինքն՝ իրականում հավասար պայմաններ բոլոր մարդկանց համար:

Այդ սկզբունքը՝ «փաստացի հավասարություն» (de facto equality), ենթադրում է, որ պետությունը պետք է ոչ միայն կանխի բռնությունը և խտրականությունը, այլև ձևավորի սոցիալական պայմաններ, որոնք թույլ կտան բոլորին ապրել արժանապատիվ կյանքով՝ կրթության, առողջապահության, աշխատանքի, սոցիալական պաշտպանության և քաղաքական մասնակցության հավասար հասանելիությամբ:

Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է այս հիմնական միջազգային փաստաթղթերը և միացել է նաև Կայուն զարգացման նպատակների (ԿԶՆ) շրջանակին, որը շեշտադրում է «ոչ մեկին չանտեսելու» սկզբունքը (Leave No One Behind)՝ հատկապես աղքատության, գենդերային անհավասարության, հաշմանդամության և տեղահանության համատեքստում: Այս սկզբունքը կարևոր է, քանի որ խոցելիությունը Հայաստանում հաճախ ունի բազմաշերտ բնույթ՝ միաժամանակ պայմանավորված լինելով սեռով, տարիքով, սոցիալ-տնտեսական վիճակով, առողջական սահմանափակումներով, տեղահանված լինելու կարգավիճակով կամ բնակության վայրով: Այս փոխկապակցվածությունը սահմանվում է որպես փոխհատականություն (intersectionality, Crenshaw, 1989), որը բացատրում է, թե ինչպես են տարբեր ինքնություններ և սոցիալական դերեր հատվում ու ստեղծում բազմապատկված խոցելիություն:

Հայաստանում այս երևույթները հատկապես սրվեցին վերջին տարիներին՝ 2020 թվականի պատերազմի, Լեռնային Ղարաբաղից 2023 թվականի զանգվածային տեղահանության, ինչպես նաև սահմանային լարվածությունների հետևանքով: Տասնյակ հազարավոր մարդիկ ստիպված եղան վերաբնակվել Հայաստանի սահմանամերձ և սոցիալապես խոցելի համայնքներում, որտեղ ենթակառուցվածքները թույլ են, սոցիալական ծառայությունները՝ սահմանափակ, իսկ անվտանգության զգացումը՝ ցածր: Այս իրավիճակը բարձրացրել է ռիսկերը՝ խոցելի խմբերի իրավունքների թերի պաշտպանության, պետական աջակցության անհամաչափ բաշխման և սոցիալական մեկուսացման տեսանկյունից: Տարբեր տեղական և միջազգային կազմակերպությունների զեկույցները փաստում են, որ տեղահանված բնակչության շրջանում եկամտի պակասը, բժշկական օգնության անհասանելիությունը և կրթությունից դուրս մնալու ցուցանիշներն էապես բարձր են, քան ՀՀ ընդհանուր բնակչության շրջանում:

Խտրականությունը կարող է արտահայտվել ուղղակի և անուղղակի ձևերով: Ուղղակի խտրականություն է այն, երբ մարդուն ծառայությունից կամ իրավունքից բացահայտ զրկում են՝ ելնելով նրա որևէ հատկանիշից (օրինակ՝ սեռից, առողջական վիճակից, ծագումից): Անուղղակի խտրականությունը ավելի թաքնված է, երբ օրենքը կամ քաղաքականությունը «թղթի վրա» բոլորին է վերաբերում, սակայն իր կիրառման ձևը փաստացի բացառում է որոշ խմբերի (օրինակ՝ ծառայության պայմանները չեն համապատասխանում հաշմանդամություն ունեցող անձանց կամ տեղահանված մարդկանց հնարավորություններին):

Վիճակագրական տվյալներն ու հետազոտությունները ցույց են տալիս, որ խոցելի խմբերը Հայաստանում զգալիորեն ավելի հաճախ են բախվում խտրականության և սոցիալական մարգինալացման հետևանքներին՝ հատկապես առողջության, աշխատանքի, կրթության և արդարադատության ոլորտներում:

- Կանայք և աղջիկները շարունակում են զգալ գենդերային բռնության, ընտանեկան բռնության և սեռական ոտնձգությունների բեռը՝ միաժամանակ չստանալով բավարար պաշտպանություն իրավապահ և դատական համակարգերի կողմից: Սա խախտում է նրանց իրավունքը՝ ապրելու առանց բռնության և ստանալու արդարադատություն: Ավելին, սեռական բռնության ենթարկված անձինք հաճախ բախվում են երկրորդային զոհականացման և հասարակական խարանման, որը նրանց զրկում է դատական պաշտպանության և հոգեբանական աջակցության լիարժեք հասանելիությունից:
- ԼԳԲՏՔ+ անձինք (լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր և քվիր անձինք) շարունակում են մնալ սոցիալական մարգինալիզացիայի և խտրականության առավել բարձր ռիսկի ներքո՝ կրթական, աշխատանքային, առողջապահական և հանրային միջավայրերում: Վերջին տարիներին արձանագրվել են նաև բռնության և ատելության հռետորաբանության դեպքեր, որոնք խախտում են նրանց անվտանգության և արժանապատվության հիմնարար իրավունքները:

- Տեղահանված բնակչությունը բախվում է երկակի խոցելիության՝ սոցիալ-տնտեսական անապահովության և սոցիալական մեկուսացման: Համայնքներում երբեմն արձանագրվում է լարվածություն տեղացի և նորեկ բնակիչների միջև՝ ռեսուրսների բաշխման շուրջ, ինչը հանգեցնում է անուղղակի խտրականության և համայնքային պառակտման:
- Կին իրավապաշտպանները, որոնք գործում են մարդու իրավունքների, գենդերային հավասարության և խաղաղության ոլորտներում, հաճախ դառնում են սոցիալական և քաղաքական հարձակումների, վարկաբեկման կամ բռնության թիրախ՝ պայմանավորված իրենց ակտիվ դիրքորոշմամբ: Նրանց նկատմամբ կիրառվող ճնշումները, այդ թվում՝ օնլայն հարձակումներ, սպառնալիքներ կամ հանրային խարանը, խաթարում են ոչ միայն նրանց անձնական անվտանգությունը, այլև քաղաքացիական ազատության և արտահայտվելու իրավունքը:
- Սահմանամերձ բնակչությունն ապրում է անվտանգության մշտական ռիսկերի պայմաններում, որոնք սահմանափակում են նրանց տնտեսական գործունեությունը, կրթության և առողջապահական ծառայությունների հասանելիությունը:
- Հաշմանդամություն ունեցող անձինք հաճախ զրկվում են ծառայություններից ֆիզիկական միջավայրի և տեղեկատվության ոչ մատչելիության պատճառով, ինչն ուղեկցվում է հասարակական կարծրատիպերով:

Այս ամենի արդյունքում սոցիալական մարգինալացումը Հայաստանում պետք է դիտարկել ոչ թե որպես անհատական մեկուսացում, այլ որպես համակարգային գործընթաց, որտեղ որոշ խմբեր աստիճանաբար դուրս են մղվում հիմնական սոցիալական իրավունքներից՝ կրթության, աշխատանքի, առողջության, սոցիալական պաշտպանության և արդարադատության հասանելիությունից:

Այս ուսումնասիրությունը հիմնված է այն համոզման վրա, որ խտրականությունը և սոցիալական մարգինալացումը պետք է վերլուծվեն ոչ միայն որպես սոցիալական երևույթներ, այլև որպես մարդու իրավունքների խախտման ցուցանիշներ: Նման մոտեցումը հնարավորություն է տալիս գնահատելու ոչ միայն իրավական դաշտի լիարժեքությունը, այլև փաստացի կյանքի պայմանները տարբեր խոցելի խմբերի համար:

Վերջապես, խոցելի խմբերի իրավունքների պաշտպանությունը Հայաստանի համար ոչ միայն սոցիալական արդարության, այլև հասարակական կայունության և խաղաղության պահպանման նախապայման է: Երբ բնակչության որոշ հատվածներ հետևողականորեն դուրս են մնում հանրային ուշադրությունից, դա խաթարում է վստահությունը պետության և ինստիտուտների նկատմամբ և մեծացնում է սոցիալական բևեռացումը:

Ուստի խտրականության և մարդու իրավունքների ոտնահարումների փաստաթղթավորումն անհրաժեշտ է ոչ միայն իրավապաշտպան, այլև ռազմավարական տեսանկյունից՝ որպես Հայաստանի կայունության և ժողովրդավարական զարգացման պայման:

Մեթոդաբանություն

Հետազոտության նպատակ

Հետազոտությունն իրականացվել է ՀՀ-ում տարբեր խոցելի խմբերի շրջանում՝ խտրականության, սոցիալական մարգինալացման և մարդու իրավունքների ոտնահարման խնդիրների բացահայտման նպատակով: Իրականացվել է 4 զուգահեռ, սակայն թիրախային խմբերին հարմարեցված միանման հետազոտություն, որոնց շրջանակում դիտարկվել են խոցելիության տարբեր շերտեր ու դրսևորումներ: Թիրախ խմբերն են՝ (ա) սեռական բռնություն վերապրած կանայք, (բ) տրանսգենդեր կանայք և սեքս-աշխատողներ, (գ) Արցախից տեղահանված կանայք և (դ) կին իրավապաշտպաններ և մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող լրագրողներ:

Հետազոտության խնդիրներ

Հետազոտության հիմնական խնդիրները վերաբերել են իրար փոխկապակցված, բայց միևնույն ժամանակ որպես ինքնուրույն կետ դիտարկելի հիմնահարցերի:

1. Վերհանել ՀՀ-ում տարբեր խոցելի խմբերի սոցիալ-տնտեսական կարգավիճակը, մասնագիտացումը, զբաղվածության ձևերը, բնակարանային պայմանները:
2. Դիտարկել ինքնագնահատականի, ինքնաընկալման և հոգեսոցիալական վիճակի առանձնահատկությունները:
3. Վերլուծել ինքնադրսևորման, մասնակցային ներուժի և կարողությունների զարգացման հնարավորությունները՝ հանրային, քաղաքական, սոցիալ-մշակութային դաշտերում:
4. Հասկանալ սոցիալական վստահության մակարդակները պետական մարմինների, իրավապահ համակարգի և հասարակական կազմակերպությունների նկատմամբ:
5. Ուսումնասիրել խտրականության փորձառությունները՝ ներառյալ լեզվական, գենդերային, սեռական կողմնորոշման, սոցիալական կարգավիճակի հիմքով խտրականության ձևերը:
6. Հետազոտել ապագայի վերաբերյալ պատկերացումները՝ թե անձնական, թե հանրային և քաղաքական զարգացման համատեքստում:

Հետազոտության խնդիրներ

Հետազոտությունն իրականացվել է խառը մեթոդների (mixed methods) կիրառմամբ՝ համադրելով քանակական և որակական տվյալների հավաքագրումն ու վերլուծությունը:

- Քանակական մեթոդ – իրականացվել է ստանդարտացված հարցաթերթի միջոցով՝ ներառելով հիմնականում փակ հարցեր և միավոր բաց հարցեր:
- Որակական մեթոդ – տվյալների խորացված վերլուծության համար իրականացվել են ֆոկուս խմբային քննարկումներ՝ նպատակաուղղված տվյալների մեկնաբանությանն ու համատեքստայնացմանը:

Յուրաքանչյուր թիրախային խմբի շրջանակում նախատեսված էր իրականացնել՝
- 50 քանակական հարցում,
- 1-2 ֆոկուս խմբային քննարկում (6-8 մասնակցով):

Արդյունքում քանակական հարցմանը մասնակցել է 223 հարցվող և իրականացվել է 8 ֆոկուս խմբային քննարկում (ՖԽՔ) հետևյալ համամասնությամբ՝

Աղյուսակ 1. Հարցվածների և ՖԽՔ մասնակիցների բաշխումն ըստ թիրախ խմբերի

Թիրախային խումբ	*Հարցում*	*ՖԽՔ*	*Մասնակից*
Տրանս կանայք և սեքս աշխատող ներ	*50*	*4*	*40*
Իրավապաշտպանների համայնք	*50*	*1*	*5*
Սեռական բռնություն վերապրած կանայք	*54*	*1*	*5*
Արցախից տեղահանված կանայք	*69*	*2*	*12*
Ընդամենը	*223*	*8*	*62*

Տվյալների հավաքագրման մեթոդներ

Հաշվի առնելով յուրաքանչյուր թիրախ խմբի անվտանգության, տեխնիկական հասանելիության և վստահության մակարդակը՝ քանակական հարցաթերթերի լրացման համար հնարավոր է եղել ընտրել համապատասխան մոտեցումը՝

- Օնլայն հարցաթերթի ձևաչափ – Google Forms հարթակում ձևավորված հարցաթերթի տարածում շահառուների շրջանում՝ էլ. փոստով կամ վստահելի ուղիով:
- Օֆլայն տվյալների հավաքագրում – հարցաթերթի լրացում կազմակերպության տարածքում՝ անհատական կամ խմբային ձևաչափով:
- Ինքնալրացման մեթոդ – կազմակերպությունում հասանելի թողնված տպագիր հարցաթերթերի ինքնուրույն լրացում և անանուն պահում արկղերում:

Արդյունքում մեկ թիրախ խմբի համար կիրառվել է օնլայն հարցաթերթի լրացման մոտեցումը, մյուս երեք խմբերի համար՝ դեմառդեմ հարցաթերթի լրացման մոտեցումը: Ֆոկուս խմբային քննարկումներն իրականացվել են օֆլայն ձևաչափով՝ համապատասխան կազմակերպության տարածքում՝ ապահովելով անվտանգություն, ապահովության զգացում և տվյալների նույնականացման անհնարինություն:

Հետազոտության տվյալների հավաքագրումն իրականացվել է 2025 թվականի հուլիս-սեպտեմբեր ամիսների ընթացքում գործընկեր կազմակերպությունների կողմից, տվյալները վերլուծվել են հոկտեմբեր-դեկտեմբեր ժամանակահատվածում:

Էթիկական և ապահովության նկատառումներ

Բոլոր մասնակիցները նախապես տեղեկացվել են հետազոտության նպատակների, տվյալների օգտագործման և գաղտնիության պայմանների մասին: Բոլոր հարցումներն ու ֆոկուս խմբային քննարկումներն իրականացվել են անանուն, անհրաժեշտության դեպքում՝ չտեսաձայնագրման, վիդեոն անջատված ձևաչափով, հատկապես խիստ խոցելի խմբերի դեպքում: Հետազոտության ընթացքում մասնակիցների անվտանգությունն ու հուզական բարեկեցությունը եղել են գերակայող սկզբունքներ:

Գործիքակազմ

Քանակական հարցաթերթ – կազմված է հիմնականում փակ հարցերից՝ մեկ կամ բազմակի ընտրությամբ տարբերակներով, ինչպես նաև՝ բաց հարցերից՝ մեկնաբանությունների համար: Քանակական հարցաթերթը մի փոքր տարբերվել է տրանս կանանց և սեքս աշխատողների խմբի համար՝ ներառելով նույնատիպ հարցերի մեջ որոշ հավելյալ տարբերակներ, որոնք հատուկ են այս խմբի համար: Մեկ հավելյալ հարց ներառված է եղել իրավապաշտպանների հարցաթերթում, որը կիրառելի չէ մյուս խմբերի համար:

Ֆոկուս խմբային քննարկման ուղեցույցը եղել է նախապես մշակված հարցերով՝ հարմարեցման հնարավորությամբ՝ ըստ քանակական փուլում ի հայտ եկած հիմնական դիտարկումների, ինչպես նաև՝ ըստ կոնկրետ թիրախ խմբի առանձնահատկությունների:

Տվյալների մշակում

- Քանակական հարցաթերթ – քանակական տվյալների վերլուծության ստանդարտ մոտեցումներով՝ թիրախ խմբերի միջև համեմատությունների, նմանությունների, տարբերությունների ու ընդհանուր միտումների դուրսբերմամբ:
- Ֆոկուս խմբային քննարկումներ – քննարկումները սղագրվել են իրականացնողի կողմից: Սղագրությունները մանրամասն ուսումնասիրվել են, դուրս են բերվել ընդհանուր միտումներ ու կատեգորիաներ, որոնք էլ խմբավորվել ու ներկայացվել են, այդ թվում՝ քանակական տվյալների հետ համադրության ու համատեղության սկզբունքի համաձայն:

Հիմնական արդյունքներ

Բաժին 1. Սոցիալ-տնտեսական իրավիճակ

Խոցելի խմբերի սոցիալ–տնտեսական վիճակը մարդու իրավունքների իրացման ամենազգայուն ցուցանիշներից մեկն է: Տնտեսական հնարավորությունների սահմանափակությունը, սոցիալական պաշտպանության համակարգի թերի հասցեագրումը և պետական աջակցության անկայունությունը խոչընդոտում են խոցելի խմբերի սոցիալական ներառմանը՝ վերածելով անհավասարությունը կայուն կառուցվածքային խնդրի (UNDP, 2023):

Հայաստանում սոցիալ–տնտեսական խոցելիությունը պայմանավորված է միաժամանակ մի քանի գործոններով՝ պատերազմով և տեղահանությամբ պայմանավորված բնակչության տեղաշարժերով, աշխատաշուկայի անկայունությամբ, գների աճով և սոցիալական ծառայությունների անհամաչափ տարածմամբ: ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի և Համաշխարհային բանկի վերջին վերլուծությունների համաձայն՝ բնակչության մոտ 25–27 տոկոսը գտնվում է աղքատության շեմին, իսկ նոր տեղահանված ընտանիքներից յուրաքանչյուր երկրորդը հայտարարում է եկամտի էական անկման մասին (World Bank, 2024; UNDP Armenia, 2023): Ավելին, Հայաստանի վիճակագրական կոմիտեի տվյալներով՝ սոցիալական օգնություն ստացող ընտանիքների 63%-ը գլխավորում են կանայք, իսկ գյուղական համայնքներում աղքատության մակարդակը շարունակում է մնալ առնվազն երկու անգամ բարձր, քան քաղաքային բնակավայրերում (ՀՀ Վիճակագրական կոմիտե, 2023):

Այս պայմաններում առավել խոցելի են դառնում այն խմբերը, որոնց եկամտի աղբյուրներն անկայուն են, իսկ տնտեսական ինքնաբավության հնարավորությունները՝ սահմանափակ: Հիշատակված խմբերի մեջ նշում են հատկապես տեղահանված անձանց, միայնակ մայրերին, հաշմանդամություն ունեցող մարդկանց, ԼԳԲՏՔ+ անձանց, ինչպես նաև՝ սահմանամերձ և սոցիալապես մեկուսացված համայնքների բնակիչներին: Այս խմբերի տնտեսական խոցելիությունը հաճախ ուղեկցվում է նաև սոցիալական մարգինալացմամբ՝ աշխատանքի շուկայում խտրական վերաբերմունքով, բնակարանային ապահովության խնդիրներով և պետական ծառայությունների մատչելիության սահմանափակումներով (UN Women, 2022):

Սոցիալ–տնտեսական վիճակի վերլուծությունը թույլ է տալիս գնահատել ոչ միայն նյութական ապահովվածությունը, այլև այն կառուցվածքային գործոնները, որոնք որոշում են խոցելի խմբերի սոցիալական ներառման կամ դուրսմղման աստիճանը: Ինչպես փաստում է Եվրոպայի խորհրդի սոցիալական իրավունքների կոմիտեն (Council of Europe, 2021), տնտեսական իրավունքների իրացումն անմիջականորեն պայմանավորում է մյուս իրավունքների իրագործումը՝ կրթության, առողջության և արժանապատիվ աշխատանքի: Հետևաբար, սոցիալ–տնտեսական անհավասարությունները պետք է դիտարկել ոչ միայն որպես սոցիալական խնդիր, այլ նաև որպես մարդու իրավունքների իրացման խոչընդոտ:

1.1. Տնտեսական վիճակի սուբյեկտիվ գնահատում

Հիմնվելով վերոնշյալի վրա՝ սույն հետազոտության շրջանակում նպատակ է եղել դուրս բերելու ոչ այնքան վիճակագրական տվյալներ, այլ կոնկրետ խոցելի խմբերի՝ իրենց սոցիալ-տնտեսական իրավիճակի մասին պատկերացումները և գնահատականը: Այսպիսով, հետազոտության արդյունքները թույլ են տալիս պնդել, որ իրավապաշտպան կանայք և սեռական բռնություն վերապրած կանայք իրենց ընթացիկ տնտեսական վիճակը գնահատում են միջինից բարձր. հարցվողների համամասնական մեծամասնության կողմից նշվել են «միջին» և «լավ» տարբերակները (տե՛ս Աղյուսակ 2): Սա ցույց է տալիս, որ չնայած խոցելիության տարբեր ռիսկերին՝ նրանք ունեն որոշակի եկամուտի աղբյուր կամ ընկալվող վերահսկելիություն իրենց տնտեսական պայմանների նկատմամբ: Իսկ Արցախից տեղահանված կանայք և տրանս կանայք ու սեքս աշխատողներն ավելի հակված են գնահատելու իրենց սոցիալ-տնտեսական վիճակը միջինից ցածր, քանի որ գերակշռող պատասխանները տատանվել են «միջին» և «վատ» տարբերակների շուրջ (տես Աղյուսակ 2):

Եթե փորձենք տեսնել թիրախ խմբերի ներսում տնտեսական վիճակի բաշխվածության տատանումները, ապա կարելի է նկատել հետևյալ օրինաչափությունը. Արցախից տեղահանված կանանց խմբի ներսում 31.8%-ը (7.2% «շատ վատ» և 24.6% «վատ») տնտեսությունը նկարագրում է բացասական, ինչն ակնհայտորեն կապվում է տեղահանության՝ բնակարանային պայմանների, կայուն աշխատանքի կորստի, դրամահոսքերի անկայունության հետ: Սոցիալ-տնտեսական խոցելիությունը սուր է նաև տրանս կանանց և սեքս աշխատողների խմբի դինամիկայում, քանի որ վերջիններիս 42% գնահատել է իր տնտեսական վիճակը որպես «վատ» կամ «շատ վատ», և միայն 14%-ն է ընկալել այն որպես «լավ», ինչը նույնպես կանխատեսելի է և համադրելի որպես համակարգային տնտեսական դուրսմղվածություն (ապահով աշխատանքից, իրավական պաշտպանվածությունից, սոցիալական ընդունվածությունից):

Նկատելի է, որ կին իրավապաշտպանների խմբում 48%-ը գնահատել է իր տնտեսական վիճակը որպես «լավ», իսկ ծայրահեղ՝ «շատ վատ» կամ «շատ լավ» տարբերակներն ընդհանրապես չեն նշվել: Այս միտումը խոսում է համեմատաբար կայուն եկամուտ, կանխատեսելի աշխատավարձ, կապիտալիզացվող մասնագիտական հմտություններ և աշխատանքի շուկայի նկատմամբ վստահություն՝ ի տարբերություն մյուս խմբերի, որոնք ապավինում են ոչ ֆորմալ տնտեսությանը կամ օժանդակությանը:

Աղյուսակ 2. Տնտեսական վիճակի սուբյեկտիվ գնահատականը՝ ըստ մարգինալ, խոցելի խմբերի

Հարց - Ինչպե՞ս եք գնահատում Ձեր ներկայիս տնտեսական վիճակը				
	ԻԿ (2) n=50	*ԱՏ n=69*	*ՍԲՎ n=54*	*ՏԿՍԱ n=50*
Շատ վատ	*0%*	*7%*	*2%*	*12%*
Վատ	*12%*	*25%*	*13%*	*30%*
Միջին	*40%*	*55%*	*44%*	*36%*
Լավ	*48%*	*12%*	*35%*	*14%*
Շատ լավ	*0%*	*1%*	*6%*	*8%*
Ընդամենը	*50*	*69*	*54*	*50*

Ի տարբերություն քննարկված խմբերի՝ սեռական բռնություն վերապրած կանանց խմբում տնտեսական վիճակի մասին պատկերացումները տատանվում են: Հաղորդվել է թե՛ ծանր տնտեսական ճնշում (մոտ 15% «վատ/շատ վատ»), թե՛ համեմատաբար կայուն վիճակ, քանի որ մասնակիցների զգալի մասը գնահատել է իրենց տնտեսական վիճակը որպես «լավ» (35.2%) կամ նույնիսկ «շատ լավ» (5.6%): Այս ցուցանիշը կարող է մեկնաբանվել նրանով, որ սեռական բռնության կարող է ենթարկվել ցանկացած անձ՝ անկախ իր տնտեսական վիճակից, մյուս կողմից՝ նույն խոցելի խմբում կարող են լինել արդեն իսկ բռնության ցիկլը կոտրած և համեմատաբար կայունացած կանայք (օրինակ՝ նրանք, ովքեր ստացել են աջակցություն, ապաստարաններից դուրս են եկել և ունեն ստաբիլ ու անկախ եկամուտ), և կանայք, ովքեր շարունակում են ապրել նախկին միջավայրում ու պայմաններում՝ նույն ֆինանսական ծանր իրավիճակում:

2.Աղյուսակում ներկայացման պարզության համար խոցելի խմբերին տրվել են կրճատ անվանումներ՝

- ԻԿ՝ Իրավապաշտպան կանայք
- ԱՏ՝ Արցախից տեղահանված կանայք
- ՍԲՎ՝ Սեռական բռնություն վերապրած կանայք
- ՏԿՍԱ՝ Տրանս կանայք և սեքս աշխատողներ

1.2. Տնտեսական վիճակի փոփոխություն

Տնտեսական վիճակի սուբյեկտիվ գնահատմանը զուգահեռ դիտարկվել են նաև խոցելի խմբերի պատկերացումներն իրենց տնտեսական վիճակի փոփոխության վերաբերյալ վերջին երեք տարիների կտրվածքով (տե՛ս Աղյուսակ 3): Այս ցուցանիշն ուղիղ համեմատական է տնտեսական վիճակի գնահատականի հետ, քանի որ այստեղ նույնպես խոցելիության տեսանկյունից առաջին տեղում են Արցախից տեղահանված կանայք: Վերջիններիս 62%-ի գնահատմամբ իրենց տնտեսական վիճակը վատացել է վերջին երեք տարիներին, իսկ ևս 13%-ի հաղորդմամբ՝ այն «կտրականապես վատթարացել է»: Սա նշանակում է, որ այս խմբի մասնակիցների երեք քառորդից ավելին փաստում է անկում: Այս ցուցանիշը կանխատեսելի ու բացատրելի է նույն բռնի տեղահանման, եկամտի և ակտիվների կորստի, բնակարանային և սոցիալ-իրավական անորոշության իրականությամբ պայմանավորված: Էական է փաստել, որ այս խմբի տնտեսական անկումը ընթացել է ոչ թե դանդաղ, այլ կտրուկ և կառուցվածքային ճանապարհով:

Աղյուսակ 3. Տնտեսական կարգավիճակի փոփոխությունը վերջին երեք տարում՝ ըստ մարգինալ, խոցելի խմբերի

Հարց - Արդյո՞ք Ձեր տնտեսական կարգավիճակը փոփոխվել է վերջին երեք տարիների ընթացքում				
	ԻԿ n=50	*ԱՏ n=69*	*ՍԲՎ n=54*	*ՏԿՍԱ n=50*
Էականորեն բարելավվել է	*8%*	*2%*	*28%*	*22%*
Բարելավվել է որոշ չափով	*28%*	*4%*	*37%*	*44%*
Նույնն է մնացել	*38%*	*19%*	*24%*	*14%*
Վատացել է	*24%*	*62%*	*5.6%*	*12%*
Կտրականապես վատթարացել է	*2%*	*13%*	*5.6%*	*8%*
Ընդամենը	*100%*	*100%*	*100%*	*100%*

Տնտեսական վիճակի անկման երկրորդ հորիզոնականում կարող են դիտարկվել կին իրավապաշտպանները, որոնց ցուցանիշները թեպետև ավելի մեղմ են, քան նախորդ խմբինը, սակայն մյուս երկու խմբերի համեմատ վերջին երեք տարիների ընթացքում տնտեսական վիճակի վատթարացում հաղորդվել է ավելի մեծ տոկոս մասնակիցների կողմից: Այսպիսով՝ մասնակից կին իրավապաշտպանների 24%-ը նշել է, որ իրենց տնտեսական վիճակը «վատացել է», 38%-ի դեպքում «մնացել է նույնը», իսկ 28%-ի՝ «որոշ չափով բարելավվել է»: Տնտեսական վիճակի այսպիսի բաշխվածությունը նշանակում է, որ սոցիալ-տնտեսական դաշտը նրանց համար խիստ փոփոխական է. քաղաքացիական հասարակության ֆինանսավորման անկայունությունը, դոնորական հոսքերի փոփոխականությունը և անհանդուրժող միջավայրով պայմանավորված ռիսկերը կարող են բերել տնտեսական կայունության ինչպես անկման, այնպես էլ որոշ դեպքերում՝ բարելավման:

Ըստ խոցելիության՝ հաջորդ, բայց նախորդ խմբերից դրական դինամիկայով ակնհայտ տարբերվողը տրանս կանանց և սեքս աշխատողների խումբն է: Այս խմբում պատկերը երկբևեռ է, քանի որ հարցվածների 22%-ը նշել է տնտեսական վիճակի «էական», իսկ 44%-ը՝ «որոշ չափով» բարելավում, այսինքն՝ շուրջ 2/3-ը փաստում է առաջընթաց: Սակայն միևնույն ժամանակ կա խմբի մի հատված, որը նշում է վիճակի «վատացում» (12%) կամ «կտրուկ վատթարացում» (8%): Հետաքրքրական է, որ այս ցուցանիշները հակադարձ համեմատական են տնտեսական վիճակին տրված սկզբնական գնահատականին, քանի որ ստացվում է, որ ներկայումս տնտեսական վիճակը գնահատվում է միջին և ցածր, մինչդեռ վերջին տարիների փոփոխությունը դրական է: Սա կարող է պայմանավորված լինել նրանով, որ մինչ այդ տնտեսական վիճակը էլ ավելի վատ է եղել, քան ներկայումս և նույնիսկ դրական դինամիկայով հանդերձ շարունակում է մնալ միջինից ցածր:

Ինչպես տնտեսական վիճակի ցուցիչով, այնպես էլ վերջին տարիներին գրանցված փոփոխությունների տեսանկյունից ամենալավատեսական պատկերը գրանցվել է սեռական բռնություն վերապրած կանանց խմբում: Համաձայն ստացված տվյալների՝ այս խմբի հարցվածների 27.8%-ը արձանագրել է «էական բարելավում», 37%-ը՝ «որոշ չափով բարելավում»: Այսինքն՝ գրեթե 65%-ը զգում է բարելավում, և միայն մոտ 11%-ը նշում է վատացում կամ կտրուկ վատացում: Ինչպես արդեն քննարկվել էր, սա կարող է պայմանավորված լինել աջակցման ծառայությունների արդյունավետությամբ և դրանց շնորհիվ այս խմբի կանանց համար ֆինանսական կայունության ապահովման հնարավորությունների ստեղծմամբ:

Հատկանշական է, որ հարցված բոլոր խմբերում նկատվում է լավատեսական կանխատեսում ապագայում իրենց տնտեսական վիճակի փոփոխության վերաբերյալ (*տե՛ս Աղյուսակ 4*): Այսպես, լավատեսությամբ առաջին հորիզոնականում են տրանս կանայք և սեքս աշխատողները, ում խմբում մոտակա երեք տարում տնտեսական կարգավիճակի լավացում կանխատեսել է

հարցվածների 76%-ը: Հաջորդը սեռական բռնություն վերապրած կանայք են՝ 74% լավատեսությամբ, իսկ երրորդ հորիզոնականում են Արցախից տեղահանված կանայք՝ 68%: Հատկանշական է, որ ի հեճուկս վերջին տարիներում ունեցած կորուստների և ներկայումս ծանր տնտեսական պայմաններ՝ տեղահանված կանայք այնուամենայնիվ դրական են նայում դեպի ապագա և լավատեսական միտում են նշում իրենց տնտեսական կարգավիճակի հետ կապված: Առավել վատատեսական պատկեր նկատվել է միայն կին իրավապաշտպանների խմբում, որտեղ հարցվածների մոտ մեկ երրորդը (26%) նշել է, որ վիճակը կվատանա:

Աղյուսակ 4. Տնտեսական կարգավիճակի փոփոխության կանխատեսումը մոտակա երեք տարվա կտրվածքով՝ ըստ մարգինալ, խոցելի խմբերի

Հարց - Կարծո՞ւմ եք արդյոք, որ Ձեր տնտեսական կարգավիճակը փոփոխություններ կկրի մոտակա երեք տարիների ընթացքում				
	ԻԿ n=50	*ԱՏ n=69*	*ՍԲՎ n=54*	*ՏԿՍԱ n=50*
Այո, այն կլավանա	*38%*	*68%*	*74%*	*76%*
Ոչ, կմնա նույնը	*36%*	*32%*	*19%*	*20%*
Այո, այն կվատանա	*26%*	*13%*	*6%*	*4%*
Ընդամենը	*100%*	*100%*	*100%*	*100%*

Մոտակա տարիներին տնտեսական վիճակի փոփոխականության վերաբերյալ հարցվածների պատասխանների խմբավորման արդյունքում հնարավոր է եղել դուրս բերել այն գործոնները, որոնք կարող են ազդել ինչպես դրական, այնպես էլ բացասական ուղղությամբ: Այսպիսով, հարցվածների ընկալմամբ՝ տնտեսական վիճակի փոփոխությունը կախված է միաժամանակ մի շարք փոխկապակցված գործոններից՝ սկսած անձնական ջանքերից մինչև պետական քաղաքականություն, սոցիալական միջավայր և միջազգային գործընթացներ:

Դրական փոփոխությանը նպաստող գործոններն են՝

- աշխատանքի և կայուն եկամտի ձեռքբերումը,
- կրթությունը և հմտությունների զարգացումը,
- հոգեբանական կայունությունն ու համայնքային աջակցությունը,
- սեփական բնակարանի կամ ֆիզիկական անվտանգության ապահովումը:

Բացասական ազդեցություն ունեն՝

- խտրականությունը և բացառումը աշխատաշուկայում,
- բնակարանային բարձր գները և սոցիալական աջակցության սահմանափակությունը,
- միջազգային ֆինանսավորման անկայունությունը (հատկապես ՀԿ ոլորտում),
- ընդհանուր քաղաքական և տնտեսական անորոշությունը:

Այսպիսով, վերոնշյալ գործոնները դիտարկվել են խմբային պատկանելության, սոցիալական վիճակի և ինքնության առանձնահատկությունների պրիզմայով, որի հիման վրա արձանագրվել է ինչպես ընդհանուր, այնպես էլ առանձին խմբերին բնորոշ դինամիկա:

Գրեթե բոլոր խմբերի ներկայացուցիչները նշում են, որ տնտեսական վիճակի բարելավման հիմնական գործոնը աշխատանքի ձեռքբերումն ու կայուն զբաղվածությունն է: Այս պնդումը առանձնանում է որպես ամենահաճախ կրկնվող և առաջնային լավատեսության աղբյուր: Հարցվածների արձագանքները վկայում են, որ մասնակիցների մեծամասնությունը իր տնտեսական ապագան կապում է ինքնուրույնության և աշխատանքի միջոցով արժանապատիվ եկամուտ ապահովելու հնարավորության հետ: Միաժամանակ ընդգծվում է, որ ոչ միայն աշխատանքի առկայությունն է կարևոր, այլև դրա կայունությունը, պայմանների արդարությունը և աշխատավարձի համարժեքությունը:

Այս տեսանկյունից աշխատաշուկայի ոչ ներառական բնույթը շարունակում է դիտվել որպես խոչընդոտ. մասնավորապես՝ տրանս կանանց և սեքս աշխատողների խմբի կողմից բազմիցս հիշատակվել են խտրականության հիմքով աշխատանքի մերժման կամ աշխատանքից հեռացվելու դեպքեր: Այս խմբի համար տնտեսական բարելավման հույսը հաճախ կապված է ոչ թե տեղական շուկայի, այլ արտագաղթի կամ օնլայն աշխատանքի հնարավորությունների հետ:

Շատ հարցվածներ տնտեսական բարելավումը կապում են կրթության և վերապատրաստման միջոցով մասնագիտական աճի հետ: Համաձայն այս տեսակետների՝ նոր հմտությունների ձեռքբերումը հնարավորություն կտա ավելի լավ աշխատանք գտնելու կամ եկամուտը բարձրացնելու: Խոցելի խմբերի կողմից կրթությունն ընկալվում է որպես տնտեսական հզորացման հիմնական միջոց, իսկ ինքնազարգացումը՝ որպես կայունացման ուղի:

Տնտեսական բարեկեցության կարևոր գործոն է նաև բնակարանային ապահովությունը: Հարցվածներից շատերը նշում են, որ ներկայիս անշարժ գույքի և վարձերի գների բարձրացումը խորը ազդեցություն ունի իրենց տնտեսական վիճակի վրա: Սա հատկապես խնդրահարույց է տեղահանված կանանց խմբի համար, և հենց դրանով է պայմանավորված, որ հարցվածների կողմից նշվում է մոտ ապագայում տնտեսական փոփոխությունների վատթարացման կանխատեսում: Բնակարանային հարցի լուծումը ոչ միայն տնտեսական, այլև

հոգեբանական կայունության բաղադրիչ է: Բացի այդ՝ մի շարք պատասխաններ ընդգծում են պետական աջակցության և տնտեսական հզորացման ծրագրային օգնության կարևորությունը, օրինակ, բնակարանի ձեռքբերման կամ աշխատանքի խթանման միջոցառումների շնորհիվ:

Զգալի թվով հարցվողների համար տնտեսական վիճակի բարելավումը կապվում է արտագաղթի և «նոր միջավայրում նոր սկզբի» գաղափարի հետ: Սա հատկապես նկատվում է հարցված տրանս կանանց և սեքս աշխատողների շրջանում: Հարցման արդյունքները վկայում են, որ որոշ խմբերի համար Հայաստանի ներկա սոցիալ–տնտեսական և հասարակական միջավայրը դիտվում է որպես սահմանափակող, և արտագաղթը ընկալվում է որպես ինքնապաշտպանական ռազմավարություն:

Տնտեսական բարեկեցության վրա ազդեցություն ունեն ոչ միայն օբյեկտիվ գործոնները, այլ նաև հասարակական վերաբերմունքը և ինքնընդունման մակարդակը: Հարցված տրանս կանանց և սեքս աշխատողների խմբում նշում են որ հոգեբանական կայունությունը և համայնքի աջակցությունը նպաստել են իրենց ինքնավստահության աճին, ինչն էլ իր հերթին ավելացրել է աշխատելու և առաջ շարժվելու ձգտումը: Այսպիսով, հարցվածների պնդումները հավաստում են, որ սոցիալական ներառումը և հոգեբանական աջակցությունը տնտեսական կայունության անուղղակի, բայց էական գործոններ են: Ազատվելով խարանման և ինքնամերժման ճնշող ազդեցությունից՝ անհատը կրկին վերադառնում է ակտիվ աշխատանքի, կրթության և ստեղծարարության դաշտ:

Բացի անձնական ու սոցիալական փոփոխություններից՝ հարցվածների մի մասը շեշտում է նաև քաղաքական և մակրոտնտեսական գործոնների ազդեցությունը՝ ներառյալ պետական քաղաքականության անկայունությունը, դրամավարկային ճնշումները, միջազգային ֆինանսավորման կրճատումները և պատերազմի հետևանքները:

Դրական և բացասական դինամիկայի վրա ազդող գործոնները հասավարապես կարող են ազդել նաև իրավիճակի՝ նույնը մնալու հանգամանքի վրա: Ընդհանուր պատկերում «նույնը կմնա» կանխատեսումը ձևավորվում է բնակվարձի թանկության, ինֆլյացիայի, աշխատաշուկայում առկա խտրականության, քաղաքական անկայունության և ցածր աշխատավարձերի համադրությամբ: Խմբային կտրվածքում գործոնների ծանրաբեռնվածությունը տարբեր է: Օրինակ՝ տրանս կանանց և սեք աշխատողների համար հիմնական գործոնը աշխատաշուկայում առկա խտրականությունն է և ֆիզիկական ու հոգեբանական անվտանգությունը, տեղահանված կանանց համար՝ բնակարանային հարցը, աջակցման ծրագրերում ներառվելու դժվարությունները, ինչպես նաև մանկահասակ երեխա ունեցող մայրերի պարագայում՝ չվարձատրվող տնային աշխատանքի առկախվածությունն և վարձատրվող աշխատանք գտնելու անհնարինությունը: Կին իրավապաշտպանների, այսինքն՝ ՔՀԿ ոլորտի ներկայացուցիչների դեպքում

կայունության գործոնը ֆինանսավորման և քաղաքական ռիսկերն են: Կարևոր է նշել, որ թեև տնտեսական վիճակի նույն մակարդակում մնալը ըստ էության կարող է մեկնաբանվել որպես կայունություն, սակայն միջին և ցածր տնտեսական կարգավիճակի պարագայում այն ավելի շատ ունի բացասական ենթատեքստ՝ բնորոշվելով զարգացման հնարավորությունների սահմանափակմամբ և անորոշությամբ:

1.3. Խոցելիության դասակարգում՝ ըստ սոցիալ տնտեսական կարգավիճակի

Տվյալների համադրությունը թույլ է տալիս տարբերակել խոցելիության չորս աստիճան՝ կախված եկամտի կայունությունից, զբաղվածության բնույթից, բնակարանային ապահովվածությունից և սոցիալական կապիտալից:

1. Ցածր խոցելիություն (բարձր սոցիալ–տնտեսական կայունություն)
Այս խմբի մեջ կարելի է դասակարգել կին իրավապաշտպաններին, քանի որ նրանք ունեն առավել կանխատեսելի և կայուն եկամտային հոսքեր՝ պայմանավորված մասնագիտական զբաղվածությամբ, փորձառությամբ և կապիտալիզացվող հմտություններով: Նրանց աշխատանքի բնույթը թույլ է տալիս գործել կազմակերպված դաշտում՝ ՀԿ/ՔՀԿ ոլորտներում, ունենալ մրցակցային հմտություններ և մասնագիտական ինքնավարություն: Սակայն կայունությունը հարաբերական է՝ կախված դոնորական հոսքերից, քաղաքական միջավայրից և ծրագրային շարունակականությունից: Այս խումբը գտնվում է համեմատաբար առավել ապահով դիրքում, բայց ենթակա է արտաքին ազդեցությունների՝ ֆինանսավորման և քաղաքական փոփոխությունների տեսանկյունից:

2. Միջին խոցելիություն (միջին սոցիալ–տնտեսական կայունություն)
Այս խմբում ներառված են սեռական բռնություն վերապրած կանայք և այստեղ նկատվում է երկբևեռ պատկեր. մի մասը շարունակում է ապրել ֆինանսական դժվարությունների պայմաններում, իսկ մյուսը աջակցման ծրագրերի շնորհիվ հասել է որոշակի կայունության և տնտեսական ինքնուրույնության: Նրանց եկամուտները և զբաղվածությունը հաճախ անկայուն են, բայց առկա է վերականգնման միտում՝ աշխատանքի, վերապատրաստման և համայնքային աջակցության շնորհիվ: Այս խումբը գտնվում է միջանկյալ դիրքում՝ անցումային վիճակում՝ խոցելիությունից դեպի կայունություն:

3. Բարձր խոցելիություն (անկայուն սոցիալ–տնտեսական վիճակ)
Տեղահանված կանայք բախվում են համակարգային սոցիալ–տնտեսական խոցելիության՝ եկամտի, աշխատանքի և բնակարանային անվտանգության հիմնախնդրի համակցությամբ: Նրանց մեծ մասը ապավինում է ժամանակավոր օժանդակությանը կամ պետական աջակցության սահմանափակ միջոցներին,

մինչդեռ աշխատաշուկայում ինտեգրումը դժվար է՝ հմտությունների չհամապատասխանության, խնամքի բեռի և մշտական բնակության վայրի անորոշության պատճառով: Այս խումբը գտնվում է տնտեսական անկայունության և կախվածության բարձր ռիսկի գոտում՝ ապրելով գոյատևման, ոչ թե զարգացման ռեժիմում:

4. Շատ բարձր խոցելիություն (կառուցվածքային դուրսմղվածություն)
Տրանս կանայք և սեքս աշխատողները համարվում են սոցիալ–տնտեսական առումով ամենախոցելին: Խոցելիությունն այստեղ ոչ միայն եկամտային է, այլև կառուցվածքային՝ պայմանավորված խտրականությամբ, մեկուսացվածությամբ ինչպես աշխատաշուկայում, այնպես էլ հասարակական կյանքում: Նրանց զբաղվածությունը հիմնականում ոչ ֆորմալ է կամ ռիսկային բնույթի (սեքս–աշխատանք, օնլայն ծառայություններ), իսկ բնակարանային ապահովվածությունը՝ անկայուն: Հասարակական մերժման, իրավական անպաշտպանության և ֆիզիկական անվտանգության սպառնալիքների համադրությունը այս խմբին տեղափոխում է խոցելիության ամենաբարձր աստիճան՝ երբ տնտեսական, սոցիալական և հոգեբանական ճնշումները փոխադարձաբար ամրապնդում են միմյանց:

Խոցելիության այս դասակարգումը հաստատում է, որ սոցիալ–տնտեսական անվտանգությունը անհնար է դիտարկել մեկ գործոնի՝ եկամտի կամ աշխատանքի շրջանակում. այն բազմաշերտ համակարգ է, որտեղ փոխազդում են տնտեսական, սոցիալական, քաղաքական և արժեհամակարգային բաղադրիչները:

Բաժին 2. Ինքնագնահատական և ինքնընկալում

Ինքնագնահատականը և ինքնընկալումը անհատի ներքին աշխարհում ձևավորվող սոցիալ–հոգեբանական կառուցվածքներ են, որոնք ուղղակիորեն պայմանավորում են նրա վարքագիծը, սոցիալական փոխհարաբերությունները և կյանքի որակը: Հոգեբանական տեսությունների համաձայն՝ ինքնագնահատականը արտահայտում է այն, թե ինչպես է մարդը գնահատում սեփական արժեքը, կարողությունները և արժանիքները (Rosenberg, 1965), իսկ ինքնընկալումը վերաբերում է նրան, թե ինչպես է մարդը պատկերացնում իր «ես»-ը՝ անձնական և սոցիալական նույնականացման մակարդակներում (Mead, 1934):

Այս երկու հասկացությունները սերտորեն կապված են ոչ միայն անհատի ներքին հուզական վիճակի, այլև արտաքին սոցիալական միջավայրի հետ: Սոցիալական ճանաչման տեսությունը (Honneth, 1995) փաստում է, որ ինքնագնահատականի հիմքում ընկած է ոչ թե մեկուսացված ինքնավերլուծությունը, այլ այն ճանաչումն ու վերաբերմունքը, որ մարդը ստանում է ուրիշներից: Այսինքն՝ անհատը կարող է իրեն ընկալել որպես արժանի և ուժեղ, միայն եթե այդ ընկալումը հաստատվում է սոցիալական միջավայրում՝ ընտանիքում, աշխատանքում, համայնքում կամ հանրային դիսկուրսում:

Խոցելի խմբերի պարագայում, օրինակ, տեղահանված անձանց, կանանց, ԼԳԲՏԻՔ+ համայնքի ներկայացուցիչների կամ հաշմանդամություն ունեցող անձանց դեպքում, ինքնագնահատականն ու ինքնընկալումը ձևավորվում են ոչ թե չեզոք պայմաններում, այլ խիստ ազդված լինելով սոցիալական մարգինալացման, խարանման և խտրական վերաբերմունքի փորձառություններից: Հասարակության կողմից բացասական վերաբերմունքը, աշխատանքի շուկայում մերժումը կամ պետական համակարգում անտեսված լինելը կարող են ստեղծել «ներքնայնացված խտրականություն» (internalized discrimination/oppression)՝ երբ մարդը սկսում է իր նկատմամբ ընդունել այն նույն բացասական կարծրատիպերը, որոնք իրեն են վերագրում ուրիշները: Այս երևույթը, որը հոգեբանական գրականության մեջ հայտնի է նաև որպես ներքին ստիգմա (Corrigan & Watson, 2002), հաճախ հանգեցնում է ինքնագնահատականի, ինքնավստահության անկման, անզորության զգացման և պասիվացման:

Միաժամանակ կարևոր է ընդգծել, որ ինքնագնահատականը դինամիկ և փոխակերպվող գործընթաց է. այն կարող է վերականգնվել կամ բարձրանալ նաև դրական փորձառությունների արդյունքում: Համայնքային աջակցությունը, խմբային պատկանելության գիտակցումը, երկրորդ կողմի աջակցությամբ ձեռք բերված նոր գիտելիքը կամ աշխատանքային և ստեղծարար ինքնադրսևորման հնարավորությունները կարող են նպաստել ինքնագնահատականի վերականգնմանը և սեփական արժեքի գիտակցմանը նույնիսկ խիստ անբարենպաստ պայմաններում: Այս երևույթը հոգեբանության մեջ նկարագրվում է որպես ռեզիլիանս՝ հարմարվելու և նորից վերականգնվելու կարողություն (Masten, 2001):

Այսպիսով, խոցելի խմբերի շրջանում ինքնագնահատականն ու ինքնընկալումը պետք է դիտարկվեն ոչ թե որպես անհատական հոգեբանական հատկանիշներ, այլ որպես սոցիալական պայմանավորվածություն՝ ձևավորվող խտրականության, սոցիալական կապերի, տնտեսական հնարավորությունների և հասարակական ընդունման համատեքստում:

2.1. Հոգեկան առողջության սուբյեկտիվ ընկալում

Ինքնագնահատականի և ինքնաընկալման ձևավորման մեջ մեծ դեր ունեն հոգեկան առողջությունն ու վիճակը: Հետազոտության շրջանում դուրս է բերվել թիրախ խմբերի սեփական հոգեկան առողջության ընկալման մակարդակը: Այսպես, հարցման մասնակիցները գնահատել են իրենց հոգեկան վիճակը 1-5 բալանոց սանդղակով, որտեղ 1-ը՝ շատ վատ, 5-ը՝ լավ: Միջին գնահատականով վերլուծելու դեպքում դուրս ենք բերում հոգեկան առողջության մակարդակի հետևյալ սուբյեկտիվ պատկերը. կին իրավապաշտպանների միջին գնահատականը՝ 3.36, սեռական բռնություն վերապրած կանանց՝ 3.27, տրանս կանանց և սեքս աշխատողների՝ 3.12 և տեղահանված կանանց՝ 2.80: Ստացված միջին արժեքների մեկնաբանությունը թույլ է տալիս պնդել, որ կին իրավապաշտպանների և սեռական բռնություն վերապրած կանանց խմբերում նկատվում է հարաբերականորեն կայուն հոգեկան առողջության ընկալում:

Աղյուսակ 5. Հոգեկան առողջության սուբյեկտիվ գնահատական՝ ըստ մարգինալ, խոցելի խմբերի

Հարց - Ինչպե՞ս եք գնահատում Ձեր հոգեկան առողջության մակարդակը				
	ԻԿ n=50	*ԱՏ n=69*	*ՍԲՎ n=54*	*ՏԿՍԱ n=50*
Չափազանց վատ	*4%*	*13%*	*6%*	*6%*
Վատ	*14%*	*19%*	*17%*	*18%*
Միջին	*32%*	*47%*	*33%*	*40%*
Լավ	*42%*	*17%*	*39%*	*30%*
Շատ լավ	*8%*	*4%*	*5%*	*6%*
Ընդամենը	*100%*	*100%*	*100%*	*100%*

Կին իրավապաշտպանների, սեռական բռնություն վերապրած կանանց և տրանս կանանց և սեքս աշխատողների խմբերում 70%-ից ավելին գնահատել են լավ և միջին, ի դեպ՝ լավ գնահատականը ընտրվել է մեծամասնության կողմից (համապատասխանաբար՝ հարցվածների 42%, 39% և 30% - տե՛ս Աղյուսակ 5): Առավել վատ հոգեկան վիճակի գնահատում, ինչպես և սպասելի էր, արձանագրվել է տեղահանված կանանց շրջանում, որտեղ գնահատականը ավելի շատ ձգտում է վատ ու չափազանց վատ մակարդակին: Վերջինս պայմանավորված է բացառապես պատերազմի և տեղահանության հետևանքներով ու դրանց թողած հոգեբանական ազդեցությամբ:

Հետազոտության արդյունքներն ամբողջությամբ հաստատում են այն տեսական դրույթը, որ ինքնագնահատականն ու ինքնընկալումը չեն կարող դիտվել որպես միմիայն անհատական հոգեբանական հատկանիշներ. դրանք ձևավորվում են սոցիալական ճանաչման, հասարակական վերաբերմունքի և կառուցվածքային պայմանների ազդեցությամբ: Ըստ Ռոզենբերգի (Rosenberg, 1965)՝ ինքնագնահատականն արտացոլում է այն, թե որքանով է մարդն իրեն ընկալում որպես արժանի և ունակ: Մեր տվյալները ցույց են տալիս, որ այդ ընկալումը խիստ տարբեր է խմբից խումբ՝ պայմանավորված արտաքին միջավայրի կողմից տրվող հաստատման աստիճանով:

Կին իրավապաշտպանների և սեռական բռնություն վերապրած կանանց խմբերում ինքնագնահատականը առավել բարձր է, քանի որ առկա է սոցիալական ճանաչման և մասնագիտական ինքնահաստատման բավարար մակարդակ: Ի հակադրություն դրան՝ տեղահանված կանանց և առավել ևս՝ տրանս կանանց ու սեքս աշխատողների մոտ այն խաթարված է՝ արտացոլելով «ներքին խտրականության» հետևանքները. այն պահին, երբ արտաքին միջավայրը մշտապես հաղորդում է մերժում, անհատը սկսում է ընդունել և իրենը դարձնել այդ վերաբերմունքը՝ վերածելով այն սեփական ինքնագնահատականի անկման:

2.2. Հոգեկան վիճակի փոփոխություն

Հետաքրքրական է նաև տեսնել, թե ինչ փոփոխություններ են եղել վերջին հինգ տարիների ընթացքում հարցվողների հոգեկան առողջության տեսանկյունից: Որոշ խոցելի խմբերի պարագայում կտրուկ անկումը ու հոգեկան առողջության վատթարացումն ակնհայտ ու կանխատեսելի են, օրինակ՝ տեղահանված կանանց խմբում: Սրա մասին են փաստում նաև համապատասխան թվերը, որ հետազոտության մասնակից տեղահանված կանանց ավելի քան 65%-ը (տե՛ս Աղյուսակ 6) նշում է վատացում՝ հիմնականում կտրուկ բնույթի՝ համահունչ տեղահանության և անորոշ ապագայի ազդեցությանը: Հետաքրքրական է, որ վերջին տարիների կտրվածքով հոգեկան առողջության վատթարացում նշվում է նաև կին իրավապաշտպանների խմբի մոտ կեսի՝ 48%-ի կողմից, ինչը խոսում է մասնագիտական հոգնածության, բեռնվածության և այրման համախտանիշի վտանգների ու դրանց հետևանքների մասին: Համեմատաբար դրական պատկեր արձանագրվել է սեռական բռնություն վերապրած կանանց և տրանս կանանց ու սեքս աշխատողների խմբերում: Այստեղ նկատվում է հավասարակշռված պատկեր՝ մոտ 40%-ը նշում է բարելավում: Նման ցուցանիշի հիմքում կարելի է հավանաբար տեսնել համապատասխան հոգեբանական աջակցության, անհատական կամ խմբային քննարկումներին, հանդիպումներին ու թերապիաներին մասնակցությունը ու դրանց շնորհիվ գրանցած դրական արդյունքները:

Աղյուսակ 6. Խոցելի խմբերի հոգեկան վիճակի դինամիկան վերջին հինգ տարիների կտրվածքով

Հարց - Արդյոք Ձեր հոգեկան առողջությունը փոխվել է վերջին հինգ տարիների ընթացքում				
	ԻԿ n=50	*ԱՏ n=69*	*ՍԲՎ n=54*	*ՏԿՍԱ n=50*
Կտրականապես վատացել է	*6%*	*15%*	*9%*	*12%*
Վատացել է ընդհանուր առմամբ	*42%*	*51%*	*35%*	*40%*
Որևէ փոփոխություն չեմ նկատում	*16%*	*26%*	*15%*	*10%*
Լավացել է	*36%*	*6%*	*30%*	*30%*
Շատ լավացել է	*0%*	*2%*	*11%*	*8%*
Ընդամենը	*100%*	*100%*	*100%*	*100%*

Հոգեկան վիճակի փոփոխության թվային պատկերի մեկնաբանությունը հնարավոր է եղել դուրս բերել հարցվողների պատասխաններից, թե ինչով է պայմանավորված եղել թե՛ հոգեկան վիճակի վատթարացումը, թե՛ լավացումը: Փոփոխությունների հիմքում ընկած պատճառները վերլուծվել են ըստ խոցելի խմբերի:

Այսպիսով, համաձայն ստացված որակական տվյալների՝ հոգեկան վիճակի վատթարացումը պայմանավորված է ինչպես կառուցվածքային ու համակարգային ճնշումներով, այնպես էլ անձնական և հուզական փորձառությունների համակցությամբ: Թեև յուրաքանչյուր խումբ ունի իրեն բնորոշ առանձնահատկություններ, ընդհանուր միտում է կուտակային ճգնաժամերի ազդեցությունը:

Բացասական փոփոխություններ

Տեղահանված կանանց հոգեկան վիճակի վատթարացումը ամենասուրն է և ունի բարդ բազմաշերտ բնույթ: Այս խմբի պատասխաններում հիմնականում գերակշռում են երեք առանցքային թեմաներ՝ կորուստ, անորոշություն և մերժում: Տեղահանության և պատերազմի հետևանքով նրանք ոչ միայն կորցել են տներ, հարազատ մարդկանց և համայնքային կապեր, այլև ինքնությունը ձևավորող հիմնական հենարաններ՝ հայրենիք, հիշողություն, պատկանելիություն: Շատ կանայք հիշատակում են ֆիզիկական և հոգեբանական տրավմաներ, մերձավորների կորուստ, անքնություն և մշտական սթրես՝ կապված ապագայի անորոշության, նոր միջավայրում չընդունվածության և սոցիալական պիտակավորման (օրինակ՝ «Արցախցին փախել է», «Արցախցին չի ուզում աշխատի») հետ:

Հոգեկան ծանրաբեռնվածությանը գումարվում է սոցիալ–տնտեսական անկայունությունը, ինչն էլ ստեղծում է «գոյատևման ռեժիմ», որտեղ ապագայի մասին մտածելը դառնում է շքեղություն: Տեղահանված կանանց վկայությունները խորապես արտացոլում են հայրենիքի կորստի տրավման և դրան հաջորդող «անհայրենիքության» զգացումը, որն ուղեկցվում է շարունակական վախով, հուսահատությամբ և ինքնարժևորման անկմամբ:

Սեռական բռնություն վերապրած կանանց խմբում հոգեկան առողջության խնդիրները ձևավորվում են երկու հիմնական առանցքի շուրջ՝ անձնական տրավմա և հասարակական անորոշություն: Շատերը նշում են, որ պատերազմական իրավիճակները, քաղաքական սրացումները և սոցիալական անկայունությունը խորացրել են նրանց հոգեբանական բեռը՝ ավելացնելով անհանգստություն, տագնապ և անվստահություն սեփական անվտանգության նկատմամբ: Բազմաթիվ պատասխաններում հիշատակվում են նաև մասնագիտական այրման և հուզական սպառվածության դրսևորումներ, որոնք բնորոշ են հատկապես այն կանանց, ովքեր զուգահեռ սովորում են, աշխատում կամ հոգ են տանում երեխաների մասին: Որոշ դեպքերում հոգեկան վիճակի վատթարացումը կապվում է ընտանեկան բռնության, ոչ առողջ

հարաբերությունների և հետծննդաբերական ընկճախտի հետ: Նշվում է նաև հոգեբանական մեկուսացում, ինքնամփոփություն և հուսահատություն, ինչը վկայում է, որ այս խումբը շարունակում է ապրել կրկնվող տրավմատիկ փորձառությունների մեջ: Միաժամանակ նկատվում է ինքնաճանաչման և դիմակայության որոշակի կարողություն՝ կապված հոգեբանական աջակցության և համայնքային ներգրավվածության դրական ազդեցության հետ:

Կին իրավապաշտպանների խմբում հոգեկան վիճակի վատթարացումը ավելի շատ կապվում է քրոնիկ սթրեսի, մասնագիտական այրման և քաղաքական անորոշության հետ: Նրանք գործում են բարձր պատասխանատվության և շարունակական ճնշման պայմաններում՝ հաճախ լինելով թե՛ մասնագիտական, թե՛ անձնական հարձակումների թիրախ: Շատերն իրենց վկայություններում նշում են, որ վերջին հինգ տարիների ընթացքում կուտակվել են բազմաթիվ գործոններ՝ COVID-19 համավարակ, պատերազմներ, ընտրական ցնցումներ, դոնորական և քաղաքական անկայունություն:
Աշխատանքի բնույթը՝ մշտական շփում խոցելի խմբերի և բռնության պատմությունների հետ, առաջացնում է երկրորդական տրավմա, իսկ հասարակական պառակտվածությունը և ատելության խոսքի տարածումը՝ մշտական տագնապի ֆոն: Ավելին՝ անձնական կորուստները, ընտանեկան հոգսերը, ծնողների խնամքը կամ երեխայի դաստիարակությունը խորացնում են հոգեբանական սպառվածությունը: Այս խումբը ունի բարձր ինքնագիտակցություն և ռեֆլեքսիա, սակայն դա երբեմն էլ ավելի է ուժեղացնում հոգեկան բեռը «մշտապես գիտակցելու» և պատասխանատվություն կրելու ծանրությամբ:

Տրանս կանանց և սեքս աշխատողների խմբում հոգեկան վիճակի վատթարացման պատճառներն առավել ընդգծված են և ունեն համակարգային ու գոյաբանական բնույթ: Տրանս կանայք և սեքս աշխատողները պատմում են կյանքի շարունակական բռնությունների, խտրականության և մերժման մասին՝ սկսած ընտանիքից մինչև հանրային տարածք: Շատերի պատմություններում հանդիպում են սեռական և ֆիզիկական բռնության դեպքեր, հոգեբուժական միջամտություններ՝ առանց համաձայնության, հարկադիր մեկուսացում և ինքնասպանության մտքեր: Հոգեկան ծանր վիճակը պայմանավորված է ոչ միայն սոցիալական մերժմամբ, այլև ֆիզիկական վտանգներով. սեքս աշխատանքը դիտվում է որպես հարկադրական գոյապայքար՝ մշտական վախի, անապահովության և անպաշտպանության պայմաններում: Տրանս կանայք խոսում են նաև ինքնաոչնչացման մտքերի, ինքնախարանի և խորը հոգեկան սպառվածության մասին, ինչը վկայում է խորը ներքին տրավմայի և ինքնության ճգնաժամի մասին: Միաժամանակ, որոշ պատասխաններ ընդգծում են ՀԿ-ների աջակցության և համայնքային կապերի կարևորությունը, որոնք որոշակիորեն մեղմում են մեկուսացման զգացումը:

Չնայած խմբերի տարբեր փորձառություններին՝ բոլորի մոտ նկատվում է հոգեկան ծանրաբեռնվածության կուտակային բնույթը: Վերջին հինգ տարիների համընդհանուր քաղաքական, սոցիալական և տնտեսական ճգնաժամերը

ստեղծել են երկարատև սթրեսային ֆոն, որի պայմաններում անհատական տրավմաները վերածվել են հավաքական հոգեբանական ճգնաժամի:

Այս բոլոր գործոնները ցույց են տալիս, որ խոցելի խմբերի հոգեկան վիճակի վատթարացումը չի կարող դիտվել միայն անհատական մակարդակում. այն խորապես կապված է կառուցվածքային պայմանների, հասարակական վերաբերմունքի և անվտանգության բացակայության հետ: Տնտեսական անապահովությունը, աշխատանքային խտրականությունը, քաղաքական անկայունությունը և սոցիալական մեկուսացումը փոխկապակցված շղթա են կազմում, որը նվազեցնում է դիմակայության ներուժը:

Դրական փոփոխություններ

Բացասական փորձառությանը զուգահեռ՝ հետազոտությունը հնարավորություն է տվել դուրս բերելու նաև այնպիսի դեպքեր, երբ հոգեկան առողջության փոփոխությունները եղել են դեպի լավը: Այսպիսի դրական փոփոխությունների հիմքում ընկած գործոնների ու նախապայմանների վերլուծությունը նույնպես արվել է խոցելի խմբերի բնութագրերին համապատասխան: Ընդհանուր առմամբ՝ դրական փոփոխությունները հիմնականում կապվում են ինքնաճանաչման, հոգեբանական աջակցության, համայնքային ներգրավվածության, միջավայրի փոփոխության և կայունության ձեռքբերման գործընթացների հետ: Դրանք վկայում են ոչ թե ճնշումների բացակայության, այլ դիմադրողականության ձևավորման մասին. մարդիկ գտել են իրենց հուզական հավասարակշռությունը նոր ռազմավարությունների, աջակցության ցանցերի և ինքնախնամքի շնորհիվ:

Տեղահանված կանանց շրջանում հոգեկան բարելավումը հիմնականում կապվում է ժամանակի և հարմարվողականության հետ: Տեղահանությունից հետո նրանք աստիճանաբար սկսել են ինտեգրվել նոր միջավայրում՝ ստեղծելով նոր սոցիալական կապեր և վերականգնելով որոշակի առօրյա կայունություն: Շատերի համար բարելավման գլխավոր գործոնն է միջավայրի ընդունող լինելը, իսկ ոմանց դեպքում՝ նոստալգիկ հույսը հայրենիք վերադառնալու հանդեպ, որը պահպանվում է որպես ներքին կայունացնող մեխանիզմ: Հոգեկան բարելավման գործընթացը այս խմբում դանդաղ է, սակայն այն արտացոլում է հարմարվելու և կյանքի նոր պայմաններին հույսով մոտենալու կարողությունը: Հոգեբանական դիմադրողականությունը ձևավորվում է ոչ թե արտաքին հանգստության, այլ երկարատև սթրեսի հանդեպ տոկունության շնորհիվ:

Սեռական բռնություն վերապրած կանանց խմբում նկատվում է ամենաորակյալ և ինքնագիտակցված վերականգնման միտումը: Հոգեկան վիճակի բարելավման առանցքում է ինքնաճանաչման և հոգեբանական աջակցության համադրությունը: Հարցվածների զգալի մասը հիշատակում է հոգեբանի կամ հոգեթերապիայի աջակցությունը, ինքնավերլուծությունը, սեփական զգացմունքների ճանաչումը և ընդունումը: Շատերը պատմում են, որ կարողացել են դուրս գալ տոքսիկ հարաբերություններից, ստեղծել նոր, առողջ միջավայր,

ամրապնդել ինքնագնահատականը և վերաիմաստավորել սեփական փորձառությունը: Վերջինս էլ ցույց է տալիս, որ հոգեբանական կրթությունը, ինքնազարգացումը և կայուն աջակցող հարաբերությունները՝ թե՛ մասնագիտական, թե՛ ընտանեկան կամ զուգընկերային, դառնում են հոգեկան կայունացման առանցքային գործոններ: Այս խմբի համար բարելավման գործընթացն առավել նպատակային է՝ կառուցված ինքնազարգացման գիտակցված ջանքերի և հոգեկան առողջության նկատմամբ պատասխանատվության վրա:

Կին իրավապաշտպանների մոտ հոգեկան բարելավումն արտահայտվում է ինքնախնամքի գիտակցված ռազմավարությունների, հոգեբանական աջակցության ծառայությունների օգտագործման և կյանքի ռիթմի վերահսկման միջոցով: Շատերը նշում են, որ սկսել են այցելել թերապիայի, ընդմիջումներ վերցնել աշխատանքում, զբաղվել մեդիտացիայով, յոգայով կամ ստեղծարար գործունեությամբ: Այս փոփոխությունները հաճախ դիտարկվում են որպես հակազդեցություն երկար տարիների այրմանը և սոցիալական ճնշմանը: Բարելավման կարևոր գործոն է նաև անվտանգության և կյանքի որոշակի կայունության զգացումը, օրինակ՝ բնակարանի ձեռքբերումը կամ աշխատանքի բնույթի փոփոխությունը, որոնք նվազեցրել են անորոշության մակարդակը: Շատ իրավապաշտպաններ խոսում են «հաշտվելու», «նյարդայնացնող հանգամանքներին հանգիստ վերաբերվելու» կամ «ցինիզմի միջոցով սթրեսին հարմարվելու» մասին, ինչը վկայում է հուզական դիմադրողականության բարձրացման և հոգեբանական հասունացման մասին: Հոգեկան առողջության բարելավման մեջ կարևոր դեր ունի նաև համախոհ համայնքը՝ մասնագիտական և ակտիվիստական շրջանակները, որտեղ նրանք գտնում են փոխըմբռնում և վերականգնման ռեսուրս:

Տրանս կանանց և սեքս աշխատողների խմբում հոգեկան վիճակի բարելավումը հիմնականում պայմանավորված է ինքնության ընդունմամբ, համայնքային աջակցությամբ և ապահով միջավայր գտնելով: Շատերը նշում են, որ իրենց կյանքը «բաժանվում է» երկու փուլերի՝ նախքան ինքնության բացահայտումն ու ընդունումը և դրանից հետո: Հոգեբանական աջակցությունը և իրավապաշտպան ՀԿ-ների կողմից տրամադրված ապահով տարածքները հնարավորություն են տվել ազատորեն արտահայտելու իրենց ինքնությունը՝ առանց վախի և դատապարտման:

Այս խմբում բարելավման գործընթացը հաճախ ուղեկցվում է ֆինանսական և սոցիալական անկախության ձեռքբերմամբ. աշխատանք գտնելը, սեփական եկամուտ ունենալը կամ ընտանիքից անկախ դառնալը ստեղծում են ինքնավստահության և վերահսկելիության զգացում: Շատերը պատմում են նաև ընտանեկան հարաբերությունների աստիճանական վերականգնման մասին՝ տարիների մերժումից հետո: Տրանս կանանց համար հոգեկան բարելավումը հստակորեն կապվում է ինքնաընդունման, ինքնաարտահայտման և ընկալվող սոցիալական ընդունման աստիճանի հետ:

Չնայած տարբերություններին՝ բոլոր խմբերի մեկնաբանություններում հոգեկան բարելավման հիմնական առանցքը ձևավորվում է ինքնաճանաչման և աջակցող միջավայրի փոխազդեցությամբ: Այնտեղ, որտեղ մարդը ստացել է ընդունում՝ լինի դա ընտանիքից, գործընկերներից կամ ՀԿ-ից, նկատվել է հոգեկան առողջության վերականգնում:

- Հոգեթերապիան և մասնագիտական աջակցությունը հանդես են գալիս որպես ամենաարդյունավետ գործիք, հատկապես այն խմբերում, որտեղ առկա է վստահելի և մասնագիտացված մոտեցում:
- Միջավայրի փոփոխությունը՝ ֆիզիկական (տեղափոխվել այլ բնակավայր, բաց թողնել տոքսիկ հարաբերություններ) կամ սոցիալական (նոր կապեր, առողջ հարաբերություններ), նպաստում է հուզական ազատության և նոր ինքնագնահատականի ձևավորմանը:
- Կրթությունը, ինքնազարգացումը և ստեղծարար գործունեությունը դառնում են ինքնավերականգնման միջոցներ՝ ուղղելով ուշադրությունը դեպի աճ և նոր իմաստավորումներ:
- Համայնքային և կազմակերպական աջակցությունը՝ հատկապես ՀԿ-ների կողմից տրամադրվող հոգեբանական ծառայությունները և ապահով տարածքները, ուժեղացնում են մարդկանց պատկանելիության և անվտանգ լինելու զգացումը:

Բացասական և դրական փոփոխությունների վրա ազդող գործոնների համեմատություն

Եթե հոգեկան վիճակի վատթարացման պատճառները պայմանավորված էին արտաքին ճնշումներով, ապա բարելավման հիմքում դրված են ներքին վերահսկելիության, ինքնագնահատականի վերականգնման և վստահության վերակառուցման գործընթացները: Բացասական փոփոխությունները հիմնականում բխում են արտաքին ճնշումներից՝ պատերազմի, տեղահանության, սոցիալական մերժման և տնտեսական անկայունության համակցությունից: Դրական փոփոխությունները, հակառակը, առաջանում են այն ժամանակ, երբ մարդը կարողանում է վերակառուցել վերահսկելիության զգացումը՝ ապահով միջավայրում, աջակցող հարաբերությունների և ինքնաճանաչման միջոցով:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ խոցելի խմբերի հոգեկան վիճակի փոփոխությունները ձևավորվում են միևնույն առանցքների երկայնքով՝ անվտանգություն, սոցիալական աջակցություն, ինքնության ընդունում և տնտեսական կայունություն, սակայն ուղղությունը՝ դրական կամ բացասական, որոշվում է այդ գործոնների առկայությամբ կամ բացակայությամբ:

Գործոն	Բացասական ազդեցություն	Դրական ազդեցություն
Ֆիզիկական և սոցիալական անվտանգություն	Պատերազմներ, տեղահանություն, ֆիզիկական կորուստներ, ատելության խոսք, հանրային մերժում	Ապահով տարածքներ, աջակցող համայնք, հասարակական ընդունում
Տնտեսական կայունություն	Աշխատանքային խտրականություն, եկամտի անկայունություն, վարձերի բեռ	Աշխատանք ունենալը, ֆինանսական անկախություն, սեփական բնակարան
Սոցիալական միջավայր և հարաբերություններ	Ընտանեկան բռնություն, մեկուսացում, սոցիալական մերժում	Ընտանիքի կամ զուգընկերոջ աջակցություն, առողջ հարաբերություններ, նոր սոցիալական կապեր
Հոգեբանական աջակցություն և ինքնազարգացում	Թերապիայի բացակայություն, ինքնամերժում, ինքնախարան	Հոգեբանի կամ հոգեթերապիայի աջակցություն, ինքնաճանաչում, ինքնախնամք
Ինքնության ընդունում և արժևորում	Խտրականություն՝ գենդերային ինքնության կամ սեռական կողմնորոշման հիմքով	Ինքնաընդունում, սեփական ինքնության ազատ արտահայտում
Քաղաքական և կառուցվածքային միջավայր	Անորոշություն, պատերազմ, ֆինանսավորման կրճատում, քաղաքական ճնշում	Համեմատական կայունություն, աջակցող քաղաքական կամ միջավայրային փոփոխություններ
Համայնքային և ինստիտուցիոնալ կապեր	Թիրախավորում, մեկուսացում, աջակցության ծրագրերից դուրս մնալ	ՀԿ-ների և մասնագիտական ցանցերի աջակցություն, պատկանելիության զգացում

Այսպիսով, հոգեկան բարեկեցությունը խոցելի խմբերի համար առավելապես կախված է այն բանից, թե որքանով են առկա անվտանգության, ընդունման և ինքնուրույն զարգացման պայմաններ, այլ ոչ թե միայն անձնական կամք կամ դիմացկունություն:

2.3. Բավարարվածության և երջանկության սուբյեկտիվ գնահատում

Բավարարվածություն

Կյանքի տարբեր բնութագրիչներով բավարարվածության սուբյեկտիվ գնահատման արդյունքների միջինացված արժեքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բավարարվածության մակարդակն էականորեն տարբերվում է խոցելի խմբերի միջև: Ընդհանուր միտումն այն է, որ ամենաբարձր բավարարվածությունն ունեն կին իրավապաշտպանները, իսկ ամենացածրը՝ տրանս կանայք և սեքս աշխատողները: Մնացած երկու խմբերը՝ Արցախից տեղահանված կանայք և սեռական բռնություն վերապրած կանայք, գտնվում են միջին մակարդակում՝ որոշ ոլորտներում փոքր տարբերություններով (տե՛ս Աղյուսակ 7):

Աղյուսակ 7. Կյանքի տարբեր բնութագրիչներով բավարարվածության սուբյեկտիվ գնահատական՝ ըստ մարգինալ, խոցելի խմբերի

Հարց - Որքանով եք բավարարված Ձեր ...	*ԻԿ*	*ԱՏ*	*ՍԲՎ*	*ՏԿՍԱ*
Առողջություն	*3.6*	*2.8*	*3.1*	*3.0*
Աշխատանք	*3.5*	*2.4*	*3.2*	*2.6*
Կրթություն	*4.0*	*3.2*	*3.5*	*3.3*
Ֆինանսական վիճակ	*3.0*	*2.2*	*2.8*	*2.3*
Ընտանիք / զուգընկերային հարաբերություններ	*4.1*	*3.4*	*3.6*	*2.9*

Ազատ ժամանակ փնօրինում	*3.3*	*2.3*	*3.0*	*2.4*
Ճամփորդելու հնարավորություններ	*3.1*	*2.1*	*2.8*	*2.3*
Ընկերական հարաբերություններ	*4.0*	*3.2*	*3.5*	*2.7*
Կյանքում ունեցած հաջողություններ	*3.8*	*3.0*	*3.2*	*2.8*
Հասարակությունում զբաղեցրած դիրք	*3.7*	*2.5*	*3.0*	*2.4*
Ձեր գենդերային ինքնությամբ ապրելու (3)				*1.9*
Ձեր անվտանգության և պաշտպանության զգացողությամբ (ներառյալ՝ ֆիզիկական, իրավական, սոցիալական) (4)				*1.6*

3.Այս տարբերակը ներառված է եղել միայն տրանս կանանց և սեքս աշխատողների հետ իրականացվող հետազոտական հարցաթերթի մեջ
4.Այս տարբերակը ներառված է եղել միայն տրանս կանանց և սեքս աշխատողների հետ իրականացվող հետազոտական հարցաթերթի մեջ

Կին իրավապաշտպանների դեպքում կյանքի գրեթե բոլոր ոլորտների գնահատականները գերազանցում են 3.5 միավորը, ինչը վկայում է համեմատաբար կայուն ինքնագնահատականի և սոցիալ-տնտեսական դիրքի մասին (տե՛ս Աղյուսակ 7, սյուն՝ ԻԿ): Նրանք առավել բավարարված են ընտանիքի և զուգընկերային հարաբերություններով, կրթությամբ և ընկերական կապերով: Նման արդյունքները համընկնում են հաղորդված սոցիալական կապիտալի բարձր մակարդակի, մասնագիտական ինքնավստահության և կայուն զբաղվածության հետ:

Արցախից տեղահանված կանայք առանձնանում են զգալի ցածր գնահատականներով (*տե՛ս Աղյուսակ 7, սյուն՝ ԱՏ*)՝ հատկապես ֆինանսական վիճակի, աշխատանքի և ճամփորդելու հնարավորությունների մասով: Նրանց բավարարվածության միջին ցուցանիշները հիմնականում գտնվում են 2.1–3.4 միջակայքում, ինչը վկայում է գոյատևման և հարմարվողականության շարունակվող փուլերի մասին: Միաժամանակ որոշ դրական դինամիկա նկատվում է ընտանիքի հարաբերությունների և կրթության ոլորտներում, ինչը ցույց է տալիս ներքին ռեսուրսների դերակատարումը բարեկեցության պահպանման գործում:

Սեռական բռնություն վերապրած կանանց գնահատականները համեմատաբար կայուն են՝ 2.8-ից 3.6 միջակայքում (*տե՛ս Աղյուսակ 7, սյուն՝ ՍԲՎ*): Նրանք ավելի բավարարված են կրթությամբ, ընկերական կապերով և ընտանիքի հարաբերություններով, սակայն համեմատաբար ցածր են գնահատում ֆինանսական վիճակը և ճամփորդելու հնարավորությունները: Սա փաստում է, որ նրանց հոգեբանական վերականգնումը հաճախ ուղեկցվում է սոցիալական վերաինտեգրման գործընթացներով, բայց տնտեսական անապահովությունը շարունակում է մնալ լուրջ սահմանափակում:

Տրանս կանայք և սեքս աշխատողները գրեթե բոլոր ոլորտներում ունեն ամենացածր ցուցանիշները՝ միջինը 2.3–2.9 միջակայքում (*տե՛ս Աղյուսակ 7, սյուն՝ ՏԿՍԱ*): Ամենացածր բավարարվածությունը վերաբերում է ֆինանսական վիճակին, անվտանգության զգացողությանը և սեփական գենդերային ինքնությամբ ապրելու հնարավորությանը: Այս խմբի գնահատականները հստակ արտացոլում են կառուցվածքային խտրականության, սոցիալական մեկուսացման և ֆիզիկական վտանգների բարձր մակարդակը: Միևնույն ժամանակ՝ որոշ հարաբերական դրական գնահատական նկատվում է ընտանիքի և ընկերական հարաբերությունների առումով, ինչը վկայում է սոցիալական կապերի վերականգնման սահմանափակ, բայց առկա հնարավորությունների մասին:

Այսպիսով, համաձայն ստացված տվյալների համադրության՝ կարելի է փաստել, որ՝

- Կին իրավապաշտպաններն ունեն ամենաբարձր կենսաբավարարվածության ինդեքս՝ արտացոլելով բարձր կրթական և մասնագիտական ռեսուրսներ, կայուն աշխատանք և ինքնաարտահայտման հնարավորություններ:

- Սեռական բռնություն վերապրած կանանց մոտ գերակշռում է հոգեբանական վերականգնման դրական միտումը, սակայն տնտեսական գործոնները դեռ սահմանափակող են:
- Արցախից տեղահանված կանանց դեպքում հիմնական խոցելիությունը կապված է նյութական և բնակարանային անկայունության հետ:
- Տրանս կանանց և սեքս աշխատողների մոտ բացահայտ է խորքային մարգինալացումը՝ ոչ միայն սոցիալ-տնտեսական, այլև իրավական և ինքնության մակարդակում:

Երջանկություն

Հետաքրքրական է, որ բավարարավածության ու երջանկության սուբյեկտիվ ընկալումները բավական նույնական էին: Թեպետ բավարարվածությունը չափվում էր կյանքի տարբեր բնութագրիչների նկատմամբ, երջանկության ինդիկատորը ներկայացված էր որպես բացարձակ արժեք: Այսպիսով՝ հարցմանը մասնակցած բոլոր խոցելի խմբերում միջին պատկերը ժամանակ առ ժամանակ իրենց երջանիկ զգալն էր, քանի որ բոլոր խմբերում հարցվածների շուրջ կեսն այդպես էր ընկալել իր երջանիկ լինելը (*տե՛ս Աղյուսակ 8*):

Աղյուսակ 8. Երջանկության սուբյեկտիվ ընկալումը՝ ըստ մարգինալ, խոցելի խմբերի

Հարց - Ընդհանուր առմամբ դուք Ձեզ երջանի՞կ մարդ եք համարում				
	ԻԿ n=50	*ԱՏ n=69*	*ՍԲՎ n=54*	*ՏԿՍԱ n=50*
Այո, ես ինձ երջանիկ եմ համարում	*36%*	*21%*	*27%*	*18%*
Ժամանակ առ ժամանակ երջանիկ եմ	*52%*	*59%*	*58%*	*44%*
Ոչ, ես ինձ դժբախտ եմ համարում	*12%*	*20%*	*15%*	*38%*
Ընդամենը	*100%*	*100%*	*100%*	*100%*

Այնումենայնիվ, միջխմբային դինամիկայում նկատելի էին որոշակի առանձնահատկություններ: Այսպես, օրինակ, կին իրավապաշտպանների խմբի մասնակիցների շրջանում նկատելի էր ընդհանուր հոգեբանական կայունություն՝ հարցվածների գերակշիռ մասը (88%) իրեն ամբողջովին կամ մասամբ երջանիկ է համարում: Նույն միտումը արձանագրվել է նաև սեռական բռնության վերապրածների (85%) և տեղահանված կանանց խմբերում (80%): Սակայն տեղահանված կանանց խմբում իրենց դժբախտ համարող անձանց բաշխումը ավելի մեծ է, քան կին իրավապաշտպանների և սեռական բռնություն վերապրած կանանց խմբերում: Մյուս կողմից՝ հետազոտությանը մասնակցած չորս մարգինալ խմբերից ամենադժբախտը իրենց համարում են տրանս կանայք և սեքս աշխատողները, ում արդյունքները ընդհանուր տատանվում են մասամբ երջանիկ (44%) և դժբախտ (38%) լինելու սահմանագծին, ինչը համապատասխանում է արդեն իսկ քննարկված մյուս ցուցիչներին, այն է՝ ցածր սոցիալ-տնտեսական և հոգեբանական ապահովություն:

2.4. Անհաջողության, հաջողության և հնարավորությունների ընկալում

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ խոցելի խմբերի միջև էական տարբերություններ կան ինքնավարության, հաջողության և կյանքի վերահսկելիության ընկալման մեջ: Այս տարբերությունները պայմանավորված են ոչ միայն սոցիալ-տնտեսական իրականությամբ, այլև այն հոգեբանական ու արժեքային կառուցվածքներով, որոնցով տվյալ խմբերը մեկնաբանում են իրենց փորձառությունը և իրենց տեղը հասարակության մեջ:

Կին իրավապաշտպանների շրջանում գրեթե բոլոր հարցվածները (94%) վստահ են, որ կարող են ազդեցություն ունենալ իրենց կյանքի վրա և կառավարել այն (*տե՛ս Աղյուսակ 9*): Սա վկայում է ինքնարժևորման բարձր մակարդակի, որոշումների կայացման ազատության և անձնական պատասխանատվության ձևավորված մշակույթի մասին: Նրանց համար բնորոշ է ներքին վերահսկողության բարձր մակարդակը, որը սովորաբար կապվում է մասնագիտական կայունության, ինքնուրույն եկամուտի գեներացման և մասնագիտական ինքնաիրացման հետ:

Աղյուսակ 9. Կյանքի վերահսկելիության ընկալումը՝ ըստ մարգինալ, խոցելի խմբերի

Հարց - Դուք Ձեզ ընկալում եք որպես մարդ...				
	ԻԿ n=50	*ԱՏ n=69*	*ՍԲՎ n=54*	*ՏԿՍԱ n=50*
...ով կարող է ազդեցություն ունենալ սեփական կյանքում տեղի ունեցող իրադարձությունների վրա և կառավարել սեփական կյանքը	*94%*	*80%*	*89%*	*30%*
...ումից կախված չէ սեփական կյանքի կառավարումը	*6%*	*20%*	*11%*	*6%*
..որոշ դեպքերում ես կարողանում եմ կառավարել իմ կյանքը, բայց ոչ միշտ (5)				*64%*
Ընդամենը	*100%*	*100%*	*100%*	*100%*

Սեռական բռնություն վերապրած կանանց խմբում ևս նկատվում է բավական բարձր ինքնավարության ընկալում. այս խմբի հարցվածների 89% վստահ է, որ կարող է կառավարել իր կյանքը: Նրանց մոտ վերահսկելիության ընկալումը ձեռքբերված և զարգացած փորձառություն է՝ կապված անձնական աճի և ինքնաճանաչման գործընթացի հետ:

Ի տարբերություն վերոնշյալ խմբերի՝ Արցախից տեղահանված կանանց շրջանում այդ ցուցանիշը համեմատաբար ցածր է՝ 80%: Թեև մեծամասնությունը դեռ հավատում է սեփական կայնքի նկատմամբ ունեցած վերահսկելիությանը, սակայն յուրաքանչյուր հինգերորդ հարցվածը (20%) նշում է, որ իր կյանքի կառավարումը կախված չէ իրենից: Սա արտացոլում է այն համատեքստը, որտեղ արտաքին գործոնները հաճախ ավելի որոշիչ են դառնում, քան անձնական ջանքերը:

5.Այս տարբերակը ներառված է եղել միայն տրանս կանանց և սեքս աշխատողների հետ իրականացվող հետազոտական հարցաթերթի մեջ

Ամենացածր ինքնավարության ընկալումը դիտվում է տրանս կանանց և սեքս աշխատողների խմբում. ընդամենը 30%-ն է կարծում, որ կարող է կառավարել իր կյանքը: Այստեղ հարկ է նշել, որ այս խմբի համար նշված հարցում ավելացվել էր հավելյալ պատասխանի տարբերակ, և շուրջ երկու երրորդը, ընտրելով հենց այդ տարբերակը, նշում է, որ դա ստացվում է միայն որոշ դեպքերում: Այս պատկերը նույնպես մեծամասամբ կապված է խմբին բնորոշ արդեն իսկ քննարկված արտաքին գործոնների ու կառուցվածքային խտրականության հետ:

Հաջորդ ցուցիչը՝ անհաջողությունների պատճառների բացատրությունը, ցույց է տալիս, թե որքանով են խոցելի խմբերը հակված անհաջողությունները վերագրելու իրենց կամ արտաքին գործոններին:

Աղյուսակ 10. Անհաջողությունների պատճառների սուբյեկտիվ մեկնաբանությունը՝ ըստ մարգինալ, խոցելի խմբերի

Հարց - Եթե հանդիպում եք անհաջողությունների, ինչպես եք մեկնաբանում դրանք				
	ԻԿ n=50	*ԱՏ n=69*	*ՍԲՎ n=54*	*ՏԿՍԱ n=50*
Հակված եմ մտածելու, որ ես եմ մեղավոր	*30%*	*17%*	*39%*	*20%*
Հակված եմ մտածելու, որ դա այլ մարդկանց մեղավորությունն է	*2%*	*0%*	*7%*	*10%*
Հակված եմ մտածելու, որ դա պարզապես պատահականություն էր	*10%*	*58%*	*24%*	*68%*
Այլ	*58%*	*25%*	*30%*	*2%*
Ընդամենը	*100%*	*100%*	*100%*	*100%*

Համաձայն ստացված տվյալների (տե՛ս Աղյուսակ 10)՝ կին իրավապաշտպանների և սեռական բռնություն վերապրած կանանց խմբերում գերակշռում է ինքնապատասխանատվության բարձր մակարդակը: Նրանք հակված են մտածելու, որ անհաջողությունների պատճառները սեփական գործողություններն, ընտրություններն կամ որոշումներն են, ինչը վկայում է ներքին վերահսկելիության բարձր աստիճանի մասին: Արցախից տեղահանված կանանց և տրանս կանանց ու սեքս աշխատողների շրջանում առավել տարածված է պատահականության և արտաքին գործոնների գերիշխանության ընկալումը:

Անհաջողությունների պատճառների մեկնաբանության հարցի մեջ ներառված է եղել այլ տարբերակ նշելու հնարավորություն, և ինչպես երևում է Աղյուսակ 10-ից՝ զգալի թվով հարցվողներ առաջարկված տարբերակներից զատ ունեցել են իրենց անհատական մեկնաբանությունն ու մոտեցումը: Բաց հարցերի վերլուծությունը հնարավորություն է տալիս խմբերի դինամիկայի դուրս բերում: Այսպիսով, կին իրավապաշտպանների խմբում նկատելի է բարձր ինքնագիտակցություն և ռեֆլեկտիվություն: Նրանք չեն փնտրում մեղավորներ, այլ փորձում են վերլուծել իրավիճակը՝ հասկանալու իրենց դերն ու ազդեցությունը: Այլ տարբերակների շարքում նշվել են՝ *«Անհաջողությունները դիտարկում եմ որպես սովորելու հնարավորություն», «Փորձում եմ հասկանալ՝ որը ինձնից է կախված, որը՝ հանգամանքներից», «Մեղավոր չեմ փնտրում, վերլուծում եմ՝ ինչպես կարող եմ փոխել»:* Այս մոտեցումը վկայում է բարձր ներքին վերահսկողության, ինքնաքննադատության առողջ ձևի և կյանքի իրադարձությունների նկատմամբ գիտակցված վերաբերմունքի մասին:

Կարելի է եզրակացնել, որ այս խումբը հիմնականում որդեգրում է ինտեգրատիվ մտածողություն, որտեղ անհաջողությունը դիտվում է որպես ինքնազարգացման, ոչ թե պարտության ցուցիչ:

Տեղահանված կանանց շրջանում գերիշխում է պատահականության և ճակատագրական ընկալման տրամաբանությունը: Բաց պատասխաններում հանդիպում են այսպիսի արտահայտություններ՝ *«Աստծո կամքն էր», «Ճակատագրական էր», «Անհաջողությունները փորձություններ են, որոնք պետք է հաղթահարել»:* Այս մոտեցումը բնորոշ է մարդկանց, որոնք երկարաժամկետ ապրել են արտաքին պայմանների վրա հիմնված անորոշության և սոցիալական խոցելիության մեջ: Տեղահանված կանանց խմբի մոտ ֆատալիստական մտածողությունը գործում է որպես հոգեբանական պաշտպանության մեխանիզմ՝ թույլ տալով վերապրել կորուստը՝ առանց ինքնամեղադրանքի ծանրության: Սակայն միաժամանակ այն նվազեցնում է վերահսկելիության զգացումը և խոչընդոտում ինքնավստահության վերականգնմանը:

Հատկանշական է նաև քաղաքական դիսֆորիայի (6) տարրը՝ «դավաճան իշխանության մեղավորության» նշումներով, ինչը վկայում է համակարգային անարդարության ընկալման խորացման մասին:

Սեռական բռնություն վերապրած կանանց և տրանս կանանց ու սեքս աշխատողների խմբերի բաց պատասխանները ցույց են տալիս հավասարակշռված վերաբերմունք, երբ մարդը գիտակցում է թե՛ իր դերը, թե՛ արտաքին հանգամանքների ազդեցությունը: «Կախված իրավիճակից՝ երբեմն ես եմ մեղավոր, երբեմն՝ հանգամանքները», «Ամեն ինչ իր պատճառն ունի, ուղղակի ընդունում եմ և փորձում լուծել», «Մեղավոր փնտրելը զրկում է վերլուծությունից»: Այս խմբերի մոտ նկատվում է վերականգնման փուլ, որտեղ տրավմատիկ փորձը վերածվում է ինքնաճանաչման և ինքնավերլուծության գործընթացի: Այս մոտեցումը վկայում է կոգնիտիվ վերաիմաստավորման և դիմակայունության բարձր աստիճանի մասին:

Հաջողության և սոցիալական արդարության արժեհամակարգային մոտեցումների վերլուծությունը դուրս է բերում հետևյալ միտումը. յուրաքանչյուր խոցելի խմբի կյանքի վերահսկելիության, հաջողության և սոցիալական արդարության ընկալումը հիմնվում է նրանց ինքնության, փորձառությունների և հասարակության մեջ ունեցած դիրքի վրա:

Աղյուսակ 11. Հաջողության և սոցիալական արդարության արժեհամակարգային ընկալումները՝ ըստ մարգինալ, խոցելի խմբերի

Հարց - Ստորև բերված դատողություններից ո՞րի հետ եք համաձայն				
Համաձայն եմ	*ԻԿ n=50*	*ԱՏ n=69*	*ՍԲՎ n=54*	*ՏԿՍԱ n=50*
Հաջողությունները կյանքում կախված են անձնական որակներից / բնավորությունից, մասնագիտական պատրաստվածությունից, արտաքին գեղեցկությունից և այլն/	*80%*	*82%*	*91%*	*60%*

6.Քաղաքական դիսֆորիա - հոգեբանական վիճակ, որը բնորոշվում է գործող քաղաքական իրականության հանդեպ խորքային անհարմարության, ապակողմնորոշվածության կամ տարանջատվածության զգացումով: Այս վիճակը կարող է դրսևորվել տարբեր ձևերով. օրինակ՝ երկրի կողմից տարվող քաղաքական ուղղության կամ ընդհանուր աշխարհաքաղաքական զարգացումների նկատմամբ ունեցած անօգնականության, հիասթափության կամ խոր անհանգստության զգացումով: Հղում՝ Navigating Political Dysphoria: Strategies for Maintaining Emotional Wellbeing — FCPC

Հաջողությունները կյանքում պայնամավորված են արտաքին գործոններով /լավ կապեր, կարևոր ծանոթություններ, փողի առկայություն, բախտ և այլն/	72%	82%	81%	86%
Իշխանություն ունեցող մարդիկ հասել են իշխանության իրենց սեփական արժանիքների շնորհիվ	38%	26%	33%	18%
Իշխանություն ունեցող մարդիկ հիմնականում հասել են իշխանության անօրեն ճանապարհով	24%	58%	57%	94%
Աղքատության մեջ հայտնված մարդը ինքն է մեղավոր, սովորաբար այդ մարդիկ չեն ցանկանում սովորել կամ աշխատել	18%	44%	37%	68%
Աղքատության մեջ հայտնված մարդն անձնական մեղավորություն չունի, մեղավոր են պետությունը և հասարակությունը	62%	39%	50%	60%
Ծանր, սակայն կանխարգելվող հիվանդություն ունեցող մարդը ինքն է մեղավոր իր կացության մեջ, քանի որ յուրաքանչյուր ոք պատասխանատու է իր առողջության և առողջ ապրելակերպի համար	38%	26%	33%	48%
Պետությունը պետք է մտածի մարդկանց առողջության մասին, քանի որ այսօր որակյալ բժշկությունը ոչ բոլորին է հասանելի	98%	90%	85%	98%

Թեև ընդհանուր պատկերում բոլոր խմբերն ընդունում են, որ հաջողությունը պայմանավորված է և՛ անհատական ջանքերով, և՛ արտաքին հանգամանքներով, այնուամենայնիվ, խմբային դինամիկայի համեմատության մեջ տարբերությունները արտահայտում են խորը արժեքային շերտեր և ինքնընկալման առանձնահատկություններ (տե՛ս Աղյուսակ 11): Կին իրավապաշտպանների շրջանում նկատվում է առավել հավասարակշռված և ռեալիստական մոտեցում. նրանք միաժամանակ կարևորում են անձնական որակները, կրթությունը, մասնագիտական պատրաստվածությունը, բայց նաև գիտակցում են սոցիալական կապերի և համակարգային պայմանների դերը: Նրանց մեծ մասը (80%) համակարծիք է, որ հաջողությունը արդյունք է ինքնազարգացման, աշխատանքի և նպատակաուղղված ջանքերի, սակայն նրանք չեն բացառում արտաքին գործոնների ազդեցությունը (72%): Այս մոտեցումը վկայում է սոցիալական հզորության և ինքնավստահության ավելի բարձր մակարդակի մասին՝ ձևավորված մասնագիտական կայացման և սոցիալական կապիտալի առկայության շնորհիվ: Արցախից տեղահանված կանանց շրջանում հաջողության ընկալումը որոշ չափով տարբեր է: Նրանք ևս ընդունում են անձնական ջանքերի կարևորությունը (82%), սակայն նույնչափ ուժեղ հավատ ունեն արտաքին գործոնների՝ բախտի, կապերի և քաղաքական իրավիճակի որոշիչ դերի հանդեպ (82%): Այսինքն՝ նրանց համար հաջողությունը հաճախ դիտվում է ոչ թե որպես կանխատեսելի նպատակ, այլ որպես իրավիճակային հնարավորության պատուհան, որի վերահսկելիությունը սահմանափակ է: Սեռական բռնություն վերապրած կանանց մոտ հաջողության ընկալումը առավելապես կենտրոնացած է անձնական որակների վրա: Այս խմբում մյուսների հետ համեմատած ավելի մեծ թվով հարցվողներ են համաձայնվել, որ հաջողությունը կախված է սեփական ջանքերից, բնավորությունից և պատրաստվածությունից (91%): Միևնույն ժամանակ, նրանք չեն ժխտում արտաքին պայմանների ազդեցությունը (81%), սակայն ավելի շեշտում են ներքին ռեսուրսների նշանակությունը: Տրանս կանայք և սեքս աշխատողները, ի տարբերություն մյուս խմբերի, հաջողությունը առավելապես կապում են արտաքին գործոնների հետ՝ կապերի, ֆինանսական հնարավորությունների կամ բախտի (86%): Միևնույն ժամանակ, մյուս խմբերի հետ համեմատության մեջ տրանս կանանց և սեքս աշխատողների խմբի հարցվողների ամենափոքր տոկոսն (60%) է համաձայնվել, որ հաջողությունը կախված է անձնական որակներից: Նրանց համար հաջողությունը հաճախ ասոցացվում է գոյատևման և անվտանգության հետ, այլ ոչ թե ինքնիրացման կամ մասնագիտական առաջխաղացման: Այս մոտեցումը ցույց է տալիս այն, որ սոցիալական համակարգերի անհավասարությունն ընկալվում է ոչ թե որպես վերացական խնդիր, այլ որպես անձնական փորձառություն՝ ամենօրյա պայքարի մակարդակում:

Իշխանության և արդարության վերաբերյալ հարցերում տարբերություններն ավելի ընդգծված են: *Քաղաքացիական հասարակության* ներկայացուցիչների շրջանում (38%) դեռ պահպանվում է որոշակի հավատ արժանիքների հիման վրա առաջխաղացման հնարավորության հանդեպ, սակայն մյուս խմբերում՝ հատկապես *տրանս կանանց* մոտ (94%), գերակշռում է համակարգային

անարդարության ընկալումը (տե՛ս Աղյուսակ 11): Վերջիններիս շրջանում գրեթե միաձայն համոզմունք կա, որ իշխանությունը ձեռք է բերվում անօրեն ճանապարհով: Սա արտացոլում է պետական կառավարման նկատմամբ վստահության գրեթե ամբողջական կորուստը և հասարակական ցինիզմի խորացումը:

Աղքատության և սոցիալական պատասխանատվության հարցերում նույնպես նկատվում են հակասական, բայց բացատրելի օրինաչափություններ: *Կին իրավապաշտպանների* մեծ մասը (62%) կարծում է, որ աղքատությունը համակարգային երևույթ է, և դրա համար մեղավոր են պետությունն ու հասարակությունը: Նրանց համար անհավասարությունը ոչ թե անհատական ձախողում է, այլ հանրային քաղաքականության հետևանք: Իսկ առավել խոցելի խմբերում՝ մասնավորապես *տրանս կանանց և սեքս աշխատողների* շրջանում, հստակ տարանջատում չկա, քանի որ մասնակիցները գրեթե հավասար համամասնությամբ արտահայտել են այն համոզմունքը, որ աղքատության մեջ մարդն ինքն է մեղավոր (68%), բայց միևնույն ժամանակ, որ պետությունն էլ անմասն չէ այդ հարցում (60%): Աղքատության և անհավասարության քննարկման համատեքստում բոլոր խմբերը գրեթե միաձայն ընդգծում են պետության պատասխանատվությունը առողջապահության և հանրային բարեկեցության ապահովման հարցում: Գրեթե բոլոր հարցվածները (85%-98%) համաձայն են, որ պետությունը պետք է հոգա մարդկանց առողջության մասին, քանի որ որակյալ բժշկությունը բոլորին հասանելի չէ: Այս հարցում ձևավորվում է արժեքային կոնսենսուս՝ անկախ սոցիալական դիրքից. նույնիսկ նրանք, ովքեր հակված են սեփական սխալները անձնական պատասխանատվությամբ բացատրելու, ընդունում են, որ հանրային առողջությունը պետության պարտականությունն է:

Այս համատեքստում հարկ է նշել նաև, որ բոլոր խմբերում հարցվածների մեծամասնության (90%) կարծիքով՝ այսօր հասարակությունում աշխատանք գտնելու համար առաջին հերթին հարկավոր է մասնագիտական գիտելիք և հմտություններ: Բացառությամբ *տրանս կանանց և սեքս աշխատողների* խմբի հարցվողների՝ մյուս խմբերի համար երկրորդ տեղում լավ կրթությունն է, ի դեպ՝ առաջնային համարվում է *արտասահմանյան բուհերից* ստացված կրթությունը (40%), ապա *հայաստանյան բուհերից* (36%)՝ միջխմբային աննշան առաջնայնության տատանումներով, իսկ երրորդ տեղում՝ ծանոթություններն ու կապերը (71%): *Տրանս կանանց և սեքս աշխատողների* խմբի կարծիքով համապատասխանաբար երկրորդ տեղում՝ տեսքով համապատասխանել «ընդունված» սեռային ստանդարտներին, օրինակ՝ չերևալ որպես տրանս (58%), և երրորդ տեղում սեռական կողմնորոշման, գենդերային ինքնության կամ սեքս աշխատող լինելու պատճառով խտրական վերաբերմունքի թիրախում չհայտնվելն է (84%):

2.5. Խոցելիության դասակարգում ըստ ինքնագնահատականի և ինքնընկալման

Տվյալների համադրությունը թույլ է տալիս տարբերակել խոցելիության երեք աստիճան՝ կախված եկամտի կայունությունից, զբաղվածության բնույթից, բնակարանային ապահովվածությունից և սոցիալական կապիտալից:

1. Ցածր խոցելիություն (բարձր կայունություն)
Կին իրավապաշտպանների խումբը ցուցաբերում է ամենաբարձր ինքնագնահատականը և վերահսկելիության զգացումը: Հարցվածների գրեթե մեծամասնությունը համոզված է, որ կարող է կառավարել սեփական կյանքը, որոշումներ կայացնել և ազդել իրադարձությունների ընթացքի վրա: Սա վկայում է ձևավորված ինքնավարության մշակույթի և ներքին ուժի մասին: Նրանց համար բնորոշ է ինքնաճանաչման և ինքնախնամքի կիրառված փորձառությունը. շատերը նշում են թերապիայի, մեդիտացիայի, ստեղծարար զբաղմունքների կամ աշխատանքային պարբերական ընդմիջումների կարևորման մասին: Սակայն այս կայունությունը «դյուրավառ» է. բարձր պատասխանատվությունը, հասարակական քննադատությունը և մասնագիտական այրումը կարող են սպառել հոգեբանական ռեսուրսները: Նրանց խոցելիությունը չի բխում ներքին անհավասարակշռությունից, այլ արտաքին ճնշումների և գերակտիվության՝ «միշտ ուժեղ լինելու» պահանջից:

2. Միջին խոցելիություն (միջին կայունություն)
Այս խումբը ներառում է ինչպես սեռական բռնության ենթարկված, այնպես էլ Արցախից տեղահանված կանանց, քանի որ երկու դեպքում էլ կանայք գտնվում են վերականգնման և ինքնաճանաչման ակտիվ փուլում: Թեպետ նրանք անցել են ծանր տրավմատիկ փորձառություններ, վստահ են, որ կարող են կառավարել սեփական կյանքը: Նրանց մոտ ինքնագնահատականը ձևավորվում է որպես ձեռք բերված արժեք՝ երկարատև հոգեբանական աշխատանքի, թերապևտիկ աջակցության, կրթության և անձնական զարգացման շնորհիվ:

Սակայն հոգեբանական վերականգնմանը զուգահեռ շարունակում են առկա լինել սոցիալ-տնտեսական և ընտանեկան ճնշումներ: Այս կանայք ունեն զգայուն հավասարակշռություն՝ հոգեբանական կայունություն ձեռք բերած, բայց արտաքին ռիսկերի նկատմամբ դեռ խոցելի: Հոգեկան առողջության ցուցանիշներն այստեղ ամենացածրերից են՝ ուղեկցվող սթրեսով, վախով և սոցիալական մերժման զգացումով: Սակայն նույն պատմությունների մեջ նկատվում է նաև ինքնապահպանության յուրահատուկ ուժ՝ հարմարվելու, նոր կապեր ստեղծելու և նվազագույն կայունություն ապահովելու համառ ձգտում:

3. Բարձր խոցելիություն (ցածր կայունություն)

Այս խումբն ամենախոցելին է ինքնագնահատականի և ինքնընկալման տեսանկյունից և ներառում է տրանս կանանց և սեքս աշխատողներին: Այստեղ ինքնությունը դարձել է բախման տարածք: Տրանս կանանց և սեքս աշխատողների փոքր տոկոսն է վստահ, որ կարող է կառավարել իր կյանքը, իսկ մեծ մասը նշում է, որ դա ստացվում է «միայն որոշ դեպքերում»: Հոգեկան առողջության գնահատականը նույնպես ամենացածրն է, իսկ սեփական անվտանգության և ինքնությամբ ապրելու հնարավորությունների բավարարվածությունը՝ գրեթե նվազագույն: Խմբի պատմությունները լի են մերժման, բռնության և ինքնախարանի դրվագներով. երբեմն խարանն այնքան խորն է ներծծված, որ մարդը սկսում է հավատալ իր «անարժանությանը»: Այս խորը ինքնության ճգնաժամը ձևավորվում է ոչ թե ներքին, այլ կառուցվածքային պատճառներով՝ ընտանիքի, պետության և հասարակության կողմից ընդունված չլինելու հետևանքով: Այնուամենայնիվ, այս խումբը ցույց է տալիս նաև դիմադրողականության եզակի օրինակներ. ապահով տարածքներում և ՀԿ-ների աջակցությամբ շատերը սկսել են ընդունել իրենց ինքնությունը, գտել անվտանգ միջավայրեր և վերակառուցել սեփական «ես-ը»:

Բաժին 3. Ինքնադրսևորման և ինքնազարգացման հնարավորություններ

Ինքնադրսևորման և ինքնազարգացման հնարավորությունները մարդու բարեկեցության և հոգեբանական կայունության հիմնարար բաղադրիչներից են: Դրանք ոչ միայն վերաբերում են անհատի անձնական աճին, այլև արտացոլում են նրա սոցիալական ներառվածությունը, արժեհամակարգը և հասարակական միջավայրում իր դերի գիտակցումը:

Ինքնազարգացման գաղափարը հիմնվում է Աբրահամ Մասլոուի (Maslow, 1943) «պահանջմունքների հիերարխիայի» տեսության վրա, համաձայն որի ինքնաառեալիզացումը համարվում է մարդու զարգացման ամենաբարձր մակարդակը, որտեղ անհատը ձգտում է իր ներուժի ամբողջական իրագործմանը: Այս տեսության համաձայն՝ մարդը կարող է հասնել ինքնադրսևորման միայն այն դեպքում, երբ ապահովված են հիմնարար կարիքները՝ ֆիզիկական անվտանգություն, սոցիալական պատկանելիություն և ինքնագնահատական: Այս մոտեցումը հատկապես կարևոր է խոցելի խմբերի վերլուծության համատեքստում, որտեղ արտաքին անապահովությունը հաճախ խոչընդոտում է ներքին աճի և ինքնաիրացման գործընթացին:

Հոգեբանական տեսանկյունից Կառլ Ռոջերսի (Rogers, 1959) հումանիստական մոտեցումն ընդգծում է «ինքնության իրականացման միտումը» որպես մարդու բնածին ձգտում դեպի աճ, կատարելագործում և ինքնաբավարարվածություն: Ռոջերսի կարծիքով՝ ինքնազարգացման բնական ընթացքը հնարավոր է միայն այն ժամանակ, երբ մարդը գտնվում է ընդունող և անկաշկանդ միջավայրում, որտեղ բացակայում է քննադատվելու կամ խտրականության վախը: Այս տեսությունն ունի կարևոր կիրառություն գենդերային և սոցիալական խոցելի խմբերի դեպքում՝ ցույց տալով, որ առանց հասարակական ընդունման անհատի ներուժը չի կարող լիարժեք զարգանալ:

Սոցիոլոգիական հարթությունում ինքնադրսևորման հասկացությունը հաճախ կապվում է Ամարտյա Սենի (Sen, 1999) «կարողունակությունների մոտեցման» հետ, ըստ որի մարդու զարգացումը պետք է չափվի ոչ թե միայն նյութական ռեսուրսներով, այլև իրական հնարավորություններով, որոնք մարդուն թույլ են տալիս լինել և գործել այնպես, ինչպես նա ընտրում է: Այս մոտեցման մեջ ինքնազարգացումը դիտվում է որպես ազատության դրսևորում՝ հնարավորությունը ինքնուրույն որոշելու՝ ինչ կյանք ապրել: Այսպիսով, ինքնազարգացումը պայմանավորված է ոչ միայն անձնական ձգտումներով, այլև արտաքին կառուցվածքային պայմաններով՝ կրթության հասանելիություն, սոցիալական կապեր, տնտեսական կայունություն, իրավական պաշտպանվածություն:

Ֆեմինիստական տեսություններում ինքնադրսևորման գաղափարը ստանում է նոր շեշտադրում: Նենսի Ֆրեյզերը (Fraser, 1995) և Ջուդիթ Բաթլերը (Butler, 1990) ընդգծում են, որ կանանց և գենդերային փոքրամասնությունների ինքնազարգացման հնարավորությունները խորապես կախված են ճանաչման և ներկայացվածության արդարության մակարդակից: Այլ կերպ ասած՝ եթե հասարակությունը չի ճանաչում մարդու ինքնությունը և արժանապատվությունը, ապա անհատը զրկվում է լիարժեք ինքնադրսևորման հնարավորությունից:

Այդ պատճառով ինքնադրսևորման և ինքնազարգացման ուսումնասիրությունը խոցելի խմբերի դեպքում պետք է դիտարկել ոչ միայն հոգեբանական, այլև կառուցվածքային ու սոցիալական արդարության համատեքստում: Տեղահանված կանանց, տրանս կանանց, սեռական բռնություն վերապրածների կամ իրավապաշտպանների համար ինքնադրսևորման և ինքնազարգացման ուղիները պայմանավորված են հասարակական ընդունման, անվտանգության, տնտեսական կայունության և ինքնության արտահայտման ազատության համակցությամբ:

3.1. Կյանքի որակի մասին պատկերացումներ

Ներկա իրավիճակում կյանքի որակի գնահատում

Ինքնադրսևորման համար կարևոր նախապայման է կյանքի նկատմամբ ունեցած պատկերացումը, ընկալումը ու սուբյեկտիվ գնահատականը: Տեղի ունեցող իրադարձությունները անձը հակված է գնահատելու ըստ իր կյանքի որակի նկատմամբ ունեցած վերաբերմունքի: Բոլոր հարցվածների պատասխաններից կարելի է դուրս բերել «զգուշավոր լավատեսության» ընդհանուր միտումը: Հարցվածների մեծ մասը նշում է, որ իր կյանքն «այժմ այնքան էլ լավ չէ, բայց կփոխվի դեպի լավը»: Խմբային պատկերում նման տեսակետի կողմնակիցները հետևյալ բաշխվածությունն ունեն՝ Արցախից տեղահանված կանանց շրջանում այդպես է պատասխանել 59%-ը, տրանս կանանց և սեքս աշխատողների շրջանում՝ 54%-ը, սեռական բռնություն վերապրած կանանց խմբում՝ 52%-ը, կին իրավապաշտպանների խմբում՝ 48%-ը: Թեև թվերը մոտ են, դրանց իմաստն ու ներքին տրամաբանությունն ամեն խմբում արմատապես տարբերվում են:

Աղյուսակ 12. Ներկա կյանքի սուբյեկտիվ գնահատումը՝ ըստ մարգինալ, խոցելի խմբերի

Հարց - Ինչպե՞ս կնկարագրեիք Ձեր այսօրվա կյանքը				
	ԻԿ n=50	*ԱՏ n=69*	*ՍԲՎ n=54*	*ՏԿՍԱ n=50*
Իմ կյանքը շատ լավ է և ճիշտ ուղղությամբ է զարգանում	*36%*	*15%*	*29%*	*16%*
Կյանքս հիմա այդքան էլ լավը չէ, բայց կփոխվի դեպի լավը	*48%*	*59%*	*52%*	*54%*
Իմ կյանքը վատ է, և ոչ մի հույս չունեմ, որ կփոխվի	*16%*	*26%*	*19%*	*30%*
Ընդամենը	*100%*	*100%*	*100%*	*100%*

Հոգեբանական տեսությունները ցույց են տալիս, որ կյանքի որակով բավարարվածության սուբյեկտիվ ընկալումները սերտորեն կապված են ինքնագնահատականի, վերահսկելիության զգացումի և սոցիալական ճանաչման հետ: Ստացված արդյունքները հաստատում են այս մոտեցումները:

Հարկ է նշել, որ զգուշավոր լավատեսության հակառակ պատկերն է ներկա իրավիճակը որպես լավ գնահատելու միտումը: Այսպես, օրինակ, կին իրավապաշտպանների խմբում համեմատաբար դրական պատկեր է՝ 36%-ը կարծում է, որ իր կյանքի որակը արդեն «շատ լավ է և ճիշտ ուղղությամբ է զարգանում»: Սեռական բռնություն վերապրած կանանց խմբում դիտվում է հավասարակշռված, բայց բովանդակային առումով տարբերվող պատկեր՝ մեկ երրորդը (29%) հավատում է, որ իր կյանքն արդեն շարժվում է դեպի լավը: Իսկ տրանս կանանց ու սեքս աշխատողների, ինչպես նաև տեղահանված կանանց մոտ ամենավառ արտահայտվածն է ներկայի դժվարության և ապագայի սպասման հակադրությունը: Նշված խոցելի խմբերում համապատասխանաբար միայն 16% և 15%-ն են կարծում, որ իրենց կյանքը հիմա զարգանում է ճիշտ ուղղությամբ:

Անցած տարիների կտրվածքով կյանքի որակի գնահատում

Կանխատեսելիորեն, երեք տարի առաջ իրենց կյանքի որակը ավելի լավը դիտարկողների ամենամեծ տոկոսը հենց տեղահանված կանայք են: Այս խմբում մասնակիցների 68%-ը նշել է, որ երեք տարի առաջ իր կյանքը ավելի լավն էր: Իրականում սա հետպատերազմական, սակայն նախաբլոկադային ժամանակահատվածն է, հետևաբար արդյունքներն ավելի քան խոսուն են: Իրենց կյանքի որակը երեք տարի առաջ ավելի դրական գնահատող խմբերի առումով երկրորդ տեղում են տրանս կանայք և սեքս աշխատողները, նման պատասխան են նշել մասնակիցների 46%-ը: Մյուս երկու խմբերում ավելի հակված են դիտարկելու, որ իրենց կյանքը նույնն է մնացել (տե՛ս Աղյուսակ 13):

Աղյուսակ 13. Կյանքի գնահատման ընկալումը նախորդ երեք տարվա կտրվածքով՝ ըստ մարգինալ, խոցելի խմբերի

Հարց - Կարծո՞ւմ եք արդյոք, որ երեք տարի առաջ Ձեր կյանքն ընդհանուր առմամբ ավելի...				
	ԻԿ n=50	*ԱՏ n=69*	*ՍԲՎ n=54*	*ՏԿՍԱ n=50*
Լավ էր	*34%*	*68%*	*29%*	*46%*
Վատ էր	*22%*	*4%*	*19%*	*16%*
Նույնն էր	*36%*	*24%*	*41%*	*30%*
Դժվարանում եմ պատասխանել	*8%*	*4%*	*11%*	*8%*
Ընդամենը	*100%*	*100%*	*100%*	*100%*

Ընդհանուր պատկերը ցույց է տալիս, որ խոցելի խմբերի կյանքի սուբյեկտիվ ընկալումները ոչ միայն արձանագրում են իրենց սոցիալական և տնտեսական վիճակը, այլև արտացոլում են վերջին տարիներին Հայաստանում տեղի ունեցած կտրուկ քաղաքական, անվտանգային և սոցիալական փոփոխությունների համախառն ազդեցությունը: Լավատեսության և հիասթափության այս համատեղ դաշտը ձևավորվում է միաժամանակ անցյալում ապրած կայունության հիշողության, ներկայի անորոշության և ապագայի նկատմամբ հուսադրող տրամաբանության բախման արդյունքում:

Խոցելի խմբերի կողմից լիարժեք կյանքը սահմանող պայմանները ցույց են տալիս, թե ինչ չափով են նյութական, հոգեսոցիալական և հասարակական գործոնները ձևավորում նրանց առօրյան և ինքնընկալումը: Չնայած խմբերի տարբերությանը՝ բոլորի մոտ առաջին տեղում առանձնանում է ֆինանսական կայունության պահանջը: Կին իրավապաշտպանների 62%-ի, սեռական բռնություն վերապրած կանանց 70%-ի, տեղահանված կանանց 87%-ի և տրանս կանանց ու սեքս աշխատողների 82%-ի կարծիքով՝ գումարի և կայուն եկամտի բացակայությունն է ամենաշատը խոչընդոտում իրենց լիարժեք կյանքին: Ֆինանսական ապահովությունը դիտվում է որպես ոչ միայն նյութական, այլև ինքնուրույնության, անվտանգության և արժանապատիվ գոյության նախապայման: Աշխատանքի կարիքը երկրորդ ամենատարածված բացն է (տե՛ս Աղյուսակ 14)՝ ընդգծված բոլոր խմբերում (54%-ից մինչև 76%): Աշխատանքն ընկալվում է որպես ինքնուրույն գոյության, սոցիալական կապերի և զարգացման ուղի, և դրա բացակայությունը խոցելի խմբերի մեծ մասի համար վերածվում է լիարժեք կյանքի հիմնական սահմանափակման:

Առողջության կարիքը հայտնվում է երրորդ տեղում՝ բոլոր խմբերի համար կարևոր մնալով 42–51% միջակայքում: Սա ցույց է տալիս, որ մարդիկ լիարժեք կյանքը չեն պատկերացնում առանց ֆիզիկական և հոգեկան կայունության: Հետևաբար առողջության հետ կապված խնդիրները շարունակում են դիտվել որպես առօրյա դիսֆունկցիայի աղբյուր: *Կին իրավապաշտպանները* և *սեռական բռնություն վերապրած կանայք* այս հարցում ունեն համեմատաբար հավասարակշռված պատկեր, մինչդեռ *տեղահանվածները* և *տրանս կանայք* այս կարիքը շեշտում են ավելի բարձր մակարդակով՝ պայմանավորված համեմատաբար ավելի պերմանենտ կամ խտացված սթրեսի, տրավմայի կամ վտանգի փորձառությունով:

Աղյուսակ 14. Լիարժեք կյանքի համար անհրաժեշտ պայմանները՝ ըստ մարգինալ, խոցելի խմբերի

Հարց - Լիարժեք կյանքի համար ի՞նչ է Ձեզ պակասում					
Առաջնահերթություն		*ԻԿ n=50*	*ԱՏ n=69*	*ՍԲՎ n=54*	*ՏԿՍԱ n=50*
I	*Փող / ֆինանսական կայունություն*	*62%*	*87%*	*70%*	*82%*
II	*Աշխատանք*	*54%*	*76%*	*58%*	*67%*

III	*Առողջություն*	*46%*	*51%*	*42%*	*48%*
IV	*Ժողովրդավարություն և արդարություն երկրում*	*41%*	*24%*	*35%*	*46%*
	Կրթություն ստանալու հնարավորություն	*22%*	*18%*	*27%*	*34%*
	Ազատ արտահայտվելու հնարավորություն	*18%*	*12%*	*16%*	*59%*
	Հոգեբանական աջակցություն	*14%*	*26%*	*29%*	*51%*
	Ընդունված լինել ընտանիքի / հասարակության կողմից	*9%*	*17%*	*15%*	*73%*
	Անվտանգ միջավայր (խտրականության բացառում)	-	-	-	*68%*

Բացի առաջնային նյութական կարիքներից՝ հարցվածների պատասխանները թույլ են տալիս տեսնել նաև այն արժեքային ու հասարակական շերտերը, որոնք խոչընդոտում են լիարժեք կյանքի զգացողությանը: Կին իրավապաշտպանների համար բարձր է ժողովրդավարության, արդարության, ինստիտուցիոնալ կանխատեսելիության կարևորությունը՝ 41%: Այս խումբը լիարժեք կյանքը պատկերացնում է ոչ միայն որպես առօրյա կայունություն, այլ նաև որպես իրավական և հասարակական միջավայր, որտեղ արդարությունն ու ժողովրդավարությունը իրական գործառույթ ունեն: Նրանք իրենց կյանքի որակի վրա զգում են պետական ինստիտուտների կատարողականի և քաղաքական միջավայրի ազդեցությունը:

Հատկանշական է, որ *տրանս կանանց և սեքս աշխատողների* խմբում բարձրաձայնվում է *ընդունվածության պահանջը*՝ 73%: Նույնատիպ պահանջի շեշտադրում, բայց անհամեմատ ավելի պակաս ինտենսիվությամբ գրանցվել է նաև *տեղահանված և սեռական բռնություն վերապրած կանանց* խմբերում՝ համապատասխանաբար 17% և 15%-ի կողմից: Այսպիսով, այս մարգինալ

խմբերում՝ հատկապես տրանս կանանց և սեքս աշխատողների դեպքում, լիարժեք կյանքի զգացումը ձևավորվում է ոչ միայն նյութական վիճակից, այլ նաև նրանից, թե որքանով են նրանք ընդունված իրենց միջավայրում, որը տեղահանված կանանց պարագայում շեշտադրվում է նաև նոր միջավայրում հայտնվելու հանգամանքով, ինչպես նաև՝ թե որքանով են ազատ նախապաշարմունքներից և կարող են վերաիմաստավորել կյանքը ու ապրել այն առանց պիտակների:

Տրանս կանանց և սեքս աշխատողների մոտ կարևորվում են նաև *անվտանգ, խտրականությունից զերծ միջավայրը* (68%), *ազատ արտահայտվելու հնարավորությունը* (59%) և *հոգեբանական աջակցությունը* (51%): Այս խմբի լիարժեք կյանքի պատկերը առավելապես կախված է այն բանից, թե որքանով կարող են ապրել առանց վտանգի, վախի, հանրային մերժման կամ բռնության: Նրանց պատկերացումները միտում ունեն շարժվելու սիմվոլիկ և գոյաբանական ուղղությամբ. լիարժեք կյանքը համարվում է ոչ միայն նյութական ապահովություն, այլև սեփական ինքնությունը տեսանելի և անվտանգ ձևով արտահայտելու հնարավորություն:

Տեսանելի ապագայի կտրվածքով կյանքի որակի կանխատեսում

Ապագայի մասին պատկերացումները նույնպես հանդես են գալիս որպես ինքնագնահատականի, հույսի, հոգեկան կայունության և սոցիալական վստահության խաչմերուկ: Եթե ներկա կյանքի ընկալման մեջ գերակշռում էր զգուշավոր լավատեսությունը, ապա ապագայի վերաբերյալ պատկերացումները նույն տրամաբանության մեջ ամրապնդվում կամ ճյուղավորվում են՝ կախված խմբի սոցիալ–տնտեսական և հոգեբանական դիրքից:

Տվյալները ցույց են տալիս, որ առաջիկա հինգ տարիները պատկերացնելու ձևը տարբեր խմբերի համար ունի արմատապես տարբեր ենթատեքստեր. մի դեպքում ապագան ձևակերպվում է որպես «կրկին վերականգնելու» հնարավորություն, մի դեպքում՝ «կայունացնելու», իսկ մյուսներում՝ «իրավունքի ճանաչման և արժանապատվության ձեռքբերման» հարթություն:

Հատկապես ուշագրավ է, որ *սեռական բռնություն վերապրած կանանց* և *Արցախից տեղահանված կանանց* մոտ լավատեսական կանխատեսումները ամենաբարձրն են՝ համապատասխանաբար 72% և 68% (տե՛ս Աղյուսակ 15): Այս երկու խմբերում ապագան ընկալվում է վերականգնման գործընթացի շարունակություն. անցած տարիների ճգնաժամերը, տրավմաններն ու կորստի փորձառությունները, որքան էլ ծանր, բայց նաև ստեղծել են «նոր սկզբի» ներքին պահանջմունք: Ապագայի նկատմամբ լավատեսությունը այստեղ ոչ թե հանգիստ իրականության, այլ վճռական հարմարվողականության արդյունք է. մարդկանց զգալի մասը վստահ է, որ նոր միջավայրին ինտեգրվելու, աշխատանք գտնելու, կրթություն ստանալու կամ հոգեբանական կայունություն ձեռք բերելու շնորհիվ հնարավոր կլինի դուրս գալ ներկայիս ծանրությունից:

Աղյուսակ 15. Ապագայում կյանքի որակի կանխատեսում՝ ըստ մարգինալ, խոցելի խմբերի

Հարց - Ինչպե՞ս եք տեսնում Ձեզ հինգ տարի հետո				
	ԻԿ n=50	*ԱՏ n=69*	*ՍԲՎ n=54*	*ՏԿՍԱ n=50*
Լավատեսորեն եմ նայում ապագային, հույս ունեմ ավելի լավ կյանքի	*54%*	*68%*	*72%*	*59%*
Կարծում եմ՝ ապագան կմնա նույնը, շատ բան չի փոխվի	*32%*	*21%*	*19%*	*24%*
Ապագան անորոշ է, դժվար է որևէ լավ բան սպասել	*14%*	*11%*	*9%*	*17%*
Ընդամենը	*100%*	*100%*	*100%*	*100%*

Կին իրավապաշտպանների մոտ ապագայի մասին պատկերացումները նշմարելիորեն ավելի հավասարակշռված են՝ 54% լավատեսությամբ, 32%՝ չեզոք («շատ բան չի փոխվի») և 14%՝ անորոշությամբ (տե՛ս Աղյուսակ 15): Սա արտացոլում է վերջին տարիներին կուտակված հոգնածությունը՝ մասնագիտական այրում, քաղաքական լարվածություն, սթրեսային ֆոն և անվտանգության անորոշություն: Այս խումբն ապագան գնահատում է առավել ռեալիստական տրամաբանությամբ. նրանց հույսը կառուցված է ոչ թե արագ բարելավման, այլ կայունության պահպանման կամ աստիճանական զարգացման վրա: Նրանց պատկերացումները ավելի շատ հիմնված են սեփական ռեսուրսների և ներքին ուժի վրա, քան արտաքին պայմանների: Ապագայի հանդեպ զգուշավորությունն այստեղ արտացոլում է ոչ թե հուսահատություն, այլ սթափ գնահատում: Այստեղ հատկանշական է, որ քաղհասարակության ներկայացուցիչ իրավապաշտպանների խումբը ուղիղ կապ էր տեսնում 2026 թվականի խորհրդարանական ընտրությունների և քաղաքացիական հասարակության վիճակի միջև. այս խումբը գտնում է, որ և՛ այն պարագայում, երբ ներկա իշխանությունը փոխվի (32%), և՛ անկախ նրանից, թե ինչ իշխանություն կլինի (37%) քաղհասարակության վիճակը վատթարանալու է:

Ամենաբարդ պատկերն ունեն *տրանս կանայք և սեքս աշխատողները* (տե՛ս Աղյուսակ 15): Չնայած նրանց 59%-ը նշում է, որ լավատեսորեն է նայում ապագային, սակայն այս լավատեսությունն ունի արմատապես այլ

մեկնաբանություն. այն կապված է ոչ թե սոցիալ–տնտեսական բարելավման սպասման, այլ ինքնության, ընդունման և անվտանգության հետ: Նույն խմբում 17%-ը նշում է, որ ապագան «անորոշ է», և այս ցուցանիշը մյուս խմբերի համեմատ ամենաբարձրն է: Տվյալը խորը կապված է կառուցվածքային խտրականության, իրավական անպաշտպանության և հասարակական մերժման հետ:

Ապագայի մասին սեփական պատկերացումը ձևավորվում է նաև այն գործոնների շուրջ, որոնց շնորհիվ մարդիկ հավատում են, որ իրենց կյանքը կարող է բարելավվել: Այստեղ նույնպես նկատվում են էական խտացումներ: Սեռական բռնություն վերապրած և տեղահանված կանանց համար ապագայի լավատեսության առանցքում զգալի տեղ ունի առողջությունը (համապատասխանաբար՝ 66% և 61%) և կայուն եկամուտը (համապատասխանաբար՝ 65% և 71%): Այս խմբերի համար ապագան նյութական և հոգեբանական վերականգնման համադրություն է. անվտանգության զգացում, աշխատանք ունենալու հնարավորություն, նոր սոցիալական կապեր, երեխաների ապագայի կայունացում:

Կին իրավապաշտպաններն ապագան հիմնականում կապում են ներքին խաղաղության, հոգեկան հավասարակշռության և շարունակական մասնագիտական կայունության հետ (58%-ը նշում է «առողջություն և ներքին խաղաղություն» որպես հիմնական գործոն): Նրանց համար ապագան այնքան նյութական բարեկեցության դաշտ չէ, որքան հոգեկան հանգստության և կյանք-աշխատանք հավասարակշռության վերականգնման տարածք:

Տրանս կանանց և սեքս աշխատողների մոտ ապագայի լավատեսության առանցքային պայմաններն են «ընդունված լինելը» (62%) և «ազատ արտահայտվելու հնարավորությունը» (68%): Այս երկու ցուցանիշները մյուս բոլոր խմբերից տարբերվում են՝ ցուցադրելով, որ այս խմբի՝ ապագայի մասին պատկերացումը պրակտիկ ու գոյապայքարային հարթությունից շեղվում է դեպի արժանապատվության, ինքնության ճշմարիտ ապրելու և անվտանգության հարցերը: Այստեղ ապագան մեկնաբանվում է որպես կյանքի կառուցում մի միջավայրում, որտեղ իրենց անվտանգությանը ոչինչ չի սպառնում:

Եթե փորձենք համադրել այս պատկերները, ապա պարզ է դառնում, որ որքան խորն է խոցելիությունը, այնքան ավելի բարձր է ոչ նյութական կարիքների մասնաբաժինը: Կին իրավապաշտպանների համար լիարժեք կյանքի որակը սահմանվում է հիմնականում համակարգային արդյունավետության և անձնական կայունության չափորոշիչներով: Սեռական բռնություն վերապրած կանանց համար այն սահմանվում է ինքնավերականգնման հնարավորություններով: Տեղահանված կանանց համար՝ անվտանգությամբ, կայունությամբ և նոր կյանք կառուցելու հնարավորությամբ: Իսկ տրանս կանանց և սեքս աշխատողների դեպքում լիարժեք կյանքի առանցքային պայմանը հասարակության կողմից ճանաչում, անվտանգություն և սեփական ինքնությամբ ապրելու անկախություն է:

3.2. Հիմնական վախեր և սոցիալական վստահություն

Հետազոտության արդյունքները բացահայտում են վախերի խորապես շերտավորված դաշտ (տե՛ս Աղյուսակ 16), որտեղ յուրաքանչյուր խոցելի խումբ իր կենսափորձի, անվտանգության զգացողության և սոցիալական դիրքի հիման վրա ձևավորում է հատուկ «վտանգի քարտեզ»: Թեև ընդհանուր համատեքստում Հայաստանի վերջին տարիների պատերազմական և քաղաքական անկայունությունը բոլոր խմբերի մոտ առաջ է բերում ապագայի շուրջ անհանգստություն, սակայն յուրաքանչյուր խումբ ունի սեփական առաջնային վախերը, որոնք միաժամանակ արտացոլում են ինչպես իրական, այնպես էլ ենթադրյալ ռիսկերը:

Աղյուսակ 16. Հիմնական վախերը՝ ըստ մարգինալ խմբերի

Հարց - Ինչի՞ց եք ամենաշատը վախենում			
	ԻԿ n=50	*ԱՏ n=69*	*ՍԲՎ n=54*
Հայաստանում պատերազմից	*35%*	*29%*	*20%*
Ներքաղաքական իրավիճակից	*4%*	*3%*	*4%*
Միջուկային պատերազմից	*2%*	*1%*	*12%*
Բնական աղետներից	*2%*	*1%*	*2%*
Աղքատությունից	*2%*	*3%*	*6%*
Հիվանդություններից	*7%*	*10%*	*4%*
Աշխարհի ընդհանուր վիճակից	*11%*	*16%*	*16%*
Որևէ բանից չեմ վախենում	*9%*	*3%*	*6%*
Նշված բոլոր տարբերակներից	*28%*	*32%*	*31%*
Ընդամենը	*100%*	*100%*	*100%*

Կին իրավապաշտպանների ենթախմբում ամենաուժեղ վախը վերաբերում է նոր պատերազմի հավանականությանը. հարցվածների 35%-ը դա նշում է որպես առաջնային վտանգ: Սա սպասելի օրինաչափություն է այն խմբի համար, որը խորապես ներգրավված է հասարակական գործընթացների մեջ, տեղեկացված է քաղաքական և անվտանգային զարգացումներից և իր աշխատանքային գործունեությամբ մշտապես առնչվում է պատերազմի, բռնության, մարդու իրավունքի խախտումների հետևանքներին: Միևնույն ժամանակ, այս խմբում զգալի հատվածը (28%) դժվարանում է առանձնացնել միայն մեկ վտանգ, նշելով «բոլոր տարբերակները», ինչը վկայում է համընդհանուր սպառնալիքի դաշտում ապրելու մասին և այն, որ անվտանգային ճնշումը բազմակողմանի է՝ ներքաղաքական, միջազգային, սոցիալական ու տնտեսական:

Արցախից տեղահանված կանանց շրջանում նույնպես նկատվում է բազմաշերտ վախի կառուցվածք: Այստեղ ևս մոտ մեկ երրորդը (32%) նշում է «բոլոր տարբերակները», իսկ մյուսների մոտ խոշոր ճյուղավորում կա պատերազմի վախի (29%) և համաշխարհային անկայունության շուրջ անհանգստության (16%) միջև: Տեղահանված կանանց վախերը չունեն մեկ գերիշխող առանցք. դրանք ձևավորվում են կորուստների, ապագայի անորոշության, անվտանգային ցնցումների և սոցիալական անհամապատասխանության միախառն դաշտում, որտեղ ցանկացած նոր ցնցում կարող է դիտվել որպես արդեն վերապրած աղետի կրկնություն: Նրանց ամենօրյա իրականությունն ինքնին «նվազագույն անվտանգության» պայման է, ուստի վախերը դառնում են համապարփակ՝ անհատական մակարդակից մինչև գլոբալ քաղաքականություն:

Սեռական բռնություն վերապրած կանանց շրջանում նույնպես գերակշռում է վտանգների բազմաշերտ ընկալումը: Հարցվածների մոտ մեկ երրորդը (31%) միաժամանակ նշում է բոլոր տարբերակները: Սա վկայում է հոգեկան վիճակի վրա կուտակային ճնշումների ազդեցության մասին: Այս խմբում առանձնահատուկ բարձր է նաև միջուկային պատերազմի վախը (12%), ինչը խիստ հազվադեպ նշված ընտրություն է այլ խմբերում: Սա կարելի է մեկնաբանել ինչպես անվտանգության կտրուկ նվազեցման՝ պատերազմ-համավարակ-տնտեսական ճգնաժամ շղթայի ֆոնին, այնպես էլ անձնական տրավմայի ֆոնին, երբ ցանկացած արտաքին վտանգ ընկալվում է չափազանցված և վերահսկողությունից դուրս:

Աղյուսակ 17. Հիմնական վախերը՝ ըստ մարգինալ խմբերի

Հարց - Ինչից եք ամենաշատը վախենում	
	ՏԿՍԱ n=50
Հայաստանում պատերազմից	*4%*
Բնական աղետներից	*4%*
Աշխարհի ընդհանուր վիճակից	*2%*
Հասարակական վայրերում հարձակման կամ ֆիզիկական բռնության ենթարկվելուց	*6%*
Բժշկական օգնությունից զրկվելուց կամ փրանսֆոբ վերաբերմունքից առողջապահական համակարգում	*2%*
Սոցիալական ցանցերում կամ հանրային հարթակներում հետապնդման կամ կիբերբռնության զոհ դառնալուց	*2%*
Փախստական լինելու դեպքում՝ արտահանձնման կամ ապաստան չստանալու վախից	*2%*
Տրանս մարդկանց նկատմամբ պետական քաղաքականությունների խստացումից (օրինակ՝ այլ երկրներում ընդունված հակագենդերային օրենքներ)	*38%*
Նշված բոլոր տարբերակներից	*40%*
Ընդամենը	*100%*

Ամենաէքզիստենցիալ և յուրահատուկ վախերի դաշտը դիտվում է *տրանս կանանց և սեքս աշխատողների* մոտ (տե՛ս Աղյուսակ 17): Այս խմբում հարցը ուներ մի քանի հավելյալ տարբերակ կոնկրետ տրանս անձնաց մտավախությունների դաշտից: Այստեղ գերակշռող, միանշանակ գլխավոր վտանգը ոչ թե պատերազմն է, աղքատությունը կամ հիվանդությունները, այլ պետական հակագենդերային քաղաքականությունների խստացումը՝ նշվել է այս խմբի հարցվածների 38%–ի կողմից: Այս տվյալը բացառիկ կարևոր է, քանի որ այս խումբը ամենից շատ վախենում է հենց *ինքնության դեմ ուղղված քաղաքական ճնշումից*, խոսում է իր հիմնարար գոյաբանական վտանգի մասին: Նրանց համար անվտանգության հիմնական սպառնալիքը պետությունն է կամ այն քաղաքական մշակույթը, որը կարող է օրինականացնել խտրականությունը: Ավելին՝ այս խմբի մոտ վախերի կառուցվածքը ամբողջությամբ տարբերվում է մնացած երեք խմբերից: Պատերազմը վախի աղբյուր է ընդամենը 2%-ի համար, մինչդեռ «անվտանգ միջավայրից զրկվելը», «հարձակման ենթարկվելը», «կիբերբռնությունը», «բժշկական համակարգում թերարժեք վերաբերմունքը» ձևավորում են վտանգի իրական դաշտը: Սա խոսում է այն մասին, որ այս խումբը ապրում է ոչ թե աշխարհաքաղաքական, այլ ամենօրյա, մարմնական, ֆիզիկական վտանգի մեջ: Նրանց վախերը բխում են միկրոէքզիստենցիալ մակարդակից՝ փողոց, հիվանդանոց, սոցիալական ցանցեր, աշխատանքային միջավայր, ընտանիք: Այդ պատճառով ոչ միայն արտաքին, այլև ինստիտուցիոնալ վտանգներն են իրենցից սպառնալիք ներկայացնում:

Վախերի այս կառուցվածքը անմիջականորեն կապված է նաև սոցիալական վստահության մակարդակի հետ, որոնք բոլոր խմբերում ունեն խորապես տարբեր որակներ (*տե՛ս Աղյուսակ 18*): *Կին իրավապաշտպանների* և *սեռական բռնություն վերապրած կանանց* մոտ պահպանվում է հարաբերական վստահություն մարդկանց հանդեպ, նրանց՝ համապատասխանաբար 78%-ը և 80%-ը հավատում են, որ մարդիկ բարյացկամ են: Սա կարևոր առանձնահատկություն է, նույնիսկ տրավմայի կամ ծանր փորձառության փուլերում նրանք չեն կորցրել սոցիալական կապերի հանդեպ վստահության նվազագույն հիմքը: *Արցախից տեղահանված կանանց* մոտ բարյացկամության ընկալումը ևս բարձր է (86%), սակայն զուգահեռաբար 86%-ը համոզված է, որ մարդիկ սովորաբար «չեն անում այն, ինչ խոստանում են»: Այս հակասական պատկերը բնորոշ է ճգնաժամերից անցած խմբերին՝ վստահության հարաբերակցությունը ձևավորվում է անհատական մակարդակում («մարդիկ օգնում են»), մինչդեռ ինստիտուցիոնալ կամ սոցիալական մակարդակում ձևավորվում է խորը անվստահություն («մարդիկ իրենց խոսքին հավատարիմ չեն»), ինչը վկայում է համակարգային հիասթափության մասին:

Աղյուսակ 18. Սոցիալական վստահության մակարդակը խոցելի խմբերի շրջանում

Հարց - Դուք համաձայն եք, որ ...				
Համաձայն են, որ	ԻԿ n=50	ԱՏ n=69	ՍԲՎ n=54	ՏԿՍԱ n=50
Մարդիկ ընդհանուր առմամբ բարյացակամ են և պատրաստ են օգնել, եթե կա դրա կարիքը	78%	86%	80%	16%
Մարդիկ ընդհանուր առմամբ բարյացակամ չեն և չեն օգնի, եթե կա դրա կարիքը	22%	56%	32%	86%
Մարդիկ ընդհանուր առմամբ վստահելի են և հիմնականում «իրենց խոսքի տերն են»	30%	28%	36%	4%
Մարդիկ ընդհանուր առմամբ վստահելի չեն և հիմնականում չեն անում այն, ինչ խոստանում են	62%	86%	80%	92%
Յուրաքանչյուր մարդ պետք է հավատարիմ մնա իր ցանկություններին և պահանջմունքներին և չզոհաբերի իրեն այլ մարդկանց համար, նույնիսկ մտերիմների	54%	88%	78%	86%
Եթե քո ցանկությունները և պահանջմունքները անհանգստություն են պատճառում քո մտերիմներին, պետք է դրանցից հրաժարվել	26%	62%	40%	18%
Հասարակությունը դժվարությամբ է վստահում կամ ընդունում ԼԳԲՏԻՔ և սեքս աշխատող համայնքներին	-	-	-	100%

Տրանս կանանց և սեքս աշխատողների մոտ վստահության դաշտն արմատապես այլ է: Սա միակ խումբն է, որտեղ ընդամենը 16%-ն է կարծում, որ մարդիկ պատրաստ են օգնություն ցուցաբերել: Միևնույն ժամանակ, 92%-ը համոզված է, որ մարդիկ «վստահելի չեն»: Սա ոչ թե սուբյեկտիվ զգացողություն է, այլ վավերացվող սոցիալական իրականություն. բազմաշերտ խտրականությունն ու բռնությունը ձևավորել են կոլեկտիվ հիշողություն, որտեղ անվտանգ ու վստահելի միջավայր գոյություն ունի միայն որոշակի փակ շրջանակներում: Այդ պատճառով այս խմբի պատասխանները ոչ թե անհատական, այլ կառուցվածքային վստահության ճգնաժամ են արտացոլում:

Վերջապես, բոլոր խմբերում (բացառությամբ իրավապաշտպանների) նկատվում է աճող միտում՝ «մարդը չպետք է զոհաբերի իրեն այլ մարդկանց համար»: Սա հատկապես ուժեղ է *փեղահանված կանանց* (88%) և *տրանս կանանց/սեքս աշխատողների* (86%) մոտ: Այս մոտեցումն արտացոլում է գոյատևման տրամաբանություն. երբ արտաքին ճնշումը մեծ է, առաջնայինը դառնում է անձնական սահմանների պահպանումը, սեփական կարիքների առաջադրման կարիքը՝ որպես հոգեբանական ինքնապաշտպանություն:

Այսպիսով, վախերի ու վստահության դաշտի համադրությունը ցույց է տալիս, որ յուրաքանչյուր խոցելի խումբ ապրում է իր «սոցիալական աշխարհում», որտեղ սպառնալիքները, վստահության հիմքերը և անվտանգության ընկալումները կառուցված են տարբեր սոցիալական փորձառությունների վրա: Եթե կին իրավապաշտպանների մոտ գերակշռում է արտաքին աշխարհաքաղաքական վտանգների շուրջ անհանգստությունը, ապա սեռական բռնություն վերապրած կանանց մոտ՝ վտանգների ընկալման բազմաբնույթությունը, տեղահանված կանանց մոտ՝ կորստի և անորոշության հիմքով ձևավորված համապարփակ վախը, իսկ տրանս կանանց և սեքս աշխատողների մոտ՝ ինստիտուցիոնալ ու հասարակական խտրականության գոյաբանական վտանգը:

3.3. Խոցելիության դասակարգում՝ ըստ ինքնադրսևորման և ինքնազարգացման հնարավորությունների

Տվյալների համադրված վերլուծությունը հնարավորություն է տալիս տարբերակելու խտրականության ազդեցության երեք աստիճան՝ կախված նրանից, թե որքանով է այն սահմանափակում կրթության, աշխատանքի, հանրային մասնակցության, ստեղծագործական ու անձնական զարգացման ուղիները: Խոսքը ոչ միայն խտրականության դեպքերի հաճախականության, այլև դրանց «խորության» մասին է՝ որքանով են դրանք արգելափակում մարդու հնարավորությունները՝ գտնվելու հանրային դաշտում, օգտագործելու իր հմտությունները և կառուցելու զարգացնող կենսուղի:

1. Ցածր խոցելիություն (համեմատաբար լայն ինքնադրսևորման դաշտ)

Այս խմբին կարելի է դասել հարցված կին իրավապաշտպաններին: Խտրականության և թիրախավորման փորձառություններն այստեղ առավելապես կապված են մասնագիտական դաշտի, իրավապաշտպանության և քաղաքական միջավայրի հետ, սակայն դրանք ամբողջությամբ չեն արգելափակում կրթական, մասնագիտական և մասնակցային ուղիները: Կին իրավապաշտպանների համար հասանելի են ֆորմալ կրթությունը, աշխատանքային շուկան, մասնագիտական զարգացումը, ինչպես նաև հանրային և քաղաքական մասնակցությունը: Խտրականությունը և հակաքարոզչությունը սահմանափակում են նրանց անվտանգությունն ու հոգեբանական բարեկեցությունը, բայց ոչ անհրաժեշտաբար՝ իրենց հմտությունների իրացման և կարիերային առաջընթացի հնարավորությունը: Այս խմբի ինքնադրսևորման դաշտը լայն է, սակայն ծանրաբեռնված է բարձր ռիսկերով և մշտական ճնշմամբ:

2. Միջին խոցելիություն (խառը՝ նյութական և արժեքային արգելքներ)

Միջին աստիճանի սահմանափակում բնորոշ է ինչպես սեռական բռնություն վերապրած կանանց, այնպես էլ Արցախից տեղահանված կանանց: Սեռական բռնություն վերապրած կանանց դեպքում խտրականությունն ու խարանավորումը կարող են նվազեցնել ինքնավստահությունն ու հանրային ինքնադրսևորման պատրաստակամությունը, սակայն աջակցության ծառայությունների, կրթության և աշխատանքի հասանելիությունը նրանց հնարավորություն է տալիս վերականգնելու և ընդլայնելու ինքնազարգացման ուղիները: Այս խմբի ներսում միաժամանակ կան և՛ դեռ խորը սահմանափակված, և՛ արդեն կայունացած և ավելի ազատ ինքնադրսևորման փուլում գտնվող կանայք:

Արցախից տեղահանված կանանց դեպքում խտրականության ազդեցությունը հիմնականում միջնորդվում է սոցիալ–տնտեսական խոչընդոտներով. բնակարանային անկայունությունը, աշխատանքի դժվար հասանելիությունը և «օտար» լինելու զգացումը սահմանափակում են կրթությանը, մասնագիտական

աճին և հանրային մասնակցությանը վերադարձի հնարավորությունները: Սակայն ի տարբերություն տրանս կանանց և սեքս աշխատողների՝ այս խմբի ինքնության հարցը ինքնին խտրականության թիրախում չէ, և երկարաժամկետ քաղաքական ու սոցիալ–տնտեսական աջակցության պարագայում ինքնադրսևորման և ինքնազարգացման ուղիները կարող են զգալիորեն բացվել:

3. Բարձր խոցելիություն (ինքնության և անվտանգության վրա ուղղված խոչընդոտներով)

Այս դասակարգմամամբ՝ ամենաբարձր խոցելիություն ունեն տրանս կանայք և սեքս աշխատողները: Այստեղ խտրականությունը կառուցվածքային է և ուղղված է հենց ինքնության հիմքերին. մարդիկ սահմանափակված են աշխատանքի շուկայում, կրթական միջավայրում, առողջապահական համակարգում, հանրային տարածքներում և հաճախ՝ նույնիսկ ընտանիքի շրջանակում: Անվտանգության, ընդունվածության և արժանապատվության պակասը սահմանափակում է ոչ միայն մասնագիտական կամ տնտեսական, այլ նաև ստեղծագործական, սոցիալ–մշակութային և քաղաքական ինքնադրսևորման հնարավորությունները: Այս խմբի մեծ մասի համար ինքնազարգացումը կախված է նախ և առաջ անվտանգ, խտրականությունից զերծ միջավայրերի և ՀԿ–ների կամ համայնքային կառույցների միջոցով ձևավորված «ապահով տարածքների» առկայությունից: Մինչ այդ, խտրականությունն ակտիվորեն նեղացնում է նրանց կյանքի ընտրությունների սպեկտրն ու զսպում սեփական «ես»-ի բաց և տեսանելի զարգացման հնարավորությունները:

Բաժին 4. Խտրականություն և իրավունքների ոտնահարում

Խտրականությունն ու իրավունքների ոտնահարումը խոցելի և մարգինալ խմբերի կյանքում չբացառված և հաճախ հանդիպող երևույթ է: Մարդու իրավունքների տեսանկյունից խտրականությունը դիտարկվում է ոչ թե միայն առանձին անհատի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի կամ անարդար որոշման, այլ նաև որպես համակարգային երևույթ, որը սահմանափակում է մարդկանց՝ հավասար քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքին մասնակցելու իրավունքը (OHCHR, 2016): Հատկապես այն խմբերի պարագայում, որոնք արդեն իսկ ապրում են սոցիալ–տնտեսական անապահովության, տեղահանության, սեռական կամ գենդերային հիմքով խարանման պայմաններում, խտրականության յուրաքանչյուր դրվագ վերարտադրում է գոյություն ունեցող անհավասարությունները՝ խորացնելով մարգինալացումը և իրավազրկության զգացումը:

Քրենշոուի առաջարկած փոխհատական մոտեցումն (Crenshaw, 1989) ընդգծում է, որ խոցելի խմբերի նկատմամբ խտրականությունը միաչափ չէ, այն ձևավորվում է տարբեր փոփոխականների ու կառուցվածքային դիրքերի հատման կետում: Օրինակ՝ կին լինելը, տեղահանված լինելը, ԼԲՏՔ+ կամ սեքս աշխատող լինելը, աղքատությունը և այլ փորձառությունները չեն համադրվում պարզ գումարման եղանակով: Այս հատման կետերում ծնվում են խտրականության յուրահատուկ, «խոշորացված» մոդելներ, որոնք անհնար է հասկանալ միայն մեկ չափորոշչի տեսանկյունից: Հետևաբար, խոցելի խմբերի իրավունքների ոտնահարումները պետք է վերլուծել հենց այս խաչաձևության տրամաբանությամբ՝ տեսնելով, թե ինչպես են տնտեսությունը, գենդերային նորմերը, պատերազմն ու քաղաքական ճգնաժամերը միասին ձևավորում մարդկանց նկատմամբ վերաբերմունքի որակը:

Սոցիալական ճանաչման տեսությունն (Honneth, 1995) առաջարկում է խտրականությունը դիտարկել որպես սոցիալական անհարգալից վերաբերմունքի և չճանաչման արտահայտություն: Երբ անձին կամ խմբին հետևողականորեն զրկում են հարգանքի, արժանապատվության և պատկանելիության զգացումից ընտանիքում, համայնքում, աշխատաշուկայում կամ պետական համակարգում, խախտվում է ոչ միայն նրա իրավական պաշտպանվածությունը, այլ նաև ինքնագնահատականը, սոցիալական կապերի և վստահության հիմքերը: Սա հատկապես ակնառու է այն խմբերի դեպքում, որոնք առնչվում են «ներքնայնացված խտրականության կամ ստիգմայի» երևույթին (Corrigan & Watson, 2002): Վերջինիս համաձայն՝ երկարաժամկետ մերժումը, ատելության խոսքն ու համակարգային անարդարությունը կարող են վերածվել մի իրավիճակի, երբ մարդը ինքն է սկսում կասկածի տակ դնել իր արժանապատվությունը, ինչպես նաև անվտանգ և լիարժեք կյանքով ապրելու իր հիմնարար իրավունքը:

Մինորիթեթային սթրեսի տեսությունը (Meyer, 2003) ցույց է տալիս, որ խտրականության շարունակական փորձառությունը ոչ միայն խաթարում է հոգեկան առողջությունը, այլ նաև ստեղծում է երկարատև սթրեսի համակարգ, որն ազդում է կյանքի բոլոր ոլորտների վրա՝ կրթությունից և աշխատաշուկայից մինչև ընտանիք, միջանձնային և հանրային հարաբերություններ: Տրանս անձանց և սեքս աշխատողների համար խտրականությունն առավել հաճախ նշանակում է ոչ միայն իրավական անպաշտպանություն, այլ նաև ֆիզիկական անվտանգության մշտական սպառնալիք, հանրային վայրերում ազատ տեղաշարժի սահմանափակում, բռնության և սպառնալիքների ռիսկի բարձր մակարդակ: Նման պայմաններում մարդու «իրավունքներն» ու «անվտանգությունը» վերածվում են ոչ թե աբստրակտ իրավական կատեգորիաների, այլ ամենօրյա գոյության հարցի:

Միևնույն ժամանակ, մարդու իրավունքների նորմատիվ շրջանակը՝ ինչպես միջազգային փաստաթղթերում, այնպես էլ ազգային օրենսդրության մեջ, պարտավորեցնում է պետությանը ապահովել ոչ խտրականության, հավասարության և արդյունավետ պաշտպանության երաշխիքներ. ոչ միայն չխտրականացնելու, այլ նաև ակտիվորեն միջամտելու այնտեղ, որտեղ առկա են համակարգային խոցելիություն և մարգինալացում (UN, 2011; ECRI, 2018): Սակայն այս հետազոտությունը ցույց է տալիս, որ խոցելի խմբերի զգալի մասի նկատմամբ խտրականություն և իրավունքների խախտումներ տեղի են ունեցել հենց այն դաշտերում, որտեղ պետությունը կամ ինստիտուտները պետք է հանդես գային որպես պաշտպաններ՝ ոստիկանություն, դատարաններ, սոցիալական ծառայություններ, առողջապահական համակարգ:

4.1. Խտրականության տեսակների դրսևորումները մարգինալ խմբերում

Հիմնվելով քննարկված տեսական մոտեցումների և դիտարկումնեի վրա՝ կարելի է արձանագրել, որ խտրականությունը և իրավունքների ոտնահարումներն անհրաժեշտ է դիտարկել ոչ թե որպես եզակի դեպք, այլ կառուցվածքային, կրկնվող և շղթայական երևույթ, որն ուղղակիորեն ազդում է խոցելի խմբերի սոցիալ–տնտեսական վիճակի, հոգեկան առողջության, ինքնագնահատականի և ապագայի նկատմամբ ունեցած սպասումների վրա: Տեսական այս դիտարկումը արտացոլված է նաև հարցման արդյունքներում: Ինչպես երևում է Աղյուսակ 19-ից, խտրական վերաբերմունքի ընդհանուր մակարդակը խիստ տարբերվում է խմբերի միջև:

Աղյուսակ 19. Խտրականության դեպքերը՝ ըստ խոցելի, մարգինալ խմբերի

Հարց - Վերջին մեկ տարվա ընթացքում հանդիպե՞լ եք արդյոք որևէ խտրականության/ իրավունքների ոտնահարման				
	ԻԿ n=50	*ԱՏ n=69*	*ՍԲՎ n=54*	*ՏԿՍԱ n=50*
Այո	*16%*	*24%*	*32%*	*78%*
Ոչ	*84%*	*76%*	*68%*	*22%*
Ընդամենը	*100%*	*100%*	*100%*	*100%*

Եթե կին իրավապաշտպանների շրջանում վերջին մեկ տարվա ընթացքում խտրական վերաբերմունքի մասին հայտնել է մասնակիցների 16%-ը, Արցախից տեղահանված կանանց մոտ այդ ցուցանիշը հասնում է 24%-ի, սեռական բռնություն վերապրած կանանց մոտ՝ 32%-ի, իսկ տրանս կանանց և սեքս աշխատողների խմբում գրանցվել է գրեթե համատարած խտրականություն՝ 78%: Այս բաշխվածությունը վկայում է խտրականության խորապես շերտավորված բնույթի մասին, այն է՝ որքան խոցելի և մարգինալ է խումբը, այնքան բարձր է ինչպես խտրականության հաճախականությունը, այնպես էլ դրա ինտենսիվությունն ու բազմաչափությունը:

Տրանս կանանց և սեքս աշխատողների խմբի պարագայում խտրականությունը ամենից հաճախ դրսևորվում է հենց այնտեղ, որտեղ մարդը պետք է ունենա նվազագույն անվտանգություն և պաշտպանվածություն՝ ընտանիքում և մտերիմների միջավայրում, հանրային վայրերում ու ծառայություններ ստանալիս, ինչպես նաև աշխատաշուկայում: Նրանք հաճախ բախվում են ոչ միայն վիրավորանքների ու ատելության խոսքի, այլ նաև բաց ֆիզիկական և սեռական բռնության, ծառայություն չտրամադրելու, խանութից կամ ծառայության մատուցման վայրից դուրս մղվելու դեպքերի, ոստիկանության կողմից լուրջ վերաբերմունքի բացակայության, ինչպես նաև աշխատանքի ընդունման չարդարացված մերժումների: Նրանց պատմություններում կրկնվող մոտիվ է «ամենօրյա խտրականության» գաղափարը, երբ մարդու արտաքին տեսքը, գենդերային ինքնությունը կամ սեռական կողմնորոշումը դառնում են ոչ միայն վեճի, այլև վտանգի պատճառ:

Արցախից տեղահանված կանանց խումբը ևս բախվում է բազմաշերտ խտրականության, ինչը, ըստ հարցվածների ընկալման, հիմնականում պայմանավորված է «արցախցի» լինելով: Այսպես, օրինակ, հարցվածները որպես խտրականության դրդապատճառ նշել են այն, որ բնակարան վարձելիս հաճախ նրանց մերժում են կամ կասկածի տակ են դնում վճարունակությունը, աշխատաշուկայում և ծառայություններ ստանալիս արձանագրվում են խարանող արտահայտություններ, պետական մարմիններում Արցախից տեղահանված անձանց վերաբերվում են որպես «օտար», «ժամանակավոր», «փախստական»՝ նույնիսկ ՀՀ քաղաքացիության առկայության պարագայում: Մի շարք պատասխաններում տեղահանված կանայք նշում են, որ իրենց սիրում են կոչել «փախստական սեփական երկրում», ինչպես նաև նշում են, որ իրավական կարգավիճակի անորոշությունը և տրամադրված աջակցության կրճատումը խորացնում են «չընդունվածության» զգացումը: Խտրականությունը տարածվում է նաև առողջապահական համակարգի, սոցիալական պաշտպանության և կրթական հաստատությունների վրա, որտեղ արցախցի լինելը հարցվածների ընկալմամբ հաճախ վերածվում է լրացուցիչ թիրախավորման հիմքի:

Սեռական բռնություն վերապրած կանանց խումբը խտրականության է ենթարկվում ավելի շատ սոցիալական և ընտանեկան միջավայրում, ինչպես նաև աշխատավայրում և հանրային ծառայություններ ստանալիս: Հարցվածների մեկնաբանություններից հնարավոր է դուրս բերել խարանող վերաբերմունքի, մեղադրանքի ենթարկվելու, ընտանեկան և զուգընկերային բռնության, սեռական ոտնձգությունների, ինչպես նաև իրավապահ մարմինների կողմից ոչ լուրջ վերաբերմունքի մասին խոսող դեպքեր: Որոշ դեպքերում սեռական ոտնձգության վերաբերյալ բողոքներն անտեսվել են, գործերը չեն քննվել, կամ կանայք ստիպված են եղել հանդուրժել ոստիկանության հեգնական և մեղադրական վերաբերմունքը:

Կին իրավապաշտպանների խումբը խտրականության է ենթարկվում ավելի շատ իր մասնագիտական գործունեության, քաղաքացիական ակտիվության և գենդերային ինքնության շուրջ ձևավորված կարծրատիպերի պատճառով: Հարցվածների պատասխաններում նկարագրվում են իրավիճակներ, որտեղ ակտիվիստ կանայք թիրախավորվել են որպես «գրանտակեր», «սորոսական», ենթարկվել են ատելության ու պիտակավորման՝ սոցիալական ցանցերում, պետական կառույցներում, դատարաններում, քաղաքական կամ բիզնես շահերին հակադրված դիրքորոշում հնչեցնելու համար: Ոմանք պատմում են նաև գենդերային հիմքով խտրական, սեքսիստական վերաբերմունքի մասին՝ մասնագիտական կարծիքը լուրջ չընկալելու, «տղամարդ» ղեկավարի ակնկալիքի, կանանց որոշումների բացառման և այլնի տեսքով:

4.2. Խտրականության դեպքերի կանխարգելում կամ արձանագրում

Խտրականության դեպքերում հարցվածների կողմից համապատասխան կանխարգելիչ կամ պատժիչ քայլերի դիմելու վարքագծի վերլուծությունը (տե՛ս Աղյուսակ 20) ցույց է տալիս ոչ պակաս կարևոր օրինաչափություն:

Աղյուսակ 20. Խտրականության դեպքում կանխարգելիչ կամ պատժիչ քայլերի քարտեզ

Հարց - Ի՞նչ քայլեր եք ձեռնարկել				
	ԻԿ n=50	*ԱՏ n=69*	*ՍԲՎ n=54*	*ՏԿՍԱ n=50*
Դիմել եմ ոստիկանություն	*0%*	*0%*	*9%*	*5%*
Դիմել եմ հասարակական կազմակերպություն	*3%*	*5%*	*16%*	*28%*
Փորձել եմ ինքս լուծել հարցը	*59%*	*25%*	*47%*	*43%*
Ոչինչ չեմ արել	*38%*	*70%*	*28%*	*25%*
Ընդամենը	*100%*	*100%*	*100%*	*100%*

Տվյալների վերլուծությունն ընդգծում է խտրականության փորձառությանը արձագանքելու բազմավեկտոր վարքագծային մոդելներ, որոնք ձևավորվում են ոչ թե անհատական, այլ կառուցվածքային, ինստիտուցիոնալ և խմբային գործոններով: Չորս խմբերը ներկայացնում են խոցելիության տարբեր ձևեր, հետևաբար՝ արձագանքման տարբեր ռազմավարություններ:

Բոլոր չորս խմբերի դեպքում ոստիկանություն դիմելու մակարդակը գրեթե բացակայում է (*տե՛ս Աղյուսակ 19*): Սա վկայում է համակարգային միտման մասին՝ ոստիկանությունն ու իրավապահ ոլորտը չեն ընկալվում որպես արդյունավետ կամ անվտանգ մեխանիզմ խտրականությանը կամ իրավունքների խախտմանը պատասխանելու համար: Սա կարող է պայմանավորված լինել ինստիտուցիոնալ վստահության պակասով, իրավական պաշտպանության արդյունավետության նկատմամբ ցածր ակնկալիքներով, խոցելի խմբերի նկատմամբ համակարգային կողմնակալության փորձառություններով (օր.՝ տրանս կանանց ու սեքս

աշխատողների և սեռական բռնություն վերապրածների խմբերում), բացասական փորձառությունների հետ կապված ռիսկերով: Այսպիսով, ֆորմալ պաշտպանական համակարգը գործնականում դուրս է ընկած խոցելի խմբերի պաշտպանության համակարգից: ՀԿ–ներին դիմելու մակարդակը կարևոր ցուցանիշ է ոչ ֆորմալ ինստիտուցիոնալ վստահության համար (տե՛ս Աղյուսակ 19): Տրանս կանանց և սեքս աշխատողների խումբն օգտվում է բացառապես համայնքահեն աջակցության ցանցերից և ՀԿ-ների ծառայություններից (28%), քանի որ պետական համակարգը նրանց համար անվտանգ կամ ներառական չէ: Սեռական բռնություն վերապրած կանանց խմբում ՀԿ-ների նկատմամբ վստահությունը նույնպես հարաբերականորեն բարձր է՝ կապված պաշտպանական ծառայությունների և տրամադրվող աջակցության հասանելիության հետ: Տեղահանված կանանց խմբի ցուցանիշը ցածր է, քանի որ վերջիններս նոր միջավայրում չունեն հաստատված կապեր կամ տեղական կազմակերպությունների մասին տեղեկություն: Ինչ վերաբերվում է իրավապաշտպան կանանց խմբում արձանագրված ցածր ցուցանիշին, ապա վերջինս չի նշանակում բացասական վերաբերմունք ՀԿ-ների հանդեպ, այլ ցույց է տալիս բարձր ինքնավարություն և ինքնուրույնության մշակույթ: Ոստիկանությանը կամ ՀԿ-ներին դիմած հարցվածների (223-ից 35) մեծամասնությունը՝ 65%-ը նշել է, որ ստացել է անհրաժեշտ աջակցությունը, իսկ մնացած 35%-ի պարագայում անհրաժեշտ աջակցությունը չի տրամադրվել:

Խնդրին ինքնուրույն լուծում տալու կամ ընդհանրապես ոչինչ չանելու միտումներն ուսումնասիրելիս կարող ենք փաստել, որ այս առումով ամենաբարձր ցուցանիշը դրսևորում են *իրավապաշտպան կանայք*, ինչը մեծամասամբ պայմանավորված է բարձր իրավագիտակցությամբ, հմտություններով և ինստիտուցիոնալ գործընթացների իմացությամբ: Ըստ ինքնուրույնության մակարդակի՝ երկրորդ հորիզոնականում *սեռական բռնություն վերապրած կանայք են*, ում կողմից ինքնուրույն արձագանքը վկայում է ինքնապաշտպանական վարքագծի ձևավորման մասին՝ պայմանավորված խարանավորման և անվստահության փորձառություններով: *Տրանս կանանց և սեքս աշխատողների* խմբում ինքնուրույնության բարձր մակարդակը պայմանավորված է մշտական օտարվածության պայմաններում գոյատևելու պրակտիկաներով և համայնքային ինքնավստահության ռազմավարություններով: *Տեղահանված կանանց* խմբում ինքնուրույնություն գործելու ցուցանիշը ամենացածրն է, մինչդեռ ոչինչ չանելունը՝ ամենաբարձրը, ինչը կարող է կապված լինել սոցիալական մարդկային կապիտալի կտրուկ անկման, տրավմայի և նոր միջավայրում կողմնորոշման բացակայության հետ:

Ինքնուրույն հարցին լուծում տալու կամ ընդհանրապես որևէ արձագանք չտալու ռազմավարության հիմքում հարցվածների խմբերում էական տարբերություն չի գրանցվել: Գերակշռող դրդապատճառը եղել է անվստահությունը՝ «չունեմ վստահություն ոչ պետական, ոչ հասարակական կառույցների նկատմամբ» (45%), «միևնույն է որևէ մեկը ինչ չէր օգնելու» (37%) և վախը հանրայնացումից (18%):

Աղյուսակ 21. Ամենախոցելի խմբերը՝ ըստ հարցվածների

Հարց - Ձեր կարծիքով ՝ նշված խմբերից որո՞նք են ամենաշատը հանդիպում խտրականության Հայաստանում				
	ԻԿ n=50	*ԱՏ n=69*	*ՍԲՎ n=54*	*ՏԿՍԱ n=50*
Լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր, քվիր համայնքի ներկայացուցիչները	*48%*	*10%*	*19%*	*82%*
Տեղահանվածները	*0%*	*62%*	*6%*	*0%*
Բռնության ենթարկված կանայք	*8%*	*6%*	*35%*	*2%*
Սեռական բռնության զոհերը	*4%*	*1%*	*14%*	*0%*
Հաշմանդամություն ունեցող մարդիկ	*4%*	*7%*	*6%*	*0%*
Բանտարկյալները և այլ փակ հաստատություններում գտնվող անձիք	*10%*	*3%*	*2%*	*0%*
Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձիք	*10%*	*4%*	*6%*	*2%*
ՄԻԱՎ/ՁԻԱՀ ունեցողները	*2%*	*0%*	*2%*	*0%*
Սեռական ծառայություններ մատուցողները/սեքս աշխատողներ	*7%*	*0%*	*4%*	*14%*
Հայաստանում աշխատանքային միգրանտները, մասնավորապես ՝ հնդիկները	*7%*	*1%*	*4%*	*0%*
Հայաստանում որևէ խումբ խտրկանության չի ենթարկվում	*0%*	*6%*	*2%*	*0%*
Ընդամենը	*100%*	*100%*	*100%*	*100%*

Հարցված խմբերի կողմից հասարակությունում առավել խոցելի խմբերի դասակարգման միտումն ուսումնասիրելիս կարելի է տեսնել հետևյալ պատկերը՝ խումբը որքան խոցելի է հասարակության մեջ, այնքան ավելի հաճախ է նշում իր սեփական խմբին (ingroup bias): Այսպիսով, սեռական բռնություն վերապրած, տեղահանված կանայք, ինչպես նաև տրանս կանայք ու սեքս աշխատողները հիմնականում մատնանշում են ինքնադասվող խոցելիությունները: Տրանս կանանց ու սեքս աշխատողների խումբը կենտրոնանում է սեռական ու գենդերային ինքնության հիմքով խտրականության վրա, քանի որ դա իրենց հիմնական փորձառությունն է: Նույն օրինաչափությունը նկատելի է նաև սեռական բռնություն վերապրած կանանց խմբում, որը զգայուն է բռնության, սեռական բռնության և խարանավորման թեմաների հանդեպ: Կանխատեսելիորեն, տեղահանված կանանց խմբի ուշադրությունն ամբողջությամբ կենտրոնացած է տեղահանվածների խոցելիության վրա, ինչը նորմալ է զանգվածային տրավմայի և տեղաշարժի դեպքում:

Միայն իրավապաշտպան կանանց խումբն ունի առավել լայն սոցիալական դիտարկում՝ ընդգրկելով խոցելիության բազմաթիվ կատեգորիաներ: Այսպես, նրանք համակարգային կերպով նկատում են հոգեկան առողջության, փակ հաստատությունների և միգրանտների խտրականության խնդիրները:

Եթե համախմբենք բոլոր խմբերի պատասխանները և դիտարկենք ընդհանուր պատկերը, ապա պարզվում է, որ հարցվածների կողմից առաջին տեղում ամենաշատը որպես խտրականության ենթարկվող խումբ է դիտարկվել հենց ԼԳԲՏՔ+ համայնքը: Այս խումբը բոլոր հարցվածների կողմից ստացել է ամենաբարձր ցուցանիշը՝ 223 հարցվածի 36%-ը նշել է ԼԳԲՏՔ+ համայնքը որպես ամենախոցելի և ամենահաճախը խտրականության ենթարկվող խումբ: Սա վկայում է, որ անկախ խմբային պատկանելությունից՝ հասարակության մեջ ԼԳԲՏՔ+ համայնքը ընկալվում է որպես Հայաստանում ամենաբարձր մակարդակի խտրականության զոհ: Երկրորդ տեղում է հայտնվում տեղահանվածները կատեգորիան (223 հարցվածների 22%-ը), սակայն այս գնահատականը չափազանց բարձր է միայն տեղահանված կանանց խմբում և գրեթե բացակայում է մնացած խմբերում, ինչը խոսում է խոցելիության «ներքին» ընկալման մասին, այլ ոչ թե լայն հասարակական գնահատականի: Երրորդ խումբը ընդհանրապես բռնության ենթարկված կանայք են (223 հարցվածների 11%-ը), որը համապատասխանաբար բարձր էր հատկապես սեռական բռնություն վերապրած կանանց խմբում, բայց զգալիորեն ցածր էր մյուսներում:

4.3. Խոցելիության դասակարգում՝ ըստ խտրականության և իրավունքի ոտնահարման դրսևորումների

Խտրականության փորձառությունների և իրավունքի ոտնահարման դրսևորումների համադրությամբ հնարավոր է տարբերակել խոցելիության երեք աստիճան, որոնք հստակ ցույց են տալիս ինչպես ինստիտուցիոնալ վերաբերմունքի, այնպես էլ խմբային դիմադրողականության, վստահության և ինքնապաշտպանության կարողությունների տարբերությունը:

1. Ցածր խոցելիություն՝ ինստիտուցիոնալ մուտքի և ինքնուրույնության պայմաններում

Կին իրավապաշտպանները խտրականության են բախվում հիմնականում իրենց մասնագիտական դերի, ակտիվության և հասարակական ներկայության պատճառով: Սակայն այդ խտրականությունը հիմնականում արտահայտվում է սիմվոլիկ՝ վիրավորական լեզվի, պիտակավորման կամ սեքսիստական վերաբերմունքի տեսքով: Նրանց ուժեղ կողմը ինստիտուցիոնալ գործընթացներին առնչվելու փորձառությունն ու իրավագիտակցությունն է: Դրա շնորհիվ այս խումբը կարողանում է ինքնուրույն գործել, արձագանքել խախտումներին և հաճախ չի տեսնում անհրաժեշտություն՝ դիմելու արտաքին աջակցության: Նրանց խոցելիությունն արտահայտվում է ոչ թե իրավական անպաշտպանության, այլ մասնագիտական այրման, հանրային ճնշման և լեգիտիմության կորստի ռիսկերով:

2. Միջին խոցելիություն՝ վերականգնվող ռեսուրսներով և որոշակի աջակցությամբ

Սեռական բռնություն վերապրած կանանց խմբում այս դասակարգմամբ խոցելիությունը հարաբերական հավասարակշռության առանցքում է: Մի կողմից նրանք ապրում են պիտակավորման, մեղադրման, համակարգային անտարբերության և հանրային մերժման պայմաններում, մյուս կողմից որոշ չափով օգտվում են ՀԿ-ների կողմից առաջարկվող ծառայություններից և ձևավորել են ինքնապաշտպանական վարքագծի տարրեր: Այս կանանց ինքնագնահատականը, հոգեկան առողջության վիճակն ու անվտանգության ընկալումը խոցելիության բարձր աստիճանի ցուցիչներ են, սակայն որոշ դեպքերում նրանք նաև փորձում են փոխել իրենց միջավայրը՝ վերականգնելով անձնական սահմաններն ու սոցիալական կապերը:

Միջին խոցելիության դասակարգման շրջանակում կարող են դիտարկվել նաև Արցախից տեղահանված կանայք: Վերջիններիս պարագայում խտրականության փորձառությունը ներկա իրավիճակում հաղորդվում է գրեթե բոլոր կենսական ոլորտներում: Թեպետ նրանք անձնական մակարդակում դեռ պահպանում են բարյացակամության հանդեպ վստահություն, հանրային և ինստիտուցիոնալ մակարդակում ձևավորվել է խորը հիասթափություն: Այս կանայք հիմնականում

պասիվ են արձագանքում խտրականությանը՝ ոչ այն պատճառով, որ չեն ցանկանում պաշտպանվել, այլ որովհետև չունեն բավարար կողմնորոշում, կապեր կամ համակարգային վստահություն: Նրանց խոցելիությունը խորապես շաղկապված է տեղահանման փորձառությամբ՝ կորստի, մասնատված ինքնության և սոցիալական կապիտալի անկման տրավմայով:

3. Բարձր խոցելիություն՝ համատարած խտրականության և գոյաբանական ռիսկի պայմաններում

Տրանս կանայք և սեքս աշխատողները ամենախոցելին են խտրականության և իրավունքների ոտնահարման տեսանկյունից: Նրանց փորձառությունը ներառում է պերմանենտ բռնության տարրեր՝ իրենց տարբեր դրսևորումներով, պետական մարմինների անգործություն, սոցիալական մերժում և ինքնության նկատմամբ ուղղված բացասական քաղաքական սպասումներ: Նրանք հաճախ են դուրս մղվում հանրային տարածքներից, ենթարկվում կիբերհետապնդման, բժշկական խտրականության, ֆիզիկական սպառնալիքի: Նրանց արձագանքման ռազմավարությունները հիմնվում են ոչ թե պետության, այլ համայնքային ցանցերի վրա: Խոցելիության բարձր աստիճանը պայմանավորված է այն հանգամանքով, որ նրանք չունեն ոչ միայն ինստիտուցիոնալ պաշտպանություն, այլև հասարակական ընդունում: Խտրականությունը նրանց համար դարձել է գոյաբանական վտանգ՝ սպառնացող ոչ միայն ինքնության, այլև առօրյա ֆիզիկական անվտանգության մակարդակում:

Բաժին 5. Արդյունքների ամփոփումը՝ ըստ հետազոտության խնդիրների

Այս բաժնում հետազոտության արդյունքները կդիտարկվեն հետազոտական խնդիրների պրիզմայով՝ հասկանալու իրավիճակի ինտեգրված, խորքային և համակարգված պատկերը:

Խնդիր 1. Վերհանել սոցիալ-տնտեսական կարգավիճակը, զբաղվածությունը և բնակարանային պայմանները

Հետազոտության տվյալները ցույց են տալիս, որ չորս թիրախ խմբերի սոցիալ-տնտեսական իրավիճակը բնութագրվում է խիստ անհավասարությամբ:

Արցախից տեղահանված կանանց խումբը գտնվում է ամենածանր դրության մեջ. նրանց մեծ մասն ապրում է ժամանակավոր, վարձակալած կամ անբարենպաստ պայմաններով բնակարաններում, ունեն անկայուն եկամուտներ, և նրանց մեծամասնությունը գնահատել է, որ վերջին երեք տարիների համեմատ իր տնտեսական վիճակը վատացել է: Տրանս կանանց և սեքս աշխատողների խմբում տնտեսական խոցելիությունն աճում է հասարակական մեկուսացման, խարանի ու ստիգմատիզացիայի հետևանքով: Աշխատաշուկան նրանց համար փակ է կամ չվստահելու, կամ խտրական վերաբերմունքի պատճառով, ինչը հանգեցնում է ցածր եկամուտների և տնտեսական անկայունության: Սեռական բռնություն վերապրած կանանց խմբի մոտ նկատվում է հարաբերական վերականգնում՝ արձանագրելով տնտեսական վիճակի աճ վերջին տարիների համեմատ, ինչն էլ կապվում է աջակցման ծառայությունների և ծրագրերի առկայության հետ: Իրավապաշտպան կանայք ունեն համեմատաբար կայուն սոցիալ-տնտեսական դինամիկա, բայց կայունության վրա այնուամենայնիվ ազդում են ֆինանսավորման անկայունության և մասնագիտական այրման գործոններ:

Ընդհանուր պատկերում սոցիալ-տնտեսական իրավիճակը խարսխված է խոցելիության տեսակի վրա՝ կառուցվածքային խոցելիություն (տեղահանված կանայք), մարգինալացման վրա հիմնված խոցելիություն (տրանս կանայք և սեքս աշխատողներ), վերականգնման դինամիկա (սեռական բռնություն վերապրած կանայք), մասնագիտական ռիսկեր (իրավապաշտպան կանայք): Սա վկայում է, որ խմբերի տնտեսական վիճակը պայմանավորված է ոչ միայն անձնական, այլ նաև համակարգային գործոններով:

Խնդիր 2. Դիտարկել ինքնագնահատականի, ինքնընկալման և հոգեսոցիալական վիճակի առանձնահատկությունները

Չորս խմբերի հոգեսոցիալական վիճակը զգալիորեն տարբեր է:

Տեղահանված կանանց խումբում նկատվել է ամենացածր հոգեկան առողջության սուբյեկտիվ գնահատումը: Պատերազմը, կորուստները, բնակչության տեղաշարժը և սոցիալական կապերի քայքայումը հանգեցրել են հոգեկան ծանրաբեռնվածության և ապագայի նկատմամբ անորոշության: Տրանս կանանց և սեքս աշխատողների խմբում հոգեկան վիճակը պայմանավորված է հասարակության մարգինալացնող վերաբերմունքով, հարցվածների զգալի մասը հոգեսոցիալական վիճակը նկարագրել է որպես վատ: Սեռական բռնություն վերապրած կանանց խումբը, չնայած տրավմայի փորձառությանը, ցուցաբերում է վերականգնողական միտում, քանի որ հոգեկան առողջության գնահատականը մոտ է միջինին, իսկ վերջին տարիներին վիճակի բարելավում են նշել զգալի թվով կանայք: Իրավապաշտպան կանանց խմբում նկատվում է հոգնածություն և հանրային գործընթացներից հեռանալու միտում, սակայն հոգեկան առողջության մակարդակը համեմատաբար կայուն է:

Ընդհանուր միտում այն է, որ խոցելիության մեխանիզմները հոգեկան առողջության վրա ազդում են տարբեր շերտերով՝ արտաքին ճնշում և ստիգմատիզացիա, տրավմա և սոցիալական վերաինտեգրում, կորուստ և գոյատևում, ինչպես նաև մասնագիտական ծանրաբեռնվածություն:

Խնդիր 3. Ինքնադրսևորման, մասնակցային ներուժի և կարողությունների զարգացման հնարավորությունների վերլուծություն

Ինքնադրսևորման և մասնակցային ներուժի դաշտում խմբերի միջև նույնպես նկատվում են էական տարբերություններ: Իրավապաշտպան կանանց խմբի համար ինքնադրսևորման հիմնական հարթակներն են աշխատանքը, իրավապաշտպան գործունեությունը և մասնագիտական ինքնաիրացումը: Սեռական բռնություն վերապրած կանանց խմբում ինքնադրսևորման գլխավոր ռեսուրսներն են կրթությունը, աշխատանքային ինտեգրումը և հոգեկան առողջության վերականգնումը: Նրանց մոտ առկա է ինքնակրթության և զարգացման բարձր մոտիվացիա՝ պայմանով, որ ապահովված է անվտանգ միջավայրը: Տեղահանված կանանց խմբում առաջնահերթ են կենսապահովման հիմնարար գործոնները՝ կայուն աշխատանք, բնակարանային անվտանգություն, երեխաների բարեկեցություն: Քաղաքացիական և սոցիալական մասնակցությունը դառնում է երկրորդական մինչև առաջնային խնդիրների լուծումը: Տրանս կանանց և սեքս աշխատողների խմբում ինքնադրսևորման սահմանափակումների առանցքում սոցիալական ընդունվածությունն է: Հասարակության հայեցակարգային խարանավորումը սահմանափակում է ոչ միայն մասնագիտական, այլ նաև հասարակական ու քաղաքական մասնակցությունը:

Կրկին խմբային դինամիկային բնորոշ ընդհանուր հետևությունը այն է, որ մասնակցային ներուժը նվազում է այնտեղ, որտեղ պիտակավորման, բռնության կամ սոցիալական մեկուսացման մակարդակը բարձր է:

Խնդիր 4. Սոցիալական վստահության մակարդակների ուսումնասիրություն պետական մարմինների, իրավապահ համակարգի և ՀԿ-ների նկատմամբ

Վստահության վեկտորը բոլոր խմբերում ունի նույն կառուցվածքը՝ ամենացածր վստահություն՝ պետական և իրավապահ համակարգերի հանդեպ և ամենաբարձր՝ հասարակական կազմակերպությունների ու ոչ ֆորմալ ցանցերի նկատմամբ: Ընդհանուր վստահության մակարդակի ցուցանիշները ըստ թիրախ խմբերի կարելի է բնութագրել հետևյալ կերպ՝ տրանս կանանց և սեքս աշխատողների խմբում և տեղահանված կանանց խմբում վստահությունը ցածր է՝ պայմանավորված օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով, սեռական բռնության խմբում վստահության մակարդակը՝ միջին, իսկ իրավապաշտպան կանանց խմբում վստահությունը, թեև համեմատական կարգով բարձրին ամենամոտն է, սակայն այնուամենայնիվ նկատելի է հիասթափության միտում: Իրավապահ համակարգին դիմելու պատրաստակամությունը բոլոր խմբերում գրեթե բացակայում է, ինչը վկայում է այս թիրախ խմբերի կողմից ինստիտուցիոնալ վստահության իսպառ բացակայության մասին:

Խնդիր 5. Խտրականության փորձառությունների ուսումնասիրություն տարբեր հիմքերով

Խտրականության վերաբերյալ տվյալներն ընդգծում են խոցելիության կառուցվածքային բաշխումը: Տրանս կանանց և սեքս աշխատողների խումբը ամենախոցելին է խտրականության հանդեպ: Խտրականությունը հիմնվում է տարբեր հանգամանքների ու պատճառահետևանքային կապերի վրա՝ սեռական կողմնորոշում, գենդերային ինքնություն, արտաքին տեսք, զբաղմունք, և այլն: Սեռական բռնություն վերապրած կանանց խմբում զգալի թվով հարցվածներ ենթարկվել են խտրականության ընտանիքի կամ համայնքի կողմից՝ զոհին մեղադրելու տրամաբանության շրջանակում: Տեղահանված կանանց խմբի մոտ վերապրած խտրականության դեպքերը կապված են տեղահանված լինելու, օտարվածության և աշխատանքի շուկայում դեռևս ավելի ցածր ներգրավվածությամբ: Իսկ իրավապաշտպան կանանց խմբում խտրականության դրսևորումները բխել են այնպիսի գործողություններից, ինչպիսիք են կարծիք արտահայտելը, իրավապաշտպան գործունեություն իրականացնելը կամ ֆեմինիստական դիրքորոշում հայտնելը:

Խտրականության դեմ պայքարի վարքագծային վերլուծությունը ցույց է տալիս, որ բոլոր խմբերում ոստիկանություն դիմելը գրեթե բացակայում է, իսկ ՀԿ–ներին դիմում են հիմնականում տրանս կանայք ու սեքս աշխատեղները և սեռական բռնություն վերապրած կանայք: Խտրականության դեպքերի կանխարգելման

ուղղությամբ ամենաշատ անգործություն ցուցաբերող խումբը տեղահանված կանայք են, ինչը կարող է պայմանավորված լինել տվյալ իրավիճակում սոցիալական անօգնականությամբ և ինստիտուցիոնալ մերժվածությամբ:

Խնդիր 6. Ապագայի պատկերացումների ուսումնասիրություն՝ անձնական և հանրային զարգացման տեսանկյունից

Չնայած խոցելիությունների տարբեր մակարդակներին՝ խմբերի մեծ մասը ապագային նայում է լավատեսորեն: Սեռական բռնություն վերապրած և տեղահանված կանայք առավել լավատեսական են՝ ապաքինման և վերականգնման ակնկալիքով: Իրավապաշտպան կանանց շրջանում լավատեսությունը համեմատաբար ցածր է՝ պայմանավորված հանրային հիասթափությամբ: Իսկ տրանս կանանց և սեքս աշխատողների արտահայտած լավատեսությունը առ ապագա կապված է ոչ թե տնտեսական, այլ սոցիալական ընդունվածության, արժանապատվության և ազատության հասնելու ակնկալիքներով: Ապագայի լավատեսության գրավական հանդիսացող գործոնները ընդհանուր խմբային դինամիկայում կարելի է բնութագրել հետևյալ նպատակներով՝ ֆինանսական կայունություն, առողջություն, ներքին խաղաղություն և արժանապատվության ապահովում:

Առաջարկություններ

Հետազոտության արդյունքում դուրս բերված տվյալների, դրանց վերլուծության ու ընդհանուր միտումների առանձնացման հիման վրա ձևակերպված առաջարկությունները ներառում են երկու մակարդակ: (1) Ընդհանուր ռազմավարական փոփոխությունների շրջանակ, որը առաջարկվում է որպես հնարավոր սցենար պետական մարմիններին ու քաղաքականություն մշակողներին, ծրագրեր իրականացնողներին և ՔՀԿ-ներին (քաղաքացիական հասարակության կազմակերպությունները)՝ փոխհատողական մոտեցմամբ անդրադառնալու համար խոցելիության համակարգային արմատներին: (2) Առանձնահատուկ առաջարկություններ յուրաքանչյուր խոցելի խմբի համար՝ հաշվի առնելով նրանց խմբին բնորոշ խտրականության առանձնահատկությունները, խոցելիության պրոֆիլը և վերականգնողական ռեսուրսները:

Ընդհանուր առաջարկություններ բոլոր խմբերի համար

- Սահմանել պետական քաղաքականության մակարդակում խոցելի խմբերի պաշտպանությանը միտված նպատակային ծրագրեր՝ ներառյալ բնակարանային, տնտեսական, հոգեբանական և իրավական աջակցության ուղղություններով:
- Բարելավել հակախտրական օրենսդրությունը՝ ներառելով գենդերային ինքնության, սեռական կողմնորոշման, տեղահանման և սեռական բռնության հիմքով խտրականության արգելքները:
- Ներդնել թիրախային սոցիալական պաշտպանության մեխանիզմներ՝ մշակելով հատուկ աջակցման փաթեթներ՝ ըստ խմբի կարիքների:
- Իրազեկման և հանրային կրթության միջոցով նվազեցնել հասարակական խարանավորումը՝ կենտրոնանալով մարդու իրավունքների հանդեպ հանդուրժողականության բարձրացման վրա:
- Իրավապահ և հանրային ծառայությունների ոլորտում շարունակել գենդերային զգայունության բարձրացմանն ուղղված գործողությունները՝ վերապատրաստումների, վերահսկողական մեխանիզմների և հանրային հաշվետվողականության միջոցով:

Կին իրավապաշտպաններ

- Վերանայել առկա պաշտպանության արտակարգ արձագանքման համակարգը՝ համալրելով կամ բարելավելով սպառնալիքների դեպքում օպերատիվ արձագանքման մեխանիզմները:
- Թարմացնել ոստիկանության և հանրային ծառայությունների վերապատրաստման բովանդակությունը՝ ներառելով խաղաղ ակտիվիզմի, մարդու իրավունքների և գենդերային հավասարության սկզբունքները:

- Առաջարկել հոգեկան առողջության աջակցման մոդելներ՝ մասնագիտական այրման կանխարգելման և աշխատավայրում հոգեբանական կայունության պահպանման նպատակով:
- Աջակցել հանրային ճանաչման հարթակների ստեղծմանը՝ նպաստելով կին իրավապաշտպանների աշխատանքի արժևորումը:

Արցախից տեղահանված կանայք

- Աջակցել աշխատանքի վերաինտեգրմանը և ձեռներեցության խթանմանը՝ համատեղելով վերապատրաստում և փոքր բիզնեսի աջակցություն:
- Իրականացնել հոգեբանական աջակցության ցանցային ծրագրեր՝ տեղայնացված սոցիալական աշխատողների և շարժական ծառայությունների ձևով:
- Տարածել հասանելի տեղեկատվություն ծառայությունների, աջակցության և իրավունքների մասին՝ պարզեցված ձևաչափով:

Սեռական բռնություն վերապրած կանայք

- Խրախուսել համալիր աջակցության մոդելները՝ իրավական օգնություն, բժշկական օգնություն և երկարաժամկետ հոգեթերապիա միավորված մեկ համակարգում (մեկ պատուհանի սկզբունք):
- Ընդլայնել ապաստարանների և անցումային բնակարանի հասանելիությունը՝ ներառելով նաև երեխաների հետ կացության հնարավորությունը:
- Ներգրավել սեռական բռնություն վերապրած կանանց վերականգնման խմբերում՝ ներառելով կրթական և տնտեսական ներուժի զարգացման բաղադրիչներ:
- Շարունակել հանրության իրազեկումը բռնության դեմ պայքարի նոր նարատիվով՝ կենտրոնանալով մեղավորի պատասխանատվության վրա, այլ ոչ զոհի վարքի ու զոհին մեղադրելու:

Տրանս կանայք և սեքս աշխատողներ

- Աջակցել անվտանգ տարածքների և համայնքային կենտրոնների ստեղծմանը կամ զարգացմանը, որտեղ ԼԳԲՏՔ+ կարող են ստանալ առողջապահական, իրավաբանական և հոգեբանական աջակցություն:
- Համագործակցել ոստիկանության հետ՝ վերափոխելով ծառայողական պրակտիկան տրանս և սեքս աշխատող անձանց նկատմամբ՝ վստահելի միջավայրի ձևավորմամբ:
- Աջակցել հանրային նարատիվի փոփոխությանը՝ խթանելով տեսանելիություն, արվեստի ու մշակութային հարթակներ և արժանապատվության վերականգնում:

Այս ընդհանրական և հատուկ քայլերը միտված են վերափոխելու այն առկա կառուցվածքային գործոնները, որոնք նպաստում են խտրականության դրսևորումների արմատավորմանը Հայաստանում: Ներկայացված առաջարկությունները պահանջում են լայն համագործակցություն պետական, հասարակական և մասնավոր հատվածների միջև՝ մարդակենտրոն և փոխհատական քաղաքականության կիրառելու համար: Լիարժեք և խորքային փոփոխությունը չի կարող լինել ակնթարթային, բայց կոնկրետ և հետևողական միջամտությունները կարող են նշանակալիորեն թեթևացնել խոցելի խմբերի կյանքը և քայլ առ քայլ կառուցել ավելի ներառական ու հավասար հասարակություն, որտեղ ոչ ոք «չի մնում հետևում»:

Օգտագործված գրականություն

1. Ազգային վիճակագրական ծառայություն (ՀՀ ԱՎԾ), (2023). Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակը՝ ըստ խոցելի խմբերի. Երևան:
2. Եվրոպայի Խորհուրդ (2011). Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարի կոնվենցիա (Իստամբուլի կոնվենցիա).
3. Կանանց հիմնադրամ Հայաստան (2024). Խտրականության և սոցիալական ներառման վերլուծություն՝ խոցելի խմբերի շրջանում. Երևան:
4. Միավորված Ազգերի Կազմակերպություն (1948). Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր.
5. Միավորված Ազգերի Կազմակերպություն (1966). Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիր և Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագիր.
6. Միավորված Ազգերի Կազմակերպություն (1979). Կանանց դեմ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա (CEDAW).
7. Միավորված Ազգերի Կազմակերպություն (2015). Կայուն զարգացման նպատակներ. 2030 օրակարգ
8. Butler, J. (1990). Gender Trouble: Feminism and the Subversion of Identity. Routledge.
9. Corrigan, P. W., & Watson, A. C. (2002). Understanding the Impact of Stigma on People with Mental Illness. World Psychiatry, 1(1), 16–20.
10. Crenshaw, K. (1989). Demarginalizing the Intersection of Race and Sex: A Black Feminist Critique of Antidiscrimination Doctrine. University of Chicago Legal Forum, 1989(1), 139–167.
11. Fraser, N. (1995). From Redistribution to Recognition? Dilemmas of Justice in a "Post-Socialist" Age. New Left Review, 212.
12. Galtung, J. (1969). Violence, Peace, and Peace Research. Journal of Peace Research, 6(3), 167–191.
13. Honneth, A. (1995). The Struggle for Recognition: The Moral Grammar of Social Conflicts. Polity Press.
14. Maslow, A. (1943). A Theory of Human Motivation. Psychological Review, 50(4), 370–396.
15. Masten, A. S. (2001). Ordinary Magic: Resilience Processes in Development. American Psychologist, 56(3), 227–238.
16. Mead, G. H. (1934). Mind, Self, and Society. University of Chicago Press.
17. Rogers, C. (1959). A Theory of Therapy, Personality, and Interpersonal Relationships. In S. Koch (Ed.), Psychology: A Study of a Science.
18. Rosenberg, M. (1965). Society and the Adolescent Self-Image. Princeton University Press.
19. Sen, A. (1999). Development as Freedom. Oxford University Press.
20. UN Women (2022). Gender Equality and Women's Economic Empowerment in Armenia
21. UNDP (2023). Social Inclusion and Human Rights in Armenia: Vulnerable Groups under Stress. UNDP Armenia Report.

Norwegian
Helsinki Committee
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
ԿԱՆԱՆՑ
ՀԻՄՆԱԴՐԱՄ